ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ԱԼԻՔ»-Ի

# ԳՐԱԲԱՐԻ ԴԱՍԱԳԻՐՔ

ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ

ԿԱԶՄԵՑ՝
Մ. ԱԲԵՂԵԱՆ

Թեհրան
Տպարան «ԱԼԻՔ»
1956

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ «ԱԼԻՔ»-Ի

# ԳՐԱԲԱՐԻ

# ԴԱՍԱԳԻՐՔ

ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔ

ԿԱԶՄԵՑ՝
Մ. ԱԲԵՂԵԱՆ

Թեհրան
Տպարան «ԱԼԻՔ»
1956

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Դասագրքիս նիւթը համեմատ է Թեմական դպրոցների նոր ծրագրին։ Յօդուածները, բացի Ծննդեան հանրածանօթ օրհնութիւնից, ծրագրի մէջ գրուածներից են։ Քերականական կանոններից առնուած են, ինչպէս պահանջում է ծրագիրը, կանոնաւոր հոլովում և խոնարհում, մի քանի դերանունների հոլովում, բառերի շարադասութիւն ու համաձայնութիւն և պատահած նախդիրների գործածութիւն։ Բացի այդ՝ կարևոր է համարուած ամէն յօդուածի համար դնել առանձին բառացուցակ, որի մէջ ոչ միայն բառերի և դարձուածների բացատրութիւնը կը գտնի աշակերտը, այլ սկզբում նաև դեռ չսովորած ձևերի թարգմանութիւնը։ Ամբողջ նիւթն ըստ կարելւոյն այնպէս է դասաւորուած, որ աշակերտըն աստիճանաբար իւրացնի գրաբարին յատուկ ձևերը։

Մ. ԱԲԵՂԵԱՆ

## 1. ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԾՆՆԴԵԱՆ

Խորհո՛ւրդ մեծ և սքանչելի,
Որ յայսմ աւուր յայտնեցաւ.
Հովիւքն երգեն ընդ հրեշտակս,
Տան աւետիս աշխարհի։
Ծնա՛ւ նոր արքայ
Ի Բեթղեհէմ քաղաքի.
Որդի՛ք մարդկան, օրհնեցէ՛ք,
Զի վասն մեր մարմնացաւ։
Անբաւելին երկնի և երկրի
Ի խանձարուրս պատեցաւ,
Ոչ մեկնելով ի Հօրէ՝
Ի սուրբ այրին բազմեցաւ։

## 2. ՍԱՂՄՈՍ ՃԽԸ.

Օրհնեցէ՛ք զՏէր յերկնից,
օրհնեցէ՛ք զնա ի բարձանց։
Օրհնեցէք զնա, ամենա՛յն հրեշտակք նորա.
օրհնեցէ՛ք զնա, ամենա՛յն զօրութիւնք նորա։
Օրհնեցէք զնա, արեգա՛կն ի լուսի՛ն.
օրհնեցէ՛ք զնա, ամենա՛յն աստեղք և լոյս։
Օրհնեցէ՛ք զնա, երկինք երկնից
և ջուրք, որ ի վերոյ քան զերկինս։
Օրհնեցէ՛ք զանուն Տեառն,
զի նա ասաց, և եղեն. հրամայեաց, և հաստատեցան.
Կարգեաց զնոսա յաւիտեանս յաւիտենից,
Սահման եդ, և ոչ անցանեն։
Օրհնեցէ՛ք զՏէր յերկրէ,
վիշա՛պք և ամենայն խորք։

Հուր և կարկուտ, ձիւն և սառն,
հողմ և մրրիկ, որ առնէք զբան նորա.
Լերինք և ամենայն բլուրք,
ծառք պտղաբերք և ամենայն մայրք,
Գազանք և ամենայն անասունք,
սողունք և ամենայն թռչունք թեւաւորք,
Թագաւորք երկրի և զօրք իւրեանց,
իշխանք և ամենայն դատաւորք երկրի,
Երիտասարդք և կուսանք, ծերք և տղայք.
Օրհնեցէ՛ք զանուն Տեառն.
Բարձրացաւ անուն նորա միայն,
խոստովանութի՛ւն նմա յերկինս և յերկրի.
Բարձր առնէ Տէր զեղջիւր ժողովրդեան իւրոյ։
Օրհնութի՛ւն յամենայն սրբոց նորա, յորդւոցն Իսրայելի,
ժողովուրդ, որ մերձ է առ Տէր։

## 3. ԳԱԼՈՒՍՏ ՄՈԳՈՒՑՆ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ.

Եւ ի ծնանելն Յիսուսի ի Բեթղեհէմ Հրէաստանի յաւուրս Հերովդի արքայի՝ ահա մոգք յարեւելից եկին յԵրուսաղէմ և ասեն. «Ո՞ւր է որ ծնաւ արքայն Հրէից, զի տեսաք զաստղն նորա յարեւելս և եկաք երկիր պագանել նմա»։ Եւ իբրեւ լուաւ արքայ Հերովդէս՝ խռովեցաւ, և ամենայն Երուսաղէմ ընդ նմա։ Եւ ժողովեալ զամենայն զքահանայապետս և զդպիրս ժողովրդեանն՝ հարցանէր ի նոցանէ, թէ ո՞ւր ծնանիցի Քրիստոսն։ Եւ նոքա ասեն ցնա. «Ի Բեթղեհէմ Հրէաստանի. զի այսպէս գրեալ է ի ձեռն մարգարէին. Եւ դո՛ւ Բեթղեհէմ, երկիր Յուդայ, ոչինչ կրտսեր ես յիշխանս Յուդայ. ի քէն ելցէ ինձ իշխան, որ հովուեսցէ զժողովուրդ իմ զԻսրայէլ»։

## 4. ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆ ՄՈԳՈՒՑՆ.

Յայնժամ Հերովդէս գաղտ կոչեաց զմոգսն և ստուգեաց ի նոցանէ զժամանակ աստեղն երեւելոյ։ Եւ արձակեալ զնոսա ի



Բեթղեհէմ՝ ասէ. «Գնացէ՛ք, ստուգեցէ՛ք վասն մանկանն և յորժամ գտանիցէք, ազդ արասջիք ինձ, զի և ես եկեալ երկիր պագից նմա»։ Եւ նոքա իբրև լուան ի թագաւորէն, գնացին։ Եւ ահա աստղն, զոր տեսին յարեւելս, առաջնորդեաց նոցա, մինչև եկեալ եկաց ի վերայ, ուր էր մանուկն։ Իբրև տեսին զաստղն, խնդացին յոյժ ուրախութիւն մեծ։ Եւ իբրև մտին ի տուն, տեսին զմանուկն հանդերձ Մարեմաւ մարբն իւրով, և անկեալ երկիր պագանէին նմա. և բացեալ զգանձս իւրեանց՝ մատուցին նմա պատարագս ոսկի և կնդրուկ և զմուռս։ Եւ հրաման առեալ ի տեսլեան չդառնալ անդրէն առ Հերովդէս՝ ընդ այլ ճանապարհ գնացին յաշխարհն իւրեանց։

## 5. ՅԻՍՈՒՍ ՅԵԳԻՊՏՈՍ.

Եւ իբրև գնացին նոքա անտի, ահա հրեշտակ Տեառն երևէր ի տեսլեան Յովսեփու և ասէր. «Արի՛, ա՛ռ զմանուկդ և զմայր իւր և փախիր յԵգիպտոս, և անդ լինիջիր, յորժամ ասացից քեզ. քանզի ի խնդիր է Հերովդէս կորուսանել զմանուկդ»։ Եւ նա յարուցեալ ա՛ռ զմանուկն և զմայր իւր ի գիշերի և գնաց յԵգիպտոս, և անդ էր մինչև ցվախճան Հերովդի. զի լցցի ասացեալն ի Տեառնէ ի ձեռն մարգարէին, որ ասէ. «Յեգիպտոսէ կոչեցից զորդի իմ»։

## 6. ԿՈՏՈՐԱԾ ՄԱՆԿԱՆՑ ԲԵԹՂԵՀԵՄԻ.

Յայնժամ իբրև ետես Հերովդէս, թէ խաբեցաւ ի մոգուց անտի՝ բարկացաւ յոյժ և առաքեաց, կոտորեաց զամենայն մանկունսն, որ էին ի Բեթղեհէմ և յամենայն սահմանս նորա, յերկեմենից և ի խոնարհ՝ ըստ ժամանակին, զոր ստուգեաց ի մոգուցն։ Յայնժամ կատարեցաւ ասացեալն ի ձեռն Երեմիա մարգարէի, որ ասէ. «Ձայն գուժեաց ի Հռամայ, ողբումն և լալումն և աշխարհումն յոյժ. Հռաքէլ լայր զորդիս իւր և ոչ կամէր մխիթարիլ, զի ոչ էին»։

## 7· ՅԻՍՈՒՍ Ի ՆԱԶԱՐԷԹ.

Եւ ի վախճանելն Հերովդի՝ ահա հրեշտակ Տեառն ի տեսլեան երեւէր Յովսեփայ յԵգիպտոս և ասէր· «Արի՛, ա՛ռ զմանուկդ և զմայր իւր և գնա՛ յերկիրն Իսրայելի· զի մեռան՝ որ խնդրէին զանձն մանկանդ»։ Եւ նա յարուցեալ ա՛ռ զմանուկն և զմայր նորա և եկն յերկիրն Իսրայելի։ Եւ իբրև լուաւ, եթէ Արքեղայոս թագաւորեաց Հրէաստանի փոխանակ Հերովդի հօրն իւրոյ, երկեաւ երթալ անդր· և հրաման առեալ ի տեսլեան՝ գնաց ի կողմանս Գալիլիացւոց։ Եւ եկեալ բնակեցաւ ի քաղաքին, որ կոչէր Նազարէթ· զի լցցի բան մարգարէիցն, թէ Նազովրեցի կոչեսցի։

## 8· ՓԱՐԻՍԵՑԻՆ ԵՒ ՄԱՔՍԱՒՈՐՆ.

Արք երկու ելին ի տաճարն կալ յաղօթս, մին փարիսեցի և միւսն մաքսաւոր։ Փարիսեցին կայր մեկուսի և զայս առանձինն աղօթս մատուցանէր· «Աստուա՛ծ իմ, գոհանամ զքէն· զի ոչ եմ իբրև զայլս ի մարդկանէ, զյափշտակողս և զանիրաւս և զշունս, կամ իբրև զայս մաքսաւոր։ Այլ պահեմ երկիցս ի շաբաթու և տամ տասանորդս յամենայն ստացուածոց իմոց»։ Եւ մաքսաւորն կայր մեկուսի և ոչ կամէր և ոչ զաչսն ընդ երկինս ամբառնալ· այլ կոծէր զկուրծս իւր և ասէր· «Աստուա՛ծ, քաւեա՛ զիս զմեղաւորս»։ Ասեմ ձեզ, էջ սա արդարացեալ ի տուն իւր քան զնա· զի ամենայն, որ բարձրացուցանէ զանձն իւր, խոնարհեսցի, և որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի։

## 9· ՎԱՍՆ ԶԱՔԷՈՍԻ.

Եւ մտեալ շրջէր ընդ Երիքով։ Եւ ահա այր մի անուն կոչեցեալ Զաքէոս, և նա էր մաքսապետ, և ինքն մեծատուն։ Եւ խնդրէր տեսանել, թէ ո՛վ իցէ Յիսուս, և ոչ կարէր ի բազմութենէն, զի կարճ էր հասակաւ։ Եւ ընթացեալ յառաջս՝ ել ի ժանտաթզենին, զի տեսանիցէ զնա· քանզի ընդ այն իսկ անցանելոց էր։



Իբրև եկն ի տեղին՝ հայեցաւ ի վեր Յիսուս և ասէ ցնա· «Զաքէ՛, փութա՛, էջ այտի· զի այսօր ի տան քում արժան է ինձ ագանել»։ Փութացաւ և էջ և ընկալաւ զնա ուրախութեամբ։ Իբրև տեսին ամենեքին, տրտնջէին և ասէին, թէ առ առն մեղաւորի եմուտ լուծանել։ Եկն, եկաց Զաքէոս և ասէ ցՏէր· «Տէ՛ր, ահա զկէս ընչից իմոց տաց աղքատաց և եթէ զոք զրկեցի՝ հատուցից չորեքկին»։ Եւ ասէ ցնա Յիսուս· «Այսօր եղև փրկութիւն տանս այսմիկ, քանզի և սա որդի Աբրահամու է· զի եկն Որդի մարդոյ խնդրել և կեցուցանել զկորուսեալն»։

## 10· ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԵՐԻՑ ՄԱՆԿԱՆՑ.

Օրհնեա՜լ ես, Տէ՛ր Աստուած հարցն մերոց, գովեալ և փառաւորեալ է անուն քո յաւիտեանս· զի արդար ես յամենայնի, զոր ածեր ի վերայ մեր, և ամենայն գործք քո ճշմարիտ են, և ուղիղ են ճանապարհք քո, և ամենայն դատաստանք քո ճշմարտութիւն, և իրաւունս ճշմարտութեան արարեր ըստ ամենայնի, զոր արարեր մեզ և քաղաքին սրբոյ հարցն մերոց Երուսաղեմի։ Զի ճշմարտութեամբ և յիրաւի ածեր զայս ամենայն վասն մեղաց մերոց· զի մեղաք և անօրինեցաք յապստամբ լինելն ի քէն; և առաւել մեղաք յամենայնի, և պատուիրանաց քոց ո՛չ անսացաք, ո՛չ պահեցաք և ո՛չ արարաք, որպէս պատուիրեցեր մեզ, զի բարի լինիցի մեզ։ Եւ զամենայն, զոր ածեր ի վերայ մեր, և զամենայն, զոր արարեր մեզ՝ արդար դատաստանաւ արարեր։ Եւ մատնեցեր զմեզ ի ձեռս թշնամեաց մերոց անօրինաց, խոտաց և ապստամբողաց, և թագաւորի անիրաւի և չարի քան զամենայն երկիր։

Եւ արդ ոչ գոյ մեզ բանալ զբերանս մեր, զի ամօթ և նախատինք եղաք ծառայից քոց պաշտօնէից։ Այլ մի՛ մատներ զմեզ իսպառ վասն անուան քո, և մի՛ ցրեր զուխտ քո, և մի՛ ի բացէ առներ զողորմութիւնս քո ի մէնջ։ Մի՛ յամօթ առներ զմեզ, այլ արա՛ ընդ մեզ ըստ հեզութեան քում և ըստ բազում ողորմութեան քում։ Եւ փրկեա՛ զմեզ վասն սքանչելեաց քոց և տուր փառս անուան քում, Տէ՛ր։ Եւ յամօթ լիցին ամենեքեան, որք ցուցանեն չարիս ծառայից քոց, և ամաչեսցեն յամենայն բռնու-

թեանց իւրեանց, և զօրութիւն նոցա խորտակեսցի։ Եւ ծանիցեն, զի դու ես Տէր Աստուած միայն և փառաւորեալ ի վերայ ամենայն տիեզերաց։

### 11. ԱՌԱԿ ԱՅԳԻՈՅՆ.

Այր մի էր տանուտէր, որ տնկեաց այգի և ցանկով պատեաց զնա և փորեաց ի նմա հնձան և շինեաց աշտարակ. և ետ զնա մշակս և գնաց ի տար աշխարհ։ Իբրև մերձեցաւ ժամանակ պտղոյ, առաքեաց զծառայս իւր առ մշակսն՝ առնուլ զպտուղս նորա։ Եւ կալեալ մշակացն զծառայս նորա՝ զոմն տանջեցին, զոմն սպանին, զոմն քարկոծեցին։ Դարձեալ առաքեաց այլ ծառայս բազում քան զառաջինսն, և արարին նոցա նոյնպէս։ Յետոյ առաքեաց առ նոսա զորդի իւր և ասէ. «Թերևս ամաչեսցեն յորդւոյ աստի իմմէ»։ Իսկ մշակքն իբրև տեսին զորդին, ասեն ընդ միտս. «Սա՛ է ժառանգն. եկա՛յք, սպանցուք զսա և կալցուք զժառանգութիւն սորա»։ Եւ առեալ հանին զնա արտաքոյ քան զայգին և սպանին։ Արդ՝ յորժամ եկեսցէ տէր այգւոյն, զի՞նչ արասցէ մշակացն այնոցիկ։ Ասեն ցնա. «Զչարսն չարա կորուսցէ և զայգին տացէ այլոց մշակաց, որք տացեն նմա զպտուղս ի ժամու իւրեանց»։

### 12. ՎԱՍՆ ՏԱՍՆ ԿՈՒՍԱՆԱՑ.

Յայնժամ նմանեսցի արքայութիւն երկնից տասն կուսանաց, որոց առեալ զլապտերս իւրեանց՝ ելին ընդառաջ փեսայի և հարսին։ Հինգն ի նոցանէ յիմարք էին, և հինգն՝ իմաստունք։ Յիմարքն առին զլապտերսն և ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին։ Իսկ իմաստունքն առին ձէթ ամանովք ընդ լապտերս իւրեանց։ Եւ ի յամել փեսային՝ նիրհեցին ամենեքեան և ի քուն մտին։

Եւ ի մէջ գիշերի եղև բարբառ. «Ահա փեսայ գայ, արի՛ք ընդ առաջ նորա»։ Յայնժամ յարեան ամենայն կուսանքն և կազմեցին զլապտերս իւրեանց։ Ասեն յիմարքն ցիմաստունսն. «Տո՛ւք մեզ յիւղոյդ ձերմէ, զի ահա շիջանին լապտերքս մեր»։ Պատասխանի ետուն իմաստունքն և ասեն. «Գուցէ ոչ իցէ մեզ և ձեզ բաւական, այլ երթա՛յք ի վաճառականս և գնեսջիք ձեզ»։ Իբրև նոքա գնացին գնել, եկն փեսայն, և պատրաստքն մտին ընդ նմա ի հարսանիսն, և փակեցաւ դուռնն։ Յետոյ գան և այլ կուսանքն և ասեն. «Տէ՛ր, Տէ՛ր, բա՛ց մեզ»։ Նա պատասխանի ետ և ասէ. «Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ գիտեմ զձեզ։ Արթո՛ւն կացէք, զի ոչ գիտէք զօրն և ոչ զժամն»։



### 13. ՍԱՂՄՈՍ ԻԲ.

Տէր հովուեսցէ զիս, և ինձ ինչ ոչ պակասեսցէ։

Ի վայրի դալարւոջ և առ ջուրս հանգստեան սնոյց զիս. դարձոյց զանձն իմ առ իս. առաջնորդեաց ինձ ի ճանապարհս արդարութեան վասն անուան իւրոյ։

Թէպէտ և գնացից ես ի մէջ ստուերաց մահու, ոչ երկեայց ի չարէ. զի դու, Տէ՛ր, ընդ իս ես. ցուպ քո և գաւազան, նոքա մխիթարեսցեն զիս։

Պատրաստ արարեր առաջի իմ սեղան՝ ակնյանդիման նեղչաց իմոց. օծեր իւղով զգլուխ իմ. բաժակ քո՝ որպէս անապակ՝ արբեցոյց զիս։

Ողորմութիւն քո, Տէ՛ր, զհետ իմ եկեսցէ զամենայն աւուրս կենաց իմոց՝ բնակել ինձ ի տան Տեառն ընդ երկայն աւուրս։

### 14. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ.

Յաւուրսն յայնոսիկ գայ Յովհաննէս Մկրտիչ քարոզել յանապատին Հրէաստանի և ասել. «Ապաշխարեցէ՛ք, զի մերձեալ է արքայութիւն երկնից»։ Զի սա է, վասն որոյ ասացաւ ի ձեռն Եսայեայ մարգարէի, որ ասէ. «Ձայն բարբառոյ յանապատի, պատրաստ արարէ՛ք զճանապարհ Տեառն և ուղիղ արարէ՛ք զշաւիղս նորա»։ Եւ ինքն Յովհաննէս ունէր հանդերձ ի ստեոյ ուղտու, և գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր, և կերակուր նորա էր մարախ և մեղր վայրենի։ Յայնժամ ելանէին առ նա ամենայն Երուսաղէմացիք և ամենայն Հրէաստան և ամենայն կողմն Յորդանանու, և մկրտէին ի նմանէ ի Յորդանան գետ և խոստովան լինէին ըզմեղս իւրեանց։

Եւ տեսեալ զբազումս ի սադուկեցւոցն և ի փարիսեցւոց՝ եկեալս ի մկրտութիւն նորա՝ ասէ ցնոսա· «Ծնո՛ւնդք իժից, ո՞ եցոյց ձեզ փախչել ի բարկութենէն, որ գալոցն է։ Արարէ՛ք այսուհետև պտուղ արժանի ապաշխարութեան։ Եւ մի համարիցիք ասել յանձինս, թէ ունիմք մեք հայր զԱբրահամ· ասեմ ձեզ, զի կարող է Աստուած ի քարանցս յայսցանէ յարուցանել որդիս Աբրահամու։ Զի ահաւասիկ տապար առ արմին ծառոց դնի· ամենայն ծառ, որ ոչ առնիցէ պտուղ բարի, հատանի և ի հուր արկանի։ Ես մկրտեմ զձեզ ջրով յապաշխարութիւն, բայց որ զկնի իմ գայ՝ հզօրագոյն է քան զիս, և ես չեմ բաւական բառնալ զկօշիկս նորա· նա մկրտեսցէ զձեզ ի Հոգին սուրբ և ի հուր· որոյ հեծանոցն ի ձեռին իւրում, և սրբեսցէ զկալ իւր և ժողովեսցէ զցորեանն ի շտեմարանս իւր, և զյարդն այրեսցէ անշէջ հրով»։

## 15· ՄԿՐՏՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՍԻ·

Յայնժամ գայ Յիսուս ի Գալիլեէ ի Յորդանան առ Յովհաննէս՝ մկրտել ի նմանէ։ Եւ Յովհաննէս արգելու զնա և ասէ· «Ինձ պիտոյ է ի քէն մկրտել, և դո՞ւ առ իս գաս»։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա· «Թո՛յլ տուր այժմ, զի այսպէս վայել է մեզ լնուլ զամենայն արդարութիւն»։ Եւ ապա թոյլ ետ նմա։ Եւ իբրև մկրտեցաւ Յիսուս՝ ել վաղվաղակի ի ջրոյ անտի, և ահա բացան նմա երկինք, և ետես զՀոգին Աստուծոյ, զի իջանէր իբրև զաղաւնի և գայր ի վերայ նորա։ Եւ ահա ձայն յերկնից, որ ասէր։ «Դա՛ է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ»։

## 16· ՓՈՐՁՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՍԻ·

Յայնժամ վարեցաւ Յիսուս յանապատ ի Հոգւոյն՝ փորձել ի սատանայէ։ Եւ պահեալ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր, ապա քաղցեաւ։

Եւ մատուցեալ փորձիչն՝ ասէ ցնա· «Եթէ Որդի ես Աստուծոյ, ասա՛, զի քարինքս այսոքիկ հաց լինիցին»։ Նա պատասխանի ետ և ասէ· «Գրեալ է, թէ՝ Ոչ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ, որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ»։



Յայնժամ առեալ ածէ զնա սատանայ ի քաղաքն սուրբ և կացուցանէ զնա ի վերայ աշտարակի տաճարին և ասէ ցնա· «Եթէ Որդի ես Աստուծոյ, ա՛րկ զքեզ աստի ի վայր· զի գրեալ է, թէ՝ Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո, և ի վերայ ձեռաց բարձցեն զքեզ, զի մի՛ երբեք հարցես զքարի զոտն քո»։ Ասէ ցնա դարձեալ Յիսուս· «Գրեալ է, թէ՝ Ոչ փորձեսցես զՏէր Աստուած քո»։

Դարձեալ առնու, ածէ զնա սատանայ ի լեառն մի բարձր յոյժ և ցուցանէ նմա զամենայն թագաւորութիւնս աշխարհի և զփառս նոցա և ասէ ցնա· «Զայս ամենայն քեզ տաց, եթէ անկեալ երկիր պագանիցես ինձ»։ Յայնժամ ասէ ցնա Յիսուս· «Ե՛րթ յետս իմ, սատանա՛յ· զի գրեալ է՝ Տեառն Աստուծոյ քում երկիր պագցես և զնա միայն պաշտեսցես»։ Ապա եթող զնա սատանայ, և ահա հրեշտակք մատեան և պաշտէին զնա։

## 17· ՅԻՍՈՒՍ Ի ԳԱԼԻԼԻԱ·

Եւ իբրև լուաւ Յիսուս, եթէ Յովհաննէս մատնեցաւ, մեկնեցաւ, գնաց ի Գալիլիա։ Եւ թողեալ զՆազարէթ՝ եկն, բնակեցաւ ի Կափառնաում ի ծովեզերին, ի սահմանս Զաբուղոնի և Նեփթաղիմայ· զի լցցի բանն, որ ասացաւ ի ձեռն Եսայեայ մարգարէի· «Երկիր Զաբուղոնի և երկիր Նեփթաղիմայ, ճանապարհ ծովու յայնկոյս Յորդանանու, Գալիլիա հեթանոսաց, ժողովուրդ, որ նստէր ի խաւարի, ետես լոյս մեծ. և որոց նստէին յաշխարհին և ի ստուերս մահու, լոյս ծագեաց նոցա»։ Յայնմ հետէ սկսաւ քարոզել Յիսուս և ասել· «Ապաշխարեցէ՛ք, զի մերձեալ է արքայութիւն երկնից»։

Մինչդեռ գնայր Յիսուս ընդ եզր ծովուն Գալիլիացւոց, ետես երկուս եղբարս, զՍիմովն զկոչեցեալն Պետրոս և զԱնդրէաս եղբայր նորա, արկեալ ուռկան ի ծով, քանզի ձկնորսք էին։ Եւ ասէ ցնոսա· «Եկա՛յք զկնի իմ, և արարից զձեզ որսորդս մարդկան»։ Եւ նոցա թողեալ վաղվաղակի զգործիսն՝ գնացին զհետ նորա։ Եւ մատուցեալ անտի յառաջ՝ ետես այլ երկուս եղբարս, զՅակոբոս Զեբեդեայ և զՅովհաննէս զեղբայր նորա ի նաւի՝ Զեբեդեաւ հանդերձ հարբն իւրեանց, մինչ կազմէին զուռ-

կանս իւրեանց, և կոչեաց զնոսա։ Նոքա թողեալ վաղվաղակի զնաւն և զհայրն իւրեանց՝ գնացին զհետ նորա։

Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն կողմն Գալիլիացւոց, ուսուցանէր ի ժողովուրդս նոցա և քարոզէր զաւետարանն արքայութեան և բժշկէր զամենայն հիւանդութիւնս և զամենայն ախտս ի ժողովրդեանն։ Եւ ել լուր նորա ընդ ամենայն երկիրն Ասորւոց, և մատուցին առ նա զամենայն հիւանդս, որ նեղեալ էին ի պէս պէս ցաւս և ի տանջանս, և զդիւահարս և զլուսնոտս և զանդամալոյծս, և բժշկեաց զնոսա։ Եւ երթային զհետ նորա ժողովուրդք բազումք ի Գալիլէէ և ի Դեկապոլեայ և յԵրուսաղեմէ և ի Հրէաստանէ և յայնկոյս Յորդանանու, և բժշկեաց զնոսա։

## 18. ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻՆ.

Առն միոջ էին երկու որդիք։ Ասէ կրտսերն ի նոցանէ ցհայրն. «Հա՛յր, տո՛ւր ինձ բաժին, որ անկանի յընչիցդ»։ Եւ նա բաժանեաց նոցա զկեանսն։ Եւ յետ ոչ բազում աւուրց ժողովեալ զամենայն կրտսեր որդւոյն՝ գնաց յաշխարհ հեռի և անդ վատնեաց զինչս իւր, զի կեայր անառակութեամբ։ Եւ իբրև սպառեաց զամենայն, եղև սով սաստիկ յաշխարհին յայնմիկ, և սկսաւ ինքն չքաւորիլ։ Եւ գնացեալ յարեցաւ ի մի ոմն ի քաղաքացւոց աշխարհին այնորիկ. և յղեաց զնա յագարակ իւր՝ արածել խոզս։ Եւ ցանկայր լնուլ զորովայն իւր յեղջերէն, զոր խոզքն ուտէին. և ոչ ոք տայր նմա։ Եւ եկեալ ի միտս իւր՝ ասէ. «Քանի՜ վարձկանք իցեն ի տան հօր իմոյ հացալիցք, և ես աստ սովամահ կորնչիմ։ Յարուցեալ գնացից առ հայր իմ և ասացից ցնա. Հա՛յր, մեղայ յերկինս և առաջի քո, և ո՛չ եւս եմ արժանի կոչել որդի քո. արա՛ զիս իբրև զմի ի վարձկանաց քոց»։ Եւ յարուցեալ եկն առ հայր իւր։

Եւ մինչդեռ հեռագոյն էր, ետես զնա հայրն և գթացաւ. յարեաւ և ընթացաւ ընդ առաջ, անկաւ զպարանոցաւն նորա և համբուրեաց զնա։ Եւ ասէ ցնա որդին. «Հա՛յր, մեղայ յերկինս և առաջի քո, ո՛չ եւս եմ արժանի կոչել որդի քո»։ Ասէ հայրն ցծառայս իւր. «Վաղվաղակի հանէ՛ք զպատմուճանն առաջին և



ագուցէ՛ք նմա, և տո՛ւք զմատանին ի ձեռն նորա և կօշիկս յոտս նորա։ Եւ ածէ՛ք զեզն պարարակ, զենէ՛ք. կերիցո՛ւք և ուրա՛խ լիցուք։ Զի այս որդի իմ մեռեալ էր և եկեաց, կորուսեալ էր և գտաւ»։ Եւ սկսան ուրախ լինել։

Եւ էր երէց որդի նորա յագարակի. և մինչդեռ գայր և մերձ եղև ի տունն, լուաւ զձայն երգոց և պարուց։ Եւ կոչեցեալ առ ինքն զմի ի ծառայիցն՝ հարցանէր, թէ զի՞նչ իցէ այն։ Եւ նա ասէ ցնա. «Զի եղբայր քո եկեալ է, և եզեն հայր քո զեզն պարարակ, զի ողջամբ ընկալաւ զնա»։ Բարկացաւ և ոչ կամէր մտանել, և հայրն ելեալ արտաքս՝ աղաչէր զնա։ Պատասխանի ետ և ասէ ցհայրն. «Այս քանի՜ ամք են, զի ծառայեմ քեզ և երբեք զպատուիրանաւ քով ոչ անցի. ուլ մի երբեք ոչ ետուր ինձ, զի ուրախ եղէց ընդ բարեկամս իմ։ Յորժամ եկն որդիդ քո այդ, որ եկեր զկեանս քո ընդ պոռնիկս, զեներ դմա զեզն պարարակ»։ Եւ ասէ ցնա. «Որդեա՛կ, դու հանապազ ընդ իս ես, և ամենայն որ ինչ իմ է՝ քո է։ Այլ ուրախ լինել և խնդալ պարտ էր, զի եղբայր քո այս մեռեալ էր և եկեաց, կորուսեալ էր և գտաւ»։

## 19. ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՄՈՎՍԵՍԻ.

Օրհնեսցուք զՏէր, զի փառօք է փառաւորեալ. զերիվարս և զհեծեալս նոցա ընկէց ի ծով։

Օգնական ընդունելի իմ Տէր, և եղև ինձ փրկութիւն. սա է իմ Աստուած, և փառաւոր արարից զսա. Աստուած հօր իմոյ, և բարձր արարից զսա։

Տէր խորտակէ զպատերազմունս, Տէր անուն նորա։ Զկառս Փարաւոնի և զզօրութիւնս նորա ընկէց ի ծով, զընտիրս հեծելոց և զպառազէնս. ընկղմեցան ի Ծով Կարմիր։ Խորք ծածկեցին զնոսա, ընկլան յանդունդս իբրև զվէմ։

Աջ քո, Տէ՛ր, փառաւորեալ է զօրութեամբ. աջ քո, Տէ՛ր, խորտակեաց զթշնամին։ Եւ բազմութեամբ փառաց քոց մանրեցեր զհակառակորդս. առաքեցեր զբարկութիւն քո, և եկեր զնոսա իբրև զեղեգն։ Եւ հողմով սրտմտութեամբ քով պատառեցան ջուրք, պաղեցան իբրև զպարիսպ ջուրք, պաղեցան ալիք ի մէջ ծովուն։

Ասաց թշնամին. «Հալածեցից և հասից, բաժանեցից զաւարն և լցուցից ի նոցանէ զանձն իմ. սատակեցից սրով իմով, տիրեսցէ նոցա ձեռն իմ»: Առաքեցեր զհողմն քո, և ծածկեաց զնոսա ծով. ընկղմեցան իբրև զկապար ի ջուրս սաստիկս:

Ո՞վ իցէ նման քեզ յաստուածս, Տէ՛ր, և կամ ո՞վ նմանիցէ քեզ, փառաւորեա՛լդ ի սուրբս սքանչելի փառօք, որ առնես զնշանս:

Ձգեցեր զաջ քո, և եկուլ զնոսա երկիր: Առաջնորդեցեր արդարութեամբ ժողովրդեան քում այսմ, զոր փրկեցեր. մխիթարեցեր զօրութեամբ քով ի բանակետղ սրբութեան քո:

Լուան ազգք և բարկացան, և երկունք կալան զբնակիչս Քանանացւոց: Յայնժամ տագնապեցան դատաւորք Եդովմայ և իշխանք Մովաբացւոց, կալաւ զնոսա դողումն. հալեցան ամենայն բնակիչք Քանանացւոց:

Անկցի ի վերայ նոցա ահ և երկիւղ. մեծութեամբ բազկի քո քարասցին, մինչև անցցէ ժողովուրդ քո, Տէ՛ր. մինչև անցցէ ժողովուրդ քո այս, զոր ստացար:

Տարեալ տնկեսցես զնոսա ի լեառն ժառանգութեան քո, ի պատրաստութիւն բնակութեան քո, զոր արարեր, Տէ՛ր. սրբութիւն, Տէ՛ր, զոր պատրաստեցին ձեռք քո: Տէ՛ր թագաւոր յաւիտեան և յաւիտեանս և ևս:

## 20. ՔԱՐՈԶ ԼԵՐԻՆ.

Եւ տեսեալ զժողովուրդսն՝ ել ի լեառն. և իբրև նստաւ անդ, մատեան առ նա աշակերտքն նորա: Եւ բացեալ զբերան իւր՝ ուսուցանէր զնոսա և ասէր. «Երանի՛ աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից: Երանի՛ սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին: Երանի՛ հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր: Երանի՛ որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին: Երանի՛ ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն: Երանի՛ այնոցիկ, որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն: Երանի՛ խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին: Երանի՛ որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից: Երանի՛ է ձեզ, յորժամ նախատի-



ցեն զձեզ և հալածեսցեն և ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ վասն իմ: Ցնծացէ՛ք և ուրա՛խ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս. զի այսպէս հալածեցին զմարգարէսն, որ յառաջ քան զձեզ էին:

Դուք էք աղ երկրի. ապա թէ աղն անհամի, ի՞ւ յաղիցի. ոչ իմիք ազդիցէ այնուհետև, բայց եթէ ընկենուլ արտաքս և կոխան լինել ի մարդկանէ: Դուք էք լոյս աշխարհի. ոչ կարէ քաղաք թաքչել, որ ի վերայ լերին կայցէ: Եւ ոչ լուցանեն ճրագ և դնեն ընդ գրուանաւ, այլ ի վերայ աշտանակի, և լոյս տայ ամենեցուն, որք ի տանն իցեն: Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս և փառաւորեսցեն զհայր ձեր, որ յերկինս է:

Մի՛ համարիք, եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս. ոչ եկի լուծանել, այլ՝ լնուլ: Ամէն ասեմ ձեզ, մինչև անցցեն երկինք և երկիր. յովտ մի, որ նշանախեց մի է, ոչ անցցէ յօրինացն և ի մարգարէից, մինչև ամենայն եղիցի: Որ ոք լուծցէ մի ինչ ի պատուիրանացս յայսցանէ ի փոքունց և ուսուսցէ այնպէս զմարդիկ՝ փոքր կոչեսցի յարքայութեան երկնից. իսկ որ արասցէ և ուսուսցէ, նա մեծ կոչեսցի յարքայութեան երկնից: Բայց ասեմ ձեզ, զի եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր աւելի քան զդպրացն և զփարիսեցւոց, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից:

Լուարո՛ւք, զի ասացաւ առաջնոցն, թէ՝ Մի՛ սպանաներ, զի որ սպանանիցէ՝ պարտական լիցի դատաստանի: Այլ ես ասեմ ձեզ, եթէ Ամենայն որ բարկանայ եղբօր իւրում տարապարտուց՝ պարտաւոր լիցի դատաստանի. և որ ասիցէ ցեղբայր իւր յիմար՝ պարտաւոր լիցի ատենի, և որ ասիցէ ցեղբայր իւր մորոս՝ պարտաւոր լիցի ի գեհեն հրոյն: Եթէ մատուցանիցես զպատարագ քո ի վերայ սեղանոյ և անդ յիշեսցես, եթէ եղբայր քո ունի ինչ խէթ զքէն՝ թող զպատարագն քո առաջի սեղանոյն, և ե՛րթ, նախ հաշտեաց ընդ եղբօր քում և ապա եկեալ մատուսջիր զպատարագն քո: Լե՛ր իրաւախոհ ընդ ոսոխի քում վաղագոյն, մինչդեռ իցես ընդ նմա ի ճանապարհի. գուցէ մատնիցէ զքեզ ոսոխն դատաւորի, և դատաւորն՝ դահճի, և արկանիցիս ի բանտ: Ամէն ասեմ

քեզ, ոչ ելանիցես անտի, մինչև հատուցանիցես զյետին նաքարակիտն։

Դարձեալ լուարուք, զի ասացաւ առաջնոցն· Մի՛ երդնուցուս սուտ, բայց հատուսցես Տեառն զերդմունս քո։ Այլ ես ասեմ ձեզ· Ամենևին մի՛ երդնուլ, մի՛ յերկինս, զի աթոռ է Աստուծոյ, և մի՛ յերկիր, զի պատուանդան է ոտից նորա, և մի՛ յԵրուսաղէմ, զի քաղաք է մեծի արքայի։ Եւ մի՛ ի գլուխ քո երդնուցուս, զի ոչ կարես մազ մի սպիտակ առնել կամ թուխ։ Այլ եղիցի ձեր բան այոն՝ այո, և ոչն՝ ոչ· զի աւելին քան զայն ի չարէն է։

Լուարուք, զի ասացաւ· Ակն ընդական և ատամն ընդ ատաման։ Այլ ես ասեմ ձեզ· Մի՛ կալ հակառակ չարին· այլ եթէ ոք ածիցէ ապտակ յաջ ծնօտ քո, դարձո՛ նմա և զմիւսն։ Եւ որ կամիցի ոք դատել և առնուլ զշապիկս քո, թո՛ղ ի նա և զբաճկոն քո։ Եւ որ տարապարհակ վարիցէ զքեզ մղոն մի, ե՛րթ ընդ նմա և երկուս։ Որում խնդրէ ի քէն՝ տո՛ւր, և որ կամի փոխ առնուլ ի քէն՝ մի՛ դարձուցաներ զերեսս։

Լուարուք ապաքէն, զի ասացաւ· Սիրեսցես զընկեր քո և ատեսցես զթշնամին քո։ Այլ ես ասեմ ձեզ· Սիրեցէ՛ք զթշնամիս ձեր, օրհնեցէ՛ք զանիծիչս ձեր, բարի արարէ՛ք ատելեաց ձերոց և աղօթս՝ ի վերայ այնոցիկ, որ լլկենն զձեզ և հալածեն· զի եղիջիք որդիք հօր ձերոյ, որ յերկինս է· զի զարեգակն իւր ծագէ ի վերայ չարաց և բարեաց և ածէ անձրև ի վերայ արդարոց և մեղաւորաց։ Զի եթէ սիրիցէք զայնոսիկ, որ սիրենն զձեզ՝ զի՞նչ վարձք իցենք· ո՞չ ապաքէն և մաքսաւորք զնոյն գործեն։ Եւ եթէ տայցէք միայն ողջոյն բարեկամաց ձերոց, զի՞նչ աւելի առնէք· ո՞չ ապաքէն մաքսաւորք և մեղաւորք զնոյն գործեն։ Արդ՝ եղերո՛ւք դուք կատարեալք, որպէս և հայրն ձեր երկնաւոր կատարեալ է։

Զգոյշ լերո՛ւք ողորմութեան ձերում՝ մի՛ առնել առաջի մարդկան, որպէս թէ ի ցոյց ինչ նոցա· գուցէ և վարձս ոչ ընդունիցիք ի հօրէն ձերմէ, որ յերկինս է։ Այլ յորժամ առնիցես ողորմութիւն, մի՛ հարկաներ փող առաջի քո, որպէս կեղծաւորքն առնեն ի ժողովուրդս և ի հրապարակս, որպէս զի փառաւորեսցին ի մարդկանէ· ամէն ասեմ ձեզ, այն իսկ են վարձք



նոցա։ Այլ դու յորժամ ողորմութիւն առնիցես, մի՛ գիտասցէ ձախ քո՝ զինչ գործէ աջ քո· որպէսզի եղիցի ողորմութիւնն քո ի ծածուկ, և հայրն քո, որ տեսանէ ի ծածուկ, հատուսցէ քեզ յայտնապէս։

Եւ յորժամ յաղօթս կայցես, մի՛ լինիցիս որպէս կեղծաւորքն, զի սիրեն ի ժողովուրդս և յանկիւնս հրապարակաց կալ յաղօթս, որպէս զի երևեսցին մարդկան· ամէն ասեմ ձեզ, այն իսկ են վարձք նոցա։ Այլ դու յորժամ կայցես յաղօթս, մուտ ի սենեակ քո և փակեա՛ զդուրս քո և կաց յաղօթս առ հայր քո ի ծածուկ· և հայրն քո, որ տեսանէ ի ծածուկ, հատուսցէ քեզ յայտնապէս։ Եւ յորժամ կայցէք յաղօթս, մի՛ շատախօսք լինիք իբրև զհեթանոսս, զի համարին, եթէ ի բազում խօսից իւրեանց լսելի լինիցին։ Արդ մի՛ նմանիցիք նոցա· զի գիտէ հայրն ձեր՝ զինչ պիտոյ է ձեզ, մինչչև ձեր խնդրեալ ինչ իցէ ի նմանէ։ Եւ արդ՝ այսպէս կացէք դուք յաղօթս· Հա՛յր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո· եկեսցէ արքայութիւն քո· եղիցին կամք քո, որպէս յերկինս և յերկրի· զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր· և թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց· և մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէ· զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս· ամէն։ Զի եթէ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, թողցէ և ձեզ հայրն ձեր երկնաւոր զյանցանս ձեր։ Ապա թէ ոչ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, և ոչ հայրն ձեր թողցէ ձեզ զյանցանս ձեր։

Եւ յորժամ պահիցէք, մի՛ լինիք իբրև զկեղծաւորսն տրտմեալք, որ ապականեն զերեսս իւրեանց, որպէսզի երևեսցին մարդկան, թէ պահիցեն· ամէն ասեմ ձեզ, այն իսկ են վարձք նոցա։ Այլ դու յորժամ պահիցես, օ՛ծ զգլուխ քո և լուա՛ զերեսս քո, զի մի՛ երևեսցիս մարդկան իբրև զպահող, այլ հօրն քում ի ծածուկ· և հայրն քո, որ տեսանէ ի ծածուկ, հատուսցէ քեզ յայտնապէս,

Մի՛ գանձէք ձեզ գանձս յերկրի, ուր ցեց և ուտիճ ապականեն և ուր գողք ական հատանեն և գողանան։ Այլ գանձեցէք ձեզ գանձս յերկինս, ուր ոչ ցեց և ոչ ուտիճ ապականեն, և ոչ

գողք ական հատանեն և գողանան. զի ուր գանձք ձեր են, անդ և սիրտք ձեր եղիցին։

Ճրագ մարմնոյ ակն է. եթէ ակն քո առատ է, ամենայն մարմինդ լուսաւոր եղիցի։ Ապա եթէ ակն քո չար է, ամենայն մարմինդ խաւարին եղիցի. իսկ արդ՝ եթէ լոյսդ, որ ի քեզ է, խաւար է, խաւարն ո՞րչափ ևս։ Ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել. կամ զմին ատիցէ և զմիւսն սիրիցէ, կամ զմին մեծարիցէ և զմիւսն արհամարհիցէ. ոչ կարէք Աստուծոյ ծառայել և մամոնայի։ Վասն այդորիկ ասեմ ձեզ. մի՛ հոգայք վասն ոգւոց ձերոց՝ զի՛նչ ուտիցէք կամ զի՛նչ ըմպիցէք. և մի՛ վասն մարմնոց ձերոց, թէ զի՛նչ ագանիցիք. ո՞չ ապաքէն ոգի առաւել է քան զկերակուր, և մարմին՝ քան զհանդերձ։ Հայեցարո՛ւք ի թռչունս երկնից, զի ոչ վարեն և ոչ հնձեն և ոչ ժողովեն ի շտեմարանս, և Հայրն ձեր երկնաւոր կերակրէ զնոսա. ո՞չ ապաքէն դուք առաւել էք քան զնոսա։ Իսկ արդ՝ ո՞ ի ձէնջ առ հոգալ իւրում՝ յաւելուլ կարիցէ ի հասակ իւր կանգուն մի։ Եւ վասն հանդերձի զի՞ հոգայք. հայեցարո՛ւք ի շուշանն վայրենի՝ ո՛րպէս աճէ. ոչ ջանայ և ոչ նիւթէ։ Ասեմ ձեզ, զի և ոչ Սողոմոն յամենայն ի փառսն իւրում զգեցաւ իբրև զմի ի նոցանէ։ Իսկ եթէ զխոտն ի վայրի, որ այսօր է՛ և վաղիւն ի հնոց արկանի, Աստուած այնպէս զգեցուցանէ, ո՞րչափ ևս առաւել զձեզ, թերահաւա՛տք։ Մի՛ այսուհետև հոգայցէք և ասիցէք՝ զի՛նչ կերիցուք, կամ զի՛նչ արբցուք, կամ զի՛նչ զգեցցուք. զի զայդ ամենայն հեթանոսք խնդրեն. քանզի գիտէ Հայրն ձեր երկնաւոր, թէ պիտոյ է ձեզ այդ ամենայն։ Խնդրեցէք նախ զարքայութիւնն Աստուծոյ և զարդարութիւն նորա, և այդ ամենայն յաւելցի ձեզ։ Մի՛ այսուհետև հոգայցէք վասն վաղուի, զի վաղիւն վասն իւր հոգասցի. շատ է աւուրն չար իւր։

Մի՛ դատէք, զի մի՛ դատիցիք. զի որով դատաստանաւ դատէք՝ դատելոց էք. և որով չափով չափէք՝ չափեսցի ձեզ։ Զի՞ տեսանես զշիւղ յական եղբօր քո և ի քում ական զգերանդ ոչ տեսանես. կամ զիա՞րդ ասես ցեղբայր քո՝ թող հանից զշիւղդ յականէ քումմէ. և ահաւադիկ ի քում ականդ գերան կայ։ Կեղծաւո՛ր, հան նախ զգերանդ յականէ քումմէ և ապա հայեսցիս հանել զշիւղն յականէ եղբօր քո։



Մի՛ տայք զսրբութիւն շանց և մի՛ արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզաց, զի մի՛ առ ոտն կոխիցեն զնոսա և դարձեալ երգիծուցանիցեն զձեզ։

Խնդրեցէ՛ք, և տացի ձեզ. հայցեցէ՛ք և գտջիք. բաղխեցէ՛ք, և բացցի ձեզ. զի ամենայն, որ խնդրէ՝ առնու. և որ հայցէ՝ գտանէ. և որ բաղխէ՝ բացցի նմա։ Ո՞ իցէ ի ձէնջ մարդ, զոր խնդրիցէ որդի իւր հաց, միթէ քա՞ր տայցէ նմա. և կամ խնդրիցէ ձուկն, միթէ օ՞ձ տայցէ նմա։ Արդ՝ եթէ դուք, որ չարքդ էք, գիտէք պարգևս բարիս տալ որդւոց ձերոց, ո՞րչափ ևս առաւել Հայրն ձեր, որ յերկինս է, տացէ բարիս այնոցիկ, որ խնդրեն զնա։

Զամենայն, որ միանգամ կամիջիք, թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս և դուք արարէ՛ք նոցա. զի ա՛յն իսկ են օրէնքն և մարգարէք։

Մտէք ընդ նեղ դուռն. քանի՜ ընդարձակ է դուռնն, և համարձակ՝ ճանապարհն, որ տանի ի կորուստ, և բազումք են, որ մտանեն ընդ նա։ Քանի՜ անձուկ է դուռն, և նեղ՝ ճանապարհն, որ տանի ի կեանս, և սակաւք են, որ գտանեն զնա։

Զգոյշ լերուք ի սուտ մարգարէից, որ գան առ ձեզ հանդերձիւք ոչխարաց և ի ներքոյ են գայլք յափշտակողք։ Ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա. միթէ քաղիցե՞ն ի փշոց խաղող, կամ ի տատասկէ՝ թուզ։ Այսպէս ամենայն ծառ բարի՝ պտուղ բարի առնէ, և ծառ չար՝ պտուղ չար առնէ։ Ոչ կարէ ծառ բարի՝ պտուղ չար առնել, և ոչ ծառ չար՝ պտուղ բարի առնել։ Ամենայն ծառ, որ ոչ առնէ զպտուղ բարի, հատանի և ի հուր արկանի։ Ապա ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա։

Ոչ ամենայն, որ ասէ ցիս Տէր, Տէր՝ մտցէ յարքայութիւն երկնից, այլ որ առնէ զկամս Հօր իմոյ, որ յերկինս է։ Բազումք ասիցեն ցիս յաւուրն յայնմիկ. Տէր, Տէր, ո՞չ յանուն քո մարգարէացաք և յանուն քո դևս հանաք և յանուն քո զօրութիւնս բազումս արարաք։ Եւ յայնժամ ասացից ցնոսա, եթէ ոչ երբէք գիտէի զձեզ. ի բաց կացէք յինէն ամենեքեան, ոյք գործէիք զանօրէնութիւն։

Ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ և առնէ զնոսա, նմանեսցի առն իմաստնոյ, որ շինեաց զտուն իւր ի վերայ վիմի։

Իջին անձրեւք, և խաղացին գետք, շնչեցին հողմք և բաղխեցին զտունն, և ոչ կործանեցաւ. քանզի ի վերայ վիմի հաստատեալ էր։ Եւ ամենայն, որ լսէ զբանս իմ զայսոսիկ և ոչ առնէ զսոսա, նմանեսցի առն յիմարի, որ շինեաց զտուն իւր ի վերայ աւազոյ։ Իջին անձրեւք, յարեան գետք, շնչեցին հողմք, հարին զտունն, և անկաւ. և էր կործանումն նորա մեծ յոյժ»։

Եւ եղև իբրև կատարեաց Յիսուս զամենայն զբանս զայսոսիկ, զարմանային ժողովուրդքն ընդ վարդապետութիւն նորա. զի իբրև իշխանութեամբ ուսուցանէր, և ոչ որպէս դպիրքն նոցա։

## 21. ՎԱՍՆ ԹՈՂԼՈՅ ԶԲԻՒՐ ՔԱՆՔԱՐՆ.

Նմանեցաւ արքայութիւն երկնից առն թագաւորի, որ կամեցաւ համար առնուլ ի մէջ ծառայից իւրոց։ Եւ իբրև սկսաւ առնուլ, մատուցաւ առ նա պարտապան մի բիւր քանքարոյ։ Իբրև ոչ ունէր հատուցանել, հրամայեաց զնա վաճառել տէրն նորա՝ և զկին նորա և զորդիս և զամենայն, որ զինչ և ունիցի, և հատուցանել։ Եւ անկեալ ծառայն երկիր պագանէր նմա և ասէր. «Երկայնամի՛տ լեր առ իս, և զամենայն հատուցից քեզ»։ Գթացեալ տէր ծառային այնորիկ՝ արձակեաց զնա և զփոխն եթող նմա։

Եւ ելեալ ծառայն այն եգիտ զմի ի ծառայակցաց իւրոց, որ պարտէր նմա հարիւր դահեկան, և կալեալ զնա խեղդէր և ասէր. «Հատո՛ ինձ, զոր պարտիսդ»։ Արդ անկեալ ծառայակցին առ ոտս նորա՝ աղաչէր զնա և ասէր. «Երկայնամի՛տ լեր առ իս, և զամենայն հատուցից քեզ»։ Եւ նա ոչ կամէր. այլ չոգաւ, արկ զնա ի բանտ, մինչ հատուսցէ զպարտսն։

Իբրև տեսին ծառայակիցքն նորա՝ որ ինչ եղեն՝ տրտմեցա՛ն յոյժ և եկեալ ցուցին տեառն իւրեանց զամենայն, որ ինչ եղեն։ Յայնժամ կոչեաց զնա տէրն իւր և ասէ. «Ծառա՛յ չար, զամենայն զպարտսն թողի քեզ, վասն զի աղաչեցեր զիս։ Իսկ արդ ո՞չ էր պարտ և քեզ ողորմել ծառայակցին քում, որպէս և ես քեզ ողորմեցայ»։ Եւ բարկացեալ տէրն նորա՝ մատնեաց զնա դահճաց, մինչև հատուսցէ զամենայն զպարտսն։ Նոյնպէս և



Հայրն իմ, որ յերկինս է, արասցէ ձեզ, եթէ ոչ թողուցուք իւրաքանչիւր եղբօր իւրում ի սրտից ձերոց զյանցանս նոցա։

## 22. ՍԱՂՄՈՍ ԽԱ.

Որպէս փափագէ եղջերու յաղբերս ջուրց, այնպէս փափագէ անձն իմ առ քեզ, Աստուա՛ծ։

Ծարաւի է անձն իմ առ քեզ, Աստուա՛ծ հզօր և կենդանի. ե՞րբ եկից, երևեցայց երեսացդ Աստուծոյ։

Եղեն ինձ արտասուք իմ կերակուր ի տուէ և ի գիշերի, և այն, զի ասէին ցիս զօրհանապազ, թէ՝ Ո՞ւր է Աստուած քո։

Զայս որպէս յիշէի, տառապէր յիս անձն իմ. քաջալերէի, զի մտից ընդ յարկաւ սքանչելեաց տանն Աստուծոյ ի ձայն ցնծութեան և խոստովանութեան և ի ձայն բարեկենդանութեան։

Արդ ընդէ՞ր տրտում ես, ա՛նձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ Աստուած, խոստովանեա՛ նմա. փրկիչ երեսաց իմոց Աստուած է։

## 23. ՍԱՂՄՈՍ ՃԳ.

### Ի վերայ աշխարհագործ արարածոց

Օրհնեա՛, ա՛նձն իմ, զՏէր։ Տէ՛ր Աստուած իմ, մեծ եղեր յոյժ, խոստովանութիւն և մեծվայելչութիւն զգեցար։

Արկար զլոյս որպէս զօթոց, ձգեցեր զերկինս որպէս խորան և յարկար ի վերայ ջուրց զվերնայարկս նորա։

Ո՞ դնէ յամպս զգնացս իւր, և շրջի նա ի վերայ թևոց հողմոց։

Ո՞ արար զհրեշտակս իւր հոգիս, և զպաշտօնեայս իւր ի հուր կիզելոյ։

Հաստատեաց զերկիր ի վերայ հաստատութեան իւրոյ, զի մի՛ սասանեսցի յաւիտեան։

Խորք որպէս զգեստ վերարկու է նորա, ի վերայ լերանց կացցեն ջուրք։

Ի սաստէ քումմէ փախիցեն, և ի ձայնէ որոտալոյ քումմէ սարսիցեն։

Ելանեն, լեռնանան և իջանեն, դաշտանան ի տեղի, յոր հաստատեցեր զնոսա։

Սահման եդիր, և ոչ անցանեն և ոչ ևս դառնան ի ծածկել զերկիր։

Առաքեցեր զաղբիւրս ընդ ձորձորս, ի մէջ լերանց գնասցեն ջուրք՝ արբուցանել զամենայն գազանս վայրի. յագեսցին ցիռք ի ծարաւս իւրեանց։

Անդ թռչունք երկնից բոյնս դիցեն և ի միջոյ վիմաց տացեն զձայնս իւրեանց։

Արբուցանէ զլերինս ի շտեմարանաց իւրոց, ի պտղոյ գործոց իւրոց լցցի երկիր։

Բուսուցեր զխոտ անասնոց, զդալարի ի ծառայութիւն մարդկան. հաներ զհաց յերկրէ։

Գինի ուրախ առնէ, իւղ՝ զուարթ, և հաց հաստատէ զսիրտ մարդոյ։

Յագեսցին ծառքն տեառն և մայրքն Լիբանանու, զորս դու տնկեցեր։

Անդ թռչունք երկնից ձագս հանցեն, և բոյն արագլի ապաւէն ի նոցա։

Լերինք բարձունք են եղջերուաց, և վէմք՝ ապաւէն նապաստակաց։

Արարեր զլուսին վասն ժամանակի, արեգակն ծանեաւ ըզժամ մտանելոյ իւրոյ։

Արարեր զխաւար, և եղև գիշեր. ի նմա գնան ամենայն գազանք անտառի։

Կորիւնք առիւծուց մռնչեն և յափշտակեն և խնդրեն յԱստուծոյ զկերակուրս իւրեանց։

Ի ծագել արեւու ժողովին և ի մորիս իւրեանց դադարեն։

Ելանէ մարդ ի գործս իւր և ի վաստակս ձեռաց իւրոց մինչև յերեկոյ։

Որպէ՜ս զի մեծ են գործք քո, Տէ՛ր. զամենայն ինչ իմաստութեամբ արարեր, և լցաւ երկիր ստեղծուածովք քովք։

Այս ծով մեծ և անդորր. ի սմա զեռունք, որոց ոչ գոյ թիւ, գազանք մեծամեծք և մանունք։

Ի սմա և նաւք գնան, վիշապն, զոր ստեղծեր, խաղալ նովաւ։



Ամենեքեան քեզ սպասեն, և դու տաս նոցա կերակուր ի ժամու։

Տաս դու նոցա, և կերակրին. բանաս զձեռն քո և կերակրես զամենեսեան կամօք քովք։

Դարձուցանես զերեսս քո ի նոցանէ, և խռովին. հանես զոգի ի նոցանէ, պակասին և ի հող դառնան։

Առաքես զոգի քո և ստանաս զնոսա և նորոգես զերեսս երկրի։

Եղիցին փառք Տեառն յաւիտեան. Տէր ուրախ եղիցի յարարածս իւր։

Ո՞ հայի յերկիր և տայ դողալ սմա. մերձի ի լերինս, և ծխեսցին։

Օրհնեցից զՏէր ի կեանս իմ. սաղմոս ասացից Աստուծոյ իմոյ, մինչև ե՛մ ես։

Քաղցր եղիցի նմա օրհնութիւն իմ, և ես ուրախ եղէց ի Տէր։

Պակասեսցին մեղաւորք յերկրէ, և ամպարիշտք մի՛ ևս գտցին ի նմա։

Օրհնեա՛, ա՛նձն իմ, զՏէր։ Ալէլուիա։

## 24. ԱՌԱԿ ՍԵՐՄԱՆԱՀԱՆԻՆ.

Յաւուր յայնմիկ ելեալ Յիսուս ի տանէն՝ նստաւ առ ծովեզերն։ Եւ ժողովեցան առ նա ժողովուրդք բազումք, մինչև մտանել նմա ի նաւն և նստել. և ամենայն ժողովուրդն կայր առ ծովեզերբն։ Եւ խօսէր ընդ նոսա բազումս առակօք և ասէր. «Ահա ել սերմանահան սերմանել, և ի սերմանելն իւրում՝ էր որ անկաւ առ ճանապարհաւ, և եկն թռչուն երկնից և եկեր զնա։ Եւ այլն անկաւ յապառաժի, ուր ոչ գոյր հող բազում, և վաղվաղակի բուսաւ առ ի չգոյէ հիւթոյ երկրին. ի ծագել արեւու՝ տապացաւ, և զի ոչ գոյին արմատք՝ չորացաւ։ Եւ այլն անկաւ ի մէջ փշոց, և ելին փուշքն և հեղձուցին զնա։ Եւ այլն անկաւ յերկիր բարի և տայր պտուղ՝ էր որ հարիւրաւոր, և էր որ երեսնաւոր։ Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։

## 25· ՍԱՄԱՐԱՑԻՆ ՈՂՈՐՄԱԾ·

Եւ ահա յարեաւ ոմն օրինական, փորձէր զնա և ասէր· «Վարդապե՛տ, զի՞նչ գործեցից, զի զկեանսն յաւիտենականս ժառանգեցից»։ Եւ նա ասէ ցնա· «Յօրէնս զի՞նչ գրեալ է, ո՞րպէս ընթեռնուս»։ Նա պատասխանի ետ և ասէ· «Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, և յամենայն անձնէ քումմէ, և յամենայն զօրութենէ քումմէ, և յամենայն մտաց քոց, և զընկեր քո իբրև զանձն քո»։ Եւ ասէ ցնա· «Ուղիղ ետուր զպատասխանիդ· զայդ արա՛ և կեցցես»։ Նա իբրև կամեցաւ զանձն արդարացուցանել, ասէ ցՅիսուս· «Եւ ո՞վ է իմ ընկեր»։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ· «Այր մի իջանէր յԵրուսաղեմէ յԵրիքով և անկաւ ի ձեռս աւազակաց, որք մերկացուցին զնա և վէրս ի վերայ եդին, թողին կիսամահ և գնացին։ Դէպ եղև քահանայի միոջ իջանել ընդ նոյն ճանապարհ, և տեսեալ զնա զանց արար։ Նոյնպէս և Ղևտացի մի եկեալ ընդ նոյն տեղի, ետես և զանց արար։ Սամարացի ոմն ճանապարհորդեալ՝ եկն ընդ նոյն առ նովաւ և տեսեալ զնա գթացաւ։ Եւ մատուցեալ պատեաց զվէրս նորա՝ արկեալ ի վերայ ձէթ և գինի· և եդեալ ի վերայ գրաստու իւրոյ՝ ած զնա ի պանդոկ մի և դարմանեաց զնա։ Եւ ի վաղիւ անդր, իբրև ելանէր անտի, հանեալ ետ ցպանդոկապետն երկուս դահեկանս և ասէ· «Դարման տար դմա, և զոր ինչ ծախեսցես ի դա՝ ի միւս անգամ գալստեան իմում հատուցից քեզ»։ Արդ՝ ո՞ յերեցունց ի նոցանէ թուի քեզ մերձաւոր լեալ անկելոյն ի ձեռս աւազակացն»։ Եւ նա ասէ· «Որ արար զողորմութիւնն ի վերայ նորա»։ Ասէ ցնա Յիսուս· «Ե՛րթ և դու արա՛ նոյնպէս»։

## 26· ՎԱՍՆ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՑԱՒՈՑ·

Այլ իբրև էջ ի լեռնէ անտի, գնացին զկնի նորա ժողովուրդ բազումք։ Եւ ահա մատուցեալ բորոտ մի, երկիր պագանէր նմա և ասէր· «Տէ՛ր, եթէ կամիս, կարող ես զիս սրբել»։ Ձգեաց զձեռն իւր և հասոյց ի նա Յիսուս և ասէ· «Կամիմ, սրբեա՛ց»։ Եւ վաղվաղակի սրբեցաւ ի նմանէ բորոտութիւնն։ Եւ ասէ ցնա



Յիսուս· «Զգոյշ լե՛ր, մի՛ ումեք ասիցես· այլ ե՛րթ, ցո՛յց զանձն քո քահանային և մատո՛ զպատարագն, զոր հրամայեաց Մովսէս ի վկայութիւն նոցա»։

Եւ մտեալ ի Կափառնաում, մատեաւ առ նա հարիւրապետ մի, աղաչէր զնա և ասէր· «Տէ՛ր, մանուկ իմ անկեալ կայ ի տան անդամալոյծ՝ չարաչար տանջեալ»։ Ասէ ցնա Յիսուս· «Ես եկից և բժշկեցից զնա»։ Պատասխանի ետ հարիւրապետն և ասէ· «Տէ՛ր, չեմ բաւական, եթէ ընդ յարկաւ իմով մտցես· այլ ասա՛ բանիւ, և բժշկեսցի մանուկն իմ։ Քանզի և ես այր մի եմ ընդ իշխանութեամբ, ունիմ ընդ ինև զինուորս, ասեմ սմա ե՛րթ, և երթայ, և այլում թէ՝ ե՛կ, և գայ, և ծառայի իմում թէ՝ արա՛ զայս, և առնէ»։ Իբրև լուաւ Յիսուս, զարմացաւ և ասէ ցայնոսիկ, որ զհետն երթային· «Ամէն ասեմ ձեզ և ոչ յԻսրայէլի այսպիսի հաւատս գտի երբէք։ Բայց ասեմ ձեզ, զի բազումք յարևելից և յարևմտից եկեսցեն և բազմեսցին ընդ Աբրահամու և ընդ Սահակայ և ընդ Յակովբու յարքայութեան երկնից, և որդիքն արքայութեան ելցեն ի խաւարն արտաքին· անդ եղիցի լալ և կրճել ատամանց»։ Եւ ասէ Յիսուս ցհարիւրապետն· «Ե՛րթ, և որպէս հաւատացեր՝ եղիցի քեզ»։ Եւ ողջացաւ մանուկն նորա յաւուր յայնմիկ։

Եւ եկեալ Յիսուս ի տուն Պետրոսի՝ ետես, զի զոքանչ նորա անկեալ դնէր տապացեալ։ Կալաւ զձեռանէ նորա, և եթող զնա ջերմն· յոտն եկաց և պաշտէր զնա։

Իբրև եղև երեկոյ, մատուցին առ նա դիւահարս բազումս, և եհան զայսսն բանիւ և զամենայն հիւանդսն բժշկեաց, զի լցցի բանն, որ ասացաւ ի ձեռն Եսայեայ մարգարէի· Նա զհիւանդութիւնս մեր վերացոյց և զցաւս մեր եբարձ։

Տեսեալ Յիսուսի ժողովուրդս բազումս զիւրև՝ հրամայեաց երթալ յայնկոյս։ Եւ մատուցեալ դպիր մի ասէ ցնա· «Վա՛րդապետ, եկից և ես զկնի քո, յոր վայր և երթիցես»։ Ասէ ցնա Յիսուս· «Աղուեսուց որջք գոն, և թռչնոց երկնից՝ բոյնք, այլ Որդւոյ մարդոյ ոչ գոյ, ուր դիցէ զգլուխ իւր»։ Եւ մի ոմն յաշակերտաց նորա ասէ ցնա· «Տ՛էր, տուր ինձ հրաման, զի երթայց, նախ թաղեցից զհայր իմ»։ Ասէ ցնա Յիսուս· «Ե՛կ զկնի և թո՛յլ տուր մեռելոցն՝ թաղել զմեռեալս իւրեանց»։

Եւ իբրեւ եմուտ ի նաւն, գնացին զկնի նորա աշակերտքն նորա։ Եւ ահա շարժումն մեծ եղեւ ի ծովուն, մինչ նաւին ծածկել յալեաց անտի, և ինքն ննջէր։ Եւ մատուցեալ աշակերտքն՝ յարուցին զնա և ասեն. «Տէ՛ր, փրկեա՛ զմեզ, զի կորնչիմք»։ Եւ ասէ ցնոսա. «Ընդէ՞ր վատասիրտք էք, սակաւահաւա՛տք»։ Յայնժամ յարուցեալ սաստեաց հողմոցն և ծովուն, և եղեւ խաղաղութիւն մեծ։ Եւ մարդիկն զարմացան և ասէին. «Ո՞րպիսի ոք իցէ սա, զի և հողմք և ծով հնազանդին սմա»։

Եւ իբրեւ անց յայնկոյս յերկիրն Գերգեսացւոց, պատահեցին նմա դիւահարք երկու, ելեալք ի գերեզմանացն, չարաչարք յոյժ, որպէս զի չէր հնար անցանել ումեք ընդ այն ճանապարհ։ Եւ ահա աղաղակեցին և ասեն. «Զի՞ կայ մեր և քո, Յիսո՛ւս, որդի՛ Աստուծոյ. եկիր տարաժամ տանջել զմեզ»։Եւ էր հեռագոյն ի նոցանէ երամակ մի խոզից արօտական։ Եւ դեքն աղաչէին զնա և ասէին. «Եթէ հանես զմեզ աստի, հրաման տուր մեզ երթալ յերամակ խոզիցն»։ Եւ ասէ ցնոսա. «Երթա՛յք»։ Եւ նոքա ելեալ գնացին յերամակն խոզից. և դիմեաց ամենայն երամակն ի դարէ անտի ի ծով, և մեռան ի ջուրսն։ Եւ խոզարածքն փախեան և երթեալ ի քաղաքն պատմեցին զամենայն և զիրս դիւահարացն։ Եւ ահա ամենայն քաղաքն ել ընդ առաջ Յիսուսի. իբրեւ տեսին զնա, աղաչեցին, զի գնասցէ ի սահմանաց նոցա։

## 27. ՎԱՍՆ ՎԱՐՁԿԱՆՈՒԹԵԱՆ ՄՇԱԿԱՑՆ.

Նման է արքայութիւն երկնից առն տանուտեառն, որ ել ընդ առաւօտս ի վարձու ունել մշակս յայգի իւր։ Եւ արկ վարձս մշակացն աւուրն դահեկան և առաքեաց զնոսա յայգի իւր։ Եւ ելեալ զերրորդ ժամու՝ ետես այլս, զի կային դատարկք ի հրապարակս։ Ասէ և ցնոսա. «Երթա՛յք և դուք յայգի իմ, և որ ինչ արժան իցէ՝ տաց ձեզ»։ Գնացին և նոքա։ Եւ դարձեալ ելեալ զվեց ժամու և զինն ժամու՝ արար նոյնպէս։ Եւ զմետասանեբորդ ժամու ելեալ՝ եգիտ այլս, զի կային դատարկք. ասէ և ցնոսա. «Ընդէ՞ր կայք աստ զօրս ցերեկ դատարկք»։ Ասեն ցնա.



«Զի ոչ ոք կալաւ զմեզ ի վարձու»։ Ասէ ցնոսա. «Երթա՛յք և դուք յայգին, և որ ինչ արժան է՝ առնուցուք»։

Եւ իբրեւ երեկոյ եղեւ, ասէ տէր այգւոյն ցգաւառապետ իւր. «Կոչեա՛ զմշակսն և տուր նոցա վարձս՝ սկսեալ ի յետնոցն մինչև ցառաջինսն»։ Իբրեւ եկին որք զմետասաներորդ ժամուն, առին մէն մի դահեկան։ Եկեալ և առաջինքն՝ համարէին, թէ աւելի առնուցուն, և առին մէն մի դահեկան և նոքա։ Իբրեւ առին, տրտնջէին զտանուտեառնէն և ասէին, թէ՝ «Դոքա յետինքդ մի ժամ գործեցին, և հաւասարակորդս մեզ արարեր զդոսա, որ զծանրութիւն աւուրն բարձաք և զտօթ»։ Նա պատասխանի ետ միում ի նոցանէ և ասէ. «Ընկե՛ր, չզրկեմ զքեզ, ո՞չ դահեկանի միոջ սակ արկեր ընդ իս։ Ա՛ռ զքոյդ և ե՛րթ։ Եթէ կամիմ յետնոցս տալ, որպէս և քեզ՝ եթէ չիցէ՞ ինձ իշխանութիւն յիմսս առնել զինչ և կամիմ. կամ թէ ակն քո չա՞ր է, զի ես առատ եմ»։ Այսպէս եղիցին յետինք առաջինք, և առաջինք՝ յետինք. զի բազումք են կոչեցեալք, և սակաւք են ընտրեալք։

## 28. ՍԱՂՄՈՍ Ը.

Տէ՛ր, Տէր մեր, զի՜ սքանչելի է անուն քո յամենայն երկրի, համբարձաւ մեծվայելչութիւն քո ի վերոյ քան զերկինս։

Ի բերանոյ մանկանց տղայոց և ստնդիեցաց հաստատեցեր զօրհնութիւն. վասն թշնամեաց քոց, Տէր, զի եղծցի թշնամին և հակառակորդն։

Տեսից զերկինս, զգործս մատանց քոց, զլուսին և զաստեղս, զորս դու հաստատեցեր։

Ո՞վ է մարդ, զի յիշես դու զնա, կամ որդի մարդոյ, թէ այց ինչ արասցես դու նմա։

Փոքր ինչ խոնարհ արարեր զնա քան զհրեշտակս քո, փառօք և պատուով պսակեցեր զնա։

Եւ կացուցեր զնա ի վերայ ամենայն ձեռակերտաց քոց. զամենայն ինչ հնազանդ արարեր ի ներքոյ ոտից նորա. զխաշն և զարջառ և զամենայն ինչ, ևս և զերէ վայրի, զթռչունս երկնից, զձկունս ծովու, որ շրջին ընդ շաւիղս ծովու։

Տէ՛ր, Տէ՛ր մեր, զի՜ սքանչելի է անուն քո յամենայն երկրի։

## 29. ԱՅԼ ԲԺՇԿՈՒԹԻՒՆՔ ՅԻՍՈՒՍԻ.

Եւ մտեալ ի նաւ՝ անց յայնկոյս և եկն ի քաղաք իւր։ Եւ ահա մատուցին առ նա անդամալոյծ մի, որ դնէր ի մահիճս։ Եւ տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա՝ ասէ ցանդամալոյծն. «Թողեալ լիցին քեզ մեղք քո»։ Եւ ահա ոմանք ի դպրացն ասեն ընդ միտս. «Հայհոյէ դա»։ Եւ ծանուցեալ Յիսուսի զխորհուրդս նոցա՝ ասէ ցնոսա. «Ընդէ՞ր խորհիք դուք չարիս ի սիրտս ձեր։ Զի՞նչ դիւրին է, ասել՝ Թողեալ լիցին քեզ մեղք քո, թէ՞ ասել՝ արի՛ և շրջեա՛ց։ Այլ զի գիտասջիք, եթէ իշխանութիւն ունի Որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս, (յայնժամ ասէ ցանդամալոյծն), արի՛, ա՛ռ զմահիճս քո և ե՛րթ ի տուն քո»։ Եւ յարուցեալ գնաց ի տուն իւր։ Իբրև տեսին ժողովուրդքն, զարմացան և փառաւոր առնէին զԱստուած, զտուիչն այնպիսի իշխանութեան մարդկան։

Եւ անցեալ ընդ այն Յիսուսի՝ ետես զայր մի, զի նստէր ի մաքսաւորութեան, Մատթէոս անուն, և ասէ ցնա. «Եկ զկնի իմ»։ Եւ յարուցեալ գնաց զկնի նորա։ Եւ եղև իբրև բազմեալ էր նա ի տանն, և ահա բազում մաքսաւորք և մեղաւորք եկեալ և բազմեալ էին ընդ Յիսուսի և ընդ աշակերտս նորա։ Իբրև տեսին փարիսեցիքն, ասեն ցաշակերտս նորա. «Ընդէ՞ր ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս ուտէ վարդապետն ձեր»։ Իսկ Յիսուս իբրև լուաւ, ասէ ցնոսա. «Ոչ է պիտոյ բժիշկ կարողաց, այլ հիւանդաց։ Երթա՛յք, ուսարո՛ւք զի՛նչ է՝ Զողորմութիւն կամիմ և ոչ զզոհ. զի ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս»։

Յայնժամ մատեան առ նա աշակերտքն Յովհաննու և ասեն. «Ընդէ՞ր մեք և փարիսեցիքն պահեմք յաճախ, և քո աշակերտքդ ո՛չ պահեն»։ Ասէ ցնոսա Յիսուս. «Միթէ մա՞րթ ինչ իցէ մանկանց առագաստի սուգ առնուլ, մինչ փեսայն ընդ նոսա իցէ. այլ եկեսցեն աւուրք, յորժամ բարձցի ի նոցանէ փեսայն, և ապա պահեսցեն։ Ոչ ոք արկանէ կապերտ անթափ ի վերայ հնացեալ ձորձոյ, զի առնու ելանէ զլրութիւն նորա ի հանդերձէն, և ևս չար պատառումն լինի։ Եւ ոչ արկանեն գինի նոր ի տիկս հինս, ապա թէ ոչ՝ տիկքն պատառին, և գինին հեղու, և տիկքն կորնչին. այլ արկանեն զգինի նոր ի տիկս նորս, և երկոքին պահին»։



Մինչդեռ նա զայս խօսէր ընդ նոսա, ահա իշխան մի մատուցեալ երկիր պագանէր նմա և ասէր. «Դուստր իմ արդ ևս վախճանեցաւ. այլ եկեալ դիցես զձեռն քո ի վերայ նորա, և կեցցէ»։ Յարեաւ Յիսուս և գնաց զկնի նորա աշակերտօքն հանդերձ։ Իբրև եկն Յիսուս ի տուն իշխանին և ետես զփողարսն և ամբոխ յոյժ, ասէ ցնոսա. «Ի բա՛ց գնացէք. զի ոչ եթէ մեռեալ է աղջիկդ, այլ ննջէ»։ Եւ ծաղր առնէին զնա։ Եւ իբրև ել ամբոխն ի բաց՝ եմուտ, կալաւ զձեռանէ նորա, և յարեաւ աղջիկն։ Եւ ել համբաւս այս ընդ ամենայն երկիրն ընդ այն։

Եւ մինչդեռ անցանէր ընդ այն Յիսուս, զհետ եղեն նորա կոյրք երկու, աղաղակէին և ասէին. «Ողորմեա՛ց մեզ, որդի՛ Դաւթի»։ Եւ իբրև եկն ի տուն, մատեան առ նա կոյրքն. և ասէ ցնոսա Յիսուս. «Հաւատա՞յք, եթէ կարող եմ առնել ձեզ զայդ»։ Ասեն ցնա. «Այո՛, Տէ՛ր»։ Յայնժամ մերձեցաւ յաչս նոցա և ասէ. «Ըստ հաւատոց ձերոց եղիցի ձեզ»։ Եւ բացան աչք նոցա. և սաստեաց նոցա Յիսուս և ասէ. «Զգոյշ կացէք, մի՛ ոք գիտասցէ»։ Եւ նոքա ելեալ համբաւեցին զնա ընդ ամենայն երկիրն ընդ այն։

Եւ յելանելն նոցա արտաքս՝ ահա մատուցին առ նա այր մի համր դիւահար։ Եւ յելանել դիւին՝ խօսեցաւ համրն, և զարմացան ժողովուրդքն և ասեն, թէ՝ «Եւ ոչ երբեք երևեցաւ այսպիսի ինչ յԻսրայէլի»։ Իսկ փարիսեցիքն ասէին, թէ՝ «Իշխանաւն դիւաց հանէ դա զդևս»։

Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն քաղաքս և ընդ գեօղս, ուսուցանէր ի ժողովուրդս նոցա և քարոզէր զաւետարանն արքայութեան, և բժշկէր զամենայն ախտս և զամենայն հիւանդութիւնս ի ժողովրդեանն։ Եւ տեսեալ զժողովուրդսն՝ գթացաւ ի նոսա, զի էին աշխատեալք և ցրուեալք իբրև զոչխարս, որոց ոչ իցէ հովիւ։ Յայնժամ ասէ ցաշակերտսն իւր. «Հունձք բազում են, և մշակք սակաւ։ Արդ աղաչեցէ՛ք զՏէր հնձոց, զի հանցէ մշակս ի հունձս իւր»։

## 30· ՎԱՍՆ ԱՌԱՔԵԼՈՑՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ·

Եւ կոչեցեալ առ ինքն զերկոտասանեսին աշակերտսն իւր՝ ետ նոցա իշխանութիւն այսոց պղծոց՝ հանել զնոսա և բժշկել զամենայն ցաւս և զամենայն հիւանդութիւնս։ Եւ առաքելոցն երկոտասանից էին անուանք այսոքիկ· առաջին Սիմովն, անուանեալն Պետրոս, և Անդրէաս եղբայր նորա, Յակովբոս Զեբեդեայ և Յովհաննէս եղբայր նորա, Փիլիպպոս և Բարթուղիմէոս, Թովմաս և Մատթէոս մաքսաւոր, Յակովբոս Ալփեայ և Ղեբէոս, որ անուանեցաւն Թադէոս, Սիմովն Կանանացի և Յուդա Իսկարիովտացի, որ և մատնեացն զնա։ Զնոսա երկոտասանեսին առաքեաց Յիսուս· պատուիրեաց նոցա և ասէ· Ի ճանապարհ հեթանոսաց մի՛ երթայցէք և ի քաղաք Սամարացւոց մի՛ մտանիցէք· այլ երթայք առաւել առ ոչխարսն կորուսեալս տանն Իսրայելի։ Եւ իբրև երթայցէք, քարոզեցէ՛ք և ասացէ՛ք, թէ մերձեալ է արքայութիւն երկնից։ Զհիւանդս բժշկեցէ՛ք, զբորոտս սրբեցէ՛ք, զդեւս հանէ՛ք. ձրի առէ՛ք և ձրի տո՛ւք։ Մի՛ ստանայք ոսկի, և մի՛ արծաթ, և մի՛ պղինձ ի գօտիս ձեր, մի՛ պարկ ի ճանապարհ, և մի՛ երկուս հանդերձս, մի՛ կօշիկս, մի՛ ցուպ· զի արժանի է մշակն կերակրոյ իւրում։ Յոր քաղաք մտանիցէք կամ ի գեօղ, հարցանիցէք, թէ ո՞ է ի նմա արժանի, և անդ լինիջիք, մինչև ելանիցէք անտի։ Եւ իբրև մտանիցէք ի տունն, ողջոյն տաջիք նմա և ասասջիք· ողջոյն տանս այսմիկ։ Եթէ իցէ տունն արժանի, եկեսցէ ողջոյնն ձեր ի վերայ նորա· ապա թէ ոչ իցէ արժանի, ողջոյնն ձեր առ ձեզ դարձցի։ Եւ որ ոչ ընկալցի զձեզ և ոչ լուիցէ բանից ձերոց, իբրև ելանիցէք ի քաղաքէն յայնմանէ, թօթափեսջիք զփոշին յոտից ձերոց։ Ամէն ասեմ ձեզ, դիւրագոյն լիցի երկրին Սոդոմացւոց և Գոմորացւոց յաւուրն դատաստանի, քան քաղաքին այնմիկ։

Ահաւասիկ ես առաքեմ զձեզ իբրև զոչխարս ի մէջ գայլոց· եղերո՛ւք այսուհետև խորագէտք իբրև զօձս և միամիտք իբրև զաղաւնիս։ Զգոյշ լինիջիք ի մարդկանէ· զի մատնեսցեն զձեզ յատեանս, և ի ժողովուրդս իւրեանց տանջեսցեն զձեզ, և առաջի դատաւորաց և թագաւորաց տանիցին զձեզ վասն իմ ի վկայութիւն նոցա և հեթանոսաց։ Այլ յորժամ մատնեսցեն զձեզ, մի՛



հոգայցէք, թէ ո՞րպէս կամ զի՞նչ խօսիցիք· զի տացի ձեզ ի ժամուն յայնմիկ՝ զինչ խօսիցիք։ Զի ո՛չ եթէ դուք իցէք, որ խօսիցիքն· այլ Հոգին հօր ձերոյ, որ խօսիցի ի ձեզ։ Մատնեսցէ եղբայր զեղբայր ի մահ, և հայր՝ զորդի· և յառնիցեն որդիք ի վերայ հարց և սպանանիցեն զնոսա։ Եւ եղիջիք ատեցեալք յամենեցունց վասն անուան իմոյ· իսկ որ համբերեսցէ իսպառ, նա կեցցէ։ Եւ յորժամ հալածիցեն զձեզ ի քաղաքիս յայսմիկ, փախիջիք յայլ· և եթէ յայնմանէ հալածիցեն զձեզ, փախիջիք ի միւս· ամէն ասեմ ձեզ, ոչ սպառեսջիք զքաղաքս Իսրայելի, մինչև եկեսցէ Որդի մարդոյ։ Ոչ է աշակերտ առաւել քան զվարդապետ, և ոչ ծառայ՝ քան զտէր իւր։ Շատ իցէ աշակերտին, եթէ եղիցի իբրև զվարդապետ իւր, և ծառային՝ իբրև զտէր իւր· եթէ զտանուտէրն բէեղզեբուղ կոչեցին, ո՞րչափ ևս առաւել զընտանիս նորա։ Մի՛ այսուհետև երկնչիցիք ի նոցանէ· զի ոչինչ է ի ծածուկ, որ ոչ յայտնեսցի, և գաղտնի՝ որ ոչ ծանիցի։ Զոր ասեմ ձեզ ի խաւարի՝ ասացէք ի լոյս, և զոր լսէք յունկանէ՝ քարոզեցէ՛ք ի վերայ տանեաց։ Եւ մի՛ երկնչիք յայնցանէ, որ սպանանեն զմարմին և զոգի ոչ կարեն սպանանել· այլ երկերուք դուք առաւել յայնմանէ, որ կարող է զոգի և զմարմին կորուսանել ի գեհենի։ Ո՞չ ապաքէն երկու ճնճղուկք դանգի միոջ վաճառին, և մի ի նոցանէ յերկիր ոչ անկցի առանց հօր ձերոյ։ Այլ ձեր և ամենայն իսկ հեր գլխոյ թուեալ է։ Եւ արդ՝ մի՛ երկնչիցիք, զի լաւ էք քան զբազում ճնճղուկս։ Ամենայն որ խոստովանեսցի յիս առաջի մարդկան, խոստովանեցից և ես զնմանէ առաջի հօր իմոյ, որ յերկինս է։ Եւ որ ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացայց և ես զնա առաջի հօր իմոյ, որ յերկինս է։ Մի՛ համարիք, եթէ եկի արկանել խաղաղութիւն յերկիր· ոչ եկի արկանել խաղաղութիւն, այլ սուր· քանզի եկի քակել զայր ի հօրէ իւրմէ և զդուստր ի մօրէ իւրմէ և զհարսն ի սկեսրէ իւրմէ, և թշնամիք առն՝ ընտանիք իւր։ Որ սիրէ զհայր կամ զմայր առաւել քան զիս՝ ոչ է ինձ արժանի· և որ սիրէ զուստր կամ զդուստր առաւել քան զիս՝ չէ՛ ինձ արժանի։ Եւ որ ոչ առնու զխաչ իւր և գայ զկնի իմ՝ չէ՛ ինձ արժանի։ Որ գտանէ զանձն իւր՝ կորուսցէ զնա, և որ կորոյս զանձն իւր վասն իմ՝ գտցէ

զնա։ Որ ընդունի զձեզ՝ զիս ընդունի, և որ զիս ընդունի՝ ընդունի զառաքիչն իմ։ Որ ընդունի զմարգարէ յանուն մարգարէի՝ զվարձս մարգարէի առցէ. և որ ընդունի զարդար յանուն արդարոյ՝ զվարձս արդարոյ առցէ։ Եւ որ արբուսցէ միում ի փոքրկանցս յայսցանէ բաժակ մի ջուր ցուրտ միայն՝ յանուն աշակերտի, ամէն ասեմ ձեզ, ոչ կորուսցէ զվարձս իւր»։

## 31. ՍԱՂՄՈՍ ՂԶ.

Տէր թագաւորեաց, ցնծասցէ երկիր, ուրախ եղիցին կղզիք բազումք։

Ամպ և մէգ շուրջ են զնովաւ, յիրաւունս և յարդարութիւն ուղղեալ է աթոռ նորա։

Հուր առաջի նորա գնասցէ և այրեսցէ շուրջ զթշնամիս նորա։

Երևեցան փայլատակունք նորա տիեզերաց, ետես և սասանեցաւ երկիր։

Լերինք որպէս մոմ հալեսցին յերեսաց Տեառն, յերեսաց Տեառն ամենայն երկրի։

Պատմեսցեն երկինք զարդարութիւն նորա, և տեսցեն ամենայն ժողովուրդք զփառս նորա։

Ամաչեսցեն ամենեքեան, որք երկիր պագանեն կռոց և որք պարծին ի դրօշեալս իւրեանց. երկիր պագցեն նմա ամենայն հրեշտակք նորա։

## 32. ԱՌԱԿ ՈՐՈՄԱՆ.

Նմանեցաւ արքայութիւն երկնից առն, որ սերմանիցէ սերմն բարի յագարակի իւրում։ Եւ ի քուն լինել մարդկան՝ եկն թշնամին նորա և ցանեաց ի վերայ որոմն ի մէջ ցորենոյն և գնաց։ Եւ իբրև բուսաւ խոտն և արար պտուղ, ապա երևեցաւ և որոմնն։ Մատուցեալ ծառայք տանուտեառնն ասեն ցնա. «Տէ՛ր, ո՞չ սերմն բարի սերմանեցեր յագարակին քում, արդ



ուստի՞ ունիցի զորոմնն»։ Եւ նա ասէ ցնոսա. «Այր թշնամի արար զայն»։ Ասեն ցնա ծառայքն. «Կամի՞ս, զի երթիցուք, քաղեսցուք զայն ի բաց»։ Եւ նա ասէ ցնոսա. «Մի՛. գուցէ մինչ քաղիցէք զորոմնն, և զցորեանն ընդ նմին ի բաց խլիցէք։ Թոյլ տուք երկոցունց աճել ի միասին մինչև ի հունձս, և ի ժամանակի հնձոցն ասացից ցհնձօղսն. «Քաղեցէ՛ք նախ զորոմնդ և կապեցէ՛ք զայդ խրձունս առ ի այրել, և զցորեանն ժողովեցէ՛ք ի շտեմարանս իմ»։

## 33. ՎԱՍՆ ԶՏԱՂԱՆԴՍՆ ՏԱԼՈՅ.

Այր մի գնացեալ ի տար աշխարհ՝ կոչեաց զծառայս իւր և ետ նոցա զինչս իւր։ Ումեմն ետ հինգ քանքար և ումեմն՝ երկուս և ումեմն՝ մի, իւրաքանչիւր ըստ իւրում կարի, և գնաց։ Զօգաւ վաղվաղակի՝ որ առ զհինգն, գործեաց նոքօք և շահեցաւ այլ ևս հինգ։ Նոյնպէս և որ զերկուսն՝ շահեցաւ այլ ևս երկուս։ Եւ որ զմին առ՝ գնաց, փորեաց զերկիր և թաքոյց զարծաթ տեառն իւրոյ։ Յետ բազում ժամանակի գայ տէր ծառայիցն այնոցիկ և առնէ համարս ի մէջ նոցա։ Եւ մատուցեալ՝ որ զհինգ քանքարն առ՝ մատոյց այլ ևս հինգ քանքար և ասէ. «Տէ՛ր, հինգ քանքար ետուր ցիս, արդ ահաւասիկ հինգ այլ ևս քանքար ի վերայ շահեցայ»։ Ասէ ցնա տէրն իւր. «Ագնի՛ւ, ծառայ բարի և հաւատարիմ, որովհետև ի սակաւուդ հաւատարիմ ես, ի վերայ բազմաց կացուցից զքեզ. մուտ յուրախութիւն տեառն քո»։ Մատուցեալ և որոյ զերկուս քանքարսն առեալ էր, և ասէ. «Տէ՛ր, երկուս քանքարս ետուր ցիս, ահաւասիկ երկուս ևս այլ քանքարս, զորս ի վերայ շահեցայ»։ Ասէ ցնա տէրն իւր. «Ագնի՛ւ, ծառայ բարի և հաւատարիմ, որովհետև ի սակաւուդ հաւատարիմ ես, ի վերայ բազմաց կացուցից զքեզ. մո՛ւտ յուրախութիւն տեառն քո»։ Մատուցեալ և որոյ զմի քանքարն առեալ էր, և ասէ. «Տէ՛ր, գիտէի, զի այր մի խիստ ես, հնձես՝ զոր ոչ սերմանեցեր, և ժողովես՝ ուստի ոչ սփռեցեր։ Երկեայ, գնացի և թաքուցի զքանքարն քո յերկրի. արդ ահաւասիկ քոյդ ցքեզ»։ Պատասխանի ետ տէրն և ասէ ցնա. «Ծառա՛յ չար և վատ, գիտէիր, եթէ հնձեմ՝ ուս-

ուր ոչ սերմանեցի, և ժողովեմ՝ ուստի ոչ սփռեցի. պարտ էր քեզ արկանել զարծաթդ իմ ի սեղանաւորս, և եկեալ ես տոկոսեօք պահանջէի զիմ։ Արդ՝ առէք ի դմանէ զքանքարդ և տուք այնմ, որ ունիցի զտասն քանքարն։ Զի ամենայնի, որ ունիցի՝ տացի և յաւելցի. և որ ոչն ունիցի, և զոր ունիցին՝ բարձցի ի նմանէ։ Եւ զծառայդ անպիտան հանէք ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ և կրճել ատամանց»։

## 34. ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ ԳԼՈՒԽ ԺԱ.

Եւ եղև իբրև կատարեաց Յիսուս զպատուէր երկոտասանից աշակերտացն իւրոց, գնաց անտի քարոզել և ուսուցանել ի քաղաքս նոցա։ Իսկ Յովհաննէս իբրև լուաւ ի բանտին զգործսն Քրիստոսի, առաքեաց ի ձեռն աշակերտացն իւրոց և ասէ ցնա. «Դո՞ւ ես որ գալոցն ես, եթէ այլում ակն կալցուք»։ Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա. «Գնացէ՛ք, պատմեցէ՛ք Յովհաննու, զոր լուայք և տեսէք։ Կոյրք տեսանեն, կաղք գնան, բորոտք սրբին, և խուլք լսեն, և մեռեալք յառնեն, և աղքատք աւետարանին։ Եւ երանեալ է՝ որ ոչ գայթակղեսցի յիս»։

Եւ իբրև նոքա գնացին, սկսաւ Յիսուս ասել ժողովրդեանն զՅովհաննէ. «Զի՞նչ ելէք տեսանել յանապատին. եղէ՞գն շարժուն ի հողմոյ։ Այլ զի՞նչ ելէք տեսանել. մա՞րդ ի հանդերձս փափկութեան զարդարեալ. ահաւասիկ որ զփափուկսն զգեցեալ են՝ ի տունս թագաւորաց են։ Այլ զի՞նչ ելէք տեսանել, մարգարէ՞. այո՛, ասեմ ձեզ, և առաւել ևս քան զմարգարէ։ Զի նա է, վասն որոյ գրեալն է. Ահա ես առաքեցից զհրեշտակ իմ առաջի երեսաց քոց, որ պատրաստեսցէ զճանապարհ քո առաջի քո։ Ամէն ասեմ ձեզ. չէ՛ յարուցեալ ի ծնունդս կանանց մեծ քան զՅովհաննէս Մկրտիչ. բայց փոքրիկն յարքայութեան երկնից մեծ է քան զնա։ Բայց յաւուրցն Յովհաննու Մկրտչի մինչև ցայժմ՝ արքայութիւն երկնից բռնադատի, և բռունք յափշտակեն զնա։ Քանզի ամենայն օրէնք և մարգարէք մինչև ցՅովհաննէս մարգարէացան։ Եւ եթէ կամիք ընդունել, նա է Եղիա, որ գալոցն է։ Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։ Ո՞ւմ նմանեցուցից



զազգս զայս. նման է մանկտւոյ, որ նստիցին ի հրապարակս, կարդայցեն զընկերս իւրեանց և ասիցեն. Փողս հարաք ձեզ, և ոչ կաքաւեցէք. ողբացաք ձեզ, և ոչ կոծեցարուք։ Եկն Յովհաննէս, ո՛չ ուտէր և ո՛չ ըմպէր, և ասեն՝ դև գոյ ի նմա։ Եկն Որդի մարդոյ, ուտէ և ըմպէ, և ասեն՝ ահա այր կերող և արբեցող, բարեկամ մաքսաւորաց և մեղաւորաց. և արդարացաւ իմաստութիւն յորդւոց իւրոց»։ Յայնժամ սկսաւ նախատել ըզքաղաքսն, յորս եղեն բազում զօրութիւնք նորա, և ոչ ապաշխարեցին։ «Վա՛յ քեզ, Քորազի՛ն, վա՛յ քեզ, Բեթսայիդա՛. զի եթէ ի Տիւրոս և ի Սիդովն եղեալ էին զօրութիւնքն, որ ի ձեզ եղեն՝ վաղու ևս արդեօք խորգով և մոխրով ապաշխարեալ էր։ Բայց ասեմ ձեզ, դիւրագոյն լիցի երկրին Տիւրոսի և Սիդովնի յաւուրն դատաստանի, քան ձեզ։ Եւ դո՛ւ Կափառնաում, մի՛ մինչև յերկինս բարձրասցիս, այլ մինչև ի դժոխս իջցես. զի եթէ ի Սոդոմ եղեալ էին զօրութիւնքն, որ ի քեզ եղեն՝ ապաքէն կային ևս մինչև ցայսօր։ Բայց ասեմ ձեզ, եթէ երկրին Սոդոմացւոց դիւրագոյն լիցի յաւուրն դատաստանի, քան քեզ»։

Յայնմ ժամանակի պատասխանի ետ Յիսուս և ասէ. «Գոհանամ զքէն, Հա՛յր, Տէր երկնի և երկրի. զի ծածկեցեր զայս յիմաստնոց և ի գիտնոց և յայտնեցեր տղայոց։ Այո՛, Հա՛յր, զի այսպէս հաճոյ եղև առաջի քո։ Ամենայն ինչ տուաւ ինձ ի հօրէ իմմէ։ Եւ ոչ ոք ճանաչէ զորդի, եթէ ոչ հայր. և ոչ զհայր ոք ճանաչէ, եթէ ոչ որդի, և ում որդին կամիցի յայտնել։ Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք, և ես հանգուցից զձեզ. առէ՛ք զլուծ իմ ի ձեզ և ուսարո՛ւք յինէն, զի հեզ եմ և խոնարհ սրտիւ, և գտջիք հանգիստ անձանց ձերոց։ Զի լուծ իմ քաղցր է, և բեռն իմ փոքրոգի»։

## 35. ՄԵԾԱՏՈՒՆՆ ԵՒ ՂԱԶԱՐՈՍ.

Այր ոմն էր մեծատուն և ագանէր բեհեզս և ծիրանիս և ուրախ լինէր հանապազ առատապէս։ Եւ աղքատ ոմն, անուն Ղազարոս, անկեալ դնէր առ դրան նորա վիրաւորեալ և ցանկայր լնուլ զորովայն իւր ի փշրանացն, որ անկանէին ի սեղանոյ

մեծատանն. այլ և շունք եւս գային և լեզուին զվէրս նորա։ Եւ եղև մեռանել աղքատին և տանել հրեշտակաց զնա ի գոգն Աբրահամու. մեռաւ և մեծատունն և թաղեցաւ։ Եւ ի դժոխսն ամբարձ զաչս իւր, մինչ ի տանջանսն էր. ետես զԱբրահամ ի հեռաստանէ և զՂազարոս ի գոգ նորա հանգուցեալ։ Եւ նա աղաղակեաց և ասէ. «Հա՛յր Աբրահամ, ողորմեա՛ց ինձ և առաքեա՛ զՂազարոս, զի թացցէ զծագ մատին իւրոյ ի ջուր և զովացուսցէ զլեզու իմ. զի պապակիմ ի տապոյ աստի»։ Եւ ասէ ցնա Աբրահամ. «Որդեա՛կ, յիշեա՛, զի ընկալար անդէն զբարիս քո ի կեանսն քում, և Ղազարոս նոյնպէս զչարչարանս. արդ սա աստ մխիթարի, և դու այդր պապակիս։ Եւ ի վերայ այսր ամենայնի՝ վիհ մեծ է ընդ մեզ և ընդ ձեզ. եթէ կամիցին աստի առ ձեզ անցանել, ոչ կարեն, և ոչ այտի ոք առ մեզ անցանել»։ Եւ ասէ. «Արդ աղաչեմ զքեզ, հա՛յր, զի արձակեսցես զդա ի տուն հօր իմոյ. են իմ անդ եղբարք հինգ, որպէսզի տացէ նոցա վկայութիւն, զի մի՛ և նոքա կայցեն յայս տեղի տանջանաց»։ Եւ ասէ Աբրահամ. «Ունին զՄովսէս և զմարգարէս, նոցա լուիցեն»։ Եւ նա ասէ. «Ո՛չ, հա՛յր Աբրահամ, բայց եթէ ի մեռելոց ոք երթիցէ առ նոսա, և ապաշխարեսցեն»։ Եւ ասէ ցնա. «Եթէ Մովսէսի և մարգարէիցն ոչ լսեն, և ոչ՝ եթէ ի մեռելոց ոք յառնիցէ՝ հաւատասցեն»։

## 36. ՍԱՂՄՈՍ ՃԼԶ.

Առ գետս Բաբելացւոց, անդ նստէաք և լայաք, որպէս յիշեցաք մեք անդ զՍիոն։

Ի մէջ ուռեաց նոցա կախեցաք զկտակարանս մեր։

Անդ հարցանէին զերիչք մեր զբանս օրհնութեան, գերեվարք մեր ստիպէին զմեզ և ասէին՝ Օրհնեցէ՛ք մեզ յօրհնութենէն Սիոնի։

Իսկ զիա՞րդ օրհնեսցուք զօրհնութիւնս Տեառն յերկիր օտար։

Եթէ մոռացայց զքեզ, Երուսաղէ՛մ, մոռասցի զիս աջ իմ։

Կցեսցի լեզու իմ ի քիմս իմ, թէ ոչ յիշեցից զքեզ, թէ ոչ նախ նուագեցից զքեզ, Երուսաղէ՛մ, սկիզբն ուրախութեան իմոյ։



Յիշեա՛, Տէ՛ր, զորդիսն Եդովմայ յաւուրսն Երուսաղէմի, որք ասէին՝ Քակեցէ՛ք, քակեցէ՛ք, մինչև ի հիմն հասուցէ՛ք։

Դուստր Բաբելացւոց թշուառական, երանի՜ որ հատոյց զհատուցումն քո, զոր դու մեզ հատուցեր. երանի՛ որ կալաւ զմանկունս քո և եհար զքարի։

## 37. ՎԱՍՆ ԿՈՉԵՑԵԼՈՑ Ի ՀԱՐՍԱՆԻՍՆ.

Նմանեցաւ արքայութիւն երկնից առն թագաւորի, որ արար հարսանիս որդւոյ իւրում։ Եւ առաքեաց զծառայս իւր կոչել զհրաւիրեալսն ի հարսանիս, և ոչ կամեցան գալ։ Դարձեալ առաքեաց այլ ծառայս և ասէ. «Ասացէ՛ք հրաւիրելոցն, ահաւասիկ զճաշ իմ պատրաստեցի, զուարակք իմ և պարարակք զենեալ են, և ամենայն ինչ պատրաստ է. եկա՛յք ի հարսանիսս»։ Եւ նոքա յուլացեալ գնացին ոմն յագարակ իւր, և ոմն ի վաճառ իւր. և այլք կալան զծառայս նորա, թշնամանեցին և սպանին։ Իսկ թագաւորն իբրև լուաւ՝ բարկացաւ, և առաքեաց զզօրս իւր և սատակեաց զսպանողսն զայնոսիկ և զքաղաքն նոցա այրեաց։ Յայնժամ ասէ ցծառայս իւր. «Հարսանիքս պատրաստ են, և հրաւիրեալքն չէին արժանի։ Արդ՝ երթա՛յք յանցս ճանապարհաց և զոր միանգամ գտանիցէք՝ կոչեցէ՛ք ի հարսանիսս»։ Եւ ելեալ ծառայքն ի ճանապարհս՝ ժողովեցին զամենեսեան, զորս և գտին, զչարս և զբարիս. և լցան հարսանիքն բազմականօք։ Եւ մտեալ թագաւորն հայել զբազմականօքն՝ ետես անդ այր մի, որ ոչ էր զգեցեալ հանդերձ հարսանեաց»։ Եւ ասէ ցնա. «Ընկե՛ր, զիա՞րդ մտեր այսր, զի ոչ ունէիր հանդերձ հարսանեաց»։ Եւ նա պապանձեցաւ։ Յայնժամ ասէ թագաւորն ցսպասաւորսն. «Կապեցէ՛ք զոտս նորա և զձեռս և հանէ՛ք զդա ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ և կրճել ատամանց. զի բազումք են կոչեցեալք, և սակաւք են ընտրեալք»։

# ԵՂԻՇԷԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ
# ՎԱՍՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԵՒ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ*)

## ԱՌԱՋԻՆ ՅԵՂԱՆԱԿ

### ԺԱՄԱՆԱԿՔՆ.

1.

Ի բառնալ ազգին Արշակունեաց՝ տէրեցին աշխարհիս Հայոց ազգն Սասանեայ պարսկի, որ վարէր զիւր իշխանութիւնն օրինօք մոգուցն և բազում անգամ մարտնչէր ընդ այնոսիկ, որ ոչ ընդ նոյն օրինօքն մտանէին, սկիզբն արարեալ յաւուրց Արշակայ արքայի, որդւոյն Տիրանայ, և կռուէր մինչև ցամս վեցերորդ Արտաշրի արքայի Հայոց, որդւոյն Վռամշապհոյ։ Եւ իբրև զնա ևս մերժեաց ի թագաւորութենէն, ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն զի թէպէտ և զանձն յարքունիս Պարսկաց երթայր, սակայն այրուձին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի. Վասն որոյ և աստուածպաշտութիւնն բարձրացեալ կամակարութեամբ երևելի լինէր յաշխարհին Հայոց ի սկզբանց տէրութեանն Շապհոյ արքայից արքայի մինչև ցամս երկրորդ Յազկերտի արքայի, որդւոյ Վռամայ, զոր եգիտ սատանայ իւր գործակից, և զամենայն մթերեալ թոյնսն թափեաց ի բաց և ելից զնա իբրև զպատկանդարան դեղեալ նետիւք։ Եւ սկսաւ եղջիւր ածել առնորէնութեամբ և գոռալով հող հանէր ընդ չորս կողմանս երկ-

*) Եղիշէի «Վարդանանց պատմութիւնն» ունի մի յառաջաբան, որից իմացւում է, որ հեղինակն այս պատմութիւնը գրել է Մամիկոնեան Դաւիթ երէցի խնդրով. Նպատակն է կրթել և քաջալերել ընթերցողներին. «զի հանապազորդ ընթեռնուցուս՝ լսելով զառաքինեացն ըղձալի քաջութիւն և զյետս կացելոցն զվատթարութիւն»։ Պատմութիւնը բաժանւում է ութ հատուածների, որոնք յեղանակ են կոչւում. Հեղինակը գրում է իբրև ժամանակակից և շատ բանի ականատես։



րի. և թշնամի և հակառակորդ երևեցուցանէր իւր զհաւատացեալսն ի Քրիստոս և նեղեալ տագնապէր անխաղաղաւէր կենօք։

Քանզի յոյժ սիրելի էր նմա խռովութիւն, արիւնհեղութիւն, վասն այնորիկ յանձն իւր տարաբերէր, եթէ յո՞ թափեցից զդառնութիւն թունից, կամ ուր բացատրեցից զբազմութիւն նետիցն։ Եւ առ յոյժ յիմարութեանն իբրև զգազան մի կատաղի յարձակեցաւ ի վերայ աշխարհին Յունաց. եհար մինչ ի քաղաքն Մծբին և բազում գաւառս Հոռոմոց աւերեաց ապականեաց և զամենայն եկեղեցիս հրձիգ արար. կուտեաց զաւար և զգերի և ահաբեկ արար զամենայն զօրս աշխարհին։

Իսկ երանելին Թէոդոս կայսր, քանզի խաղաղասէր էր ի Քրիստոս, ոչ կամեցաւ ելանել ընդ առաջ պատերազմաւ, այլ այր մի Անատոլ անուն, որ էր նորա սպարապետ արևելից, առաքեաց առ նա բազում գանձիւք։ Եւ արք պարսիկք, որք փախուցեալ էին վասն քրիստոնէութեան և էին ի քաղաքի կայսեր, կալաւ և ետ ի ձեռս նորա։ Եւ զամենայն, զոր ինչ ասաց ի ժամանակին, կատարեաց ըստ կամաց նորա և արգել զնա ի բազում բարկութենէն. և դարձաւ անդրէն յիւր քաղաքն Տիզբոն։

2.

Եւ իբրև ետես անօրէն իշխանն, եթէ յաջողեցաւ չարութիւնն նորա՝ սկսաւ այլ ևս խորհուրդ յաւելուլ, իբր. ոք զի ի հուր բորբոքեալ յաւելլով բազում նիւթս փայտից։ Քանզի ուստի սակաւ մի կասկածոտն էր, անափ անէրկիւղ հաստատեցաւ. վասն այնորիկ վրդովեցոյց զբազումս ի սուրբ ուխտէն քրիստոնէից, է՛ր զոր բանիւք սպառնալեօք, է՛ր զոր կապանօք և տանջանօք, և է՛ր զոր չարաչար մահուամբ վախճանէր։ Յափշտակութիւն առնէր ընչից և արարոց և մեծաւ անարգանօք տանջէր զամենեսեան։ Եւ իբրև ետես, եթէ վայրապարեալ ցրուեցան ի բազում կողմանս՝ ի խորհուրդ կոչէր զպաշտօնեայս ձախակողմանն, որք կապեալ էին ի կռապաշտութեան անլուծանելի հանգուցիւք, վառեալք և ջեռեալք իբրև զհնոց առ այրել զուխտ սուրբ եկեղեցւոյ։

Քանզի էին իսկ այնպիսիքն բնակեալ ի կեանս իւրեանց իբրեւ ի թանձրամած խաւարի, և ոգիքն արգելեալք ի մարմնի իբրեւ զկենդանի ի գերեզմանի, յորս ամենեւին չծագէ նշոյլ սուրբ լուսոյն Քրիստոսի։ Նաև արջք օրհասականք ընդ փախճանել շընչոյն հզօրագոյնս կռուին, յորոց և իմաստունքն տեղի տուեալ փախչին ի նոցանէ։ Այսպիսի իմն եկեալ, հասեալ է փախճան տէրութեան. եթէ հարկանին՝ չզգան, և եթէ հարկանեն՝ չիմանան. և իբրեւ ոչ գտանի արտաքին թշնամի, ընդ անձինս իւրեանց մարտ եղեալ կռուին։ Ի դէպ իսկ ելանէ բան մարգարէին ի վերայ նոցա. «Այր, ասէ, առ քաղցի իւրում շրջեսցի և կերիցէ զկէս անձին իւրոյ»։ Նման սմին և Տէրն ինքնին ասէ. «Ամենայն տուն և թագաւորութիւն, որ յանձն իւր բաժանի, ոչ կարէ կալ հաստատուն»։

Արդ զի՞ կոծիս, զի՞ մրցիս, զի՞ այրիս, զի՞ բորբոքիս, զի՞ ոչ շիջանիս, զի՞ կոչես ի խորհուրդ զայնոսիկ, որոց զոգիսն ձեր ի ձէնջ քաղեալ՝ հանեալ է զանապականդ յապականութիւն և զապականելի մարմինդ դէշաքարշ արարեալ՝ իբրեւ զագիր մեռելոտի ի բաց ընկեցեալ։ Ապաքէն զայդ կամիս, զի ծածկեսցի խորհուրդն ամբարշտութեան. տեսջիր, յորժամ յայտնեսցի, ապա գիտասցես զելս կատարածի դորա։

3.

Ասեն մոգքն. «Արքա՛յ քաջ, աստուածքն ետուն քեզ զտէրութիւնդ և զյաղթութիւն, և ոչ ինչ կարօտին նոքա մարմնաւոր մեծութեան, բայց եթէ ի մի օրէնս դարձուսցանես զամենայն ազգս և ազինս, որ են ի տէրութեան քում. յայնժամ և աշխարհն Յունաց հնազանդեալ մտցէ ընդ օրինօք քովք։ Արդ զբանս զայսոսիկ վաղվաղակի կատարեա՛ դու, արքա՛յ. զօր գումարեա՛ և գունդ կազմեա՛, խաղա՛, գնա՛ դու յաշխարհն Քուշանաց. և զամենայն ազգս ժողովեա՛ և անցո՛ ըստ Պահ գետոյն ի ներքս, և դու անդէն արա՛ քեզ բնակութիւն։ Յորժամ արգելուս և փակես զամենեսեան ի հեռաւոր օտարութեան, կատարին խորհուրդք կամաց քոց։ Եւ որպէս երեւի մեզ ի դենիս մերում, տիրես դու և երկրին Քուշանաց, և Յոյնք իսկ ոչ ելանեն ընդ



քո իշխանութիւնդ։ Բայց միայն զաղանդ քրիստոնէից բարձ ի միջոյ»։

Հաճոյ թուեցաւ խորհուրդն թագաւորին և մեծամեծացն, որ էին ի նմին բանի. հրովարտակս գրէր, պնդապնդագոյնս առաքէր յամենայն տեղիս տէրութեան իւրոյ։ Եւ այս է պատճէն հրովարտակին.

«Առ ամենայն ազգս տէրութեան իմոյ, Արեաց և Անարեաց. բազմասցի ի ձեզ ողջոյն մարդասիրութեան մերոյ. դուք ողջ լերո՛ւք, և մեք մեզէն ողջ եմք դիցն օգնականութեամբ։

«Առանց զձեզ ինչ աշխատ առնելոյ խաղացաք, գնացաք յերկիրն Յունաց և առանց գործոյ պատերազմի սիրով մարդասիրութեամբ նուաճեցաք զամենայն երկիրն մեզ ի ծառայութիւն։ Դուք զբարի զմտաւ ածէք և անապառ լերուք յուրախութեան. բայց բան զայս կատարեցէք վաղվաղակի, զոր ասեմք։

«Մեք ի մտի եդաք անվրէպ խորհրդովք խաղալ, գնալ յաշխարհն արեւելից, աստուածոցն օգնականութեամբ դարձուցանել ի մեզ զտէրութիւնն Քուշանաց. դուք իբրեւ զհրովարտակս զայս տեսանէք, անխափան, վաղվաղակի արձի գումարեցէ՛ք առաջի քան զիս. յանդիման լերո՛ւք ինձ յԱպար աշխարհին»։

Ըստ այսմ պատճենի հրովարտակ եհաս յաշխարհն Հայոց, ի Վրաց և յԱղուանից։

4.

Եւ անմեղութեամբ՝ ոչ գիտացեալ զերկդիմի միտս թագաւորին՝ խաղացին, գնացին յիւրաքանչիւր աշխարհաց լըջմտութեամբ և անտրտում խնդութեամբ և տիրասէր խորհրդովք, կատարել զպաշտ զինուորութեան աներկբայ վաստակովք։ Բարձին և ընդ իւրեանս սուրբ կտակարանս բազում պաշտօնէիւք և բազմագոյն քահանայիւք։

Արդ իբրեւ ետես թագաւորն զամենայն կազմութիւն և զբազմութիւն գնդի բարբարոսաց, որք սրտի մտօք եկեալ էին ի վաստակ արքունի, առաւելապէս ուրախ եղև առաջի մեծամեծացն և ամենայն բազմութեան զօրաց իւրոց։ Ի վերին երեսս թաքուցանէր զկամս մտացն իւրոց և ակամայ առաւելապէս պար-

դնէր զնոսա։ Տաղաց, գնաց միանգամայն ի վերայ տէրութեանն Հոնաց աշխարհին, զոր Քուշանս անուանեն, և զերկեամ մի կռուեալ՝ ոչ ինչ կարաց առնել նոցա։ Ապա արձակեաց զմարզիկսն յիւրաքանչիւր տեղիս, և զայլսն ի նոցա տեղիս փոխանակ առ իւր կոչեաց նովին պատրաստութեամբ։ Եւ այսպէս ամ յամէ սովորութիւն կարգեաց և իւր անդէն քաղաք բնակութեան շինեաց, սկսեալ ի չորրորդ ամէ տէրութեանն իւրոյ մինչև յամն մետասաներորդ թագաւորութեանն։

Եւ իբրև ետես, եթէ հաստատուն կային Հոնք յուխտն իւրեանց, զոր եդին ընդ նմա, և դադարեցին Տայլնդուրք ելանել ընդ պահակն Ճորայ, և յամենայն կողմանց խաղաղութեամբ բնակեաց աշխարհն նորա, և ի նեղ ևս էարկ զթագաւորն Հոնաց, քանզի աւերեաց զբազում գաւառս նորա, — աւետաւորս առաքեաց ընդ ամենայն տէրութեանս աշխարհին իւրոյ, ցլուք սպիտակօք և գիսաւոր նոխազօք ատատացոյց զգոհս կրակի և խիստ թանձրացոյց անդադարութեամբ զպաշտօն պղծութեանն իւրոյ. պատկօք և պատուովք մեծարեաց զբազումս ի մոգաց և զբազմագոյնս ի մոգպետաց։ Ետ և հրաման յափշտակել զքրիստոնէից զինչս և զստացուածս, որք էին ի մէջ Պարթևաց աշխարհին։

5.

Եւ այսպէս հպարտացաւ, բարձրացաւ ի միտս իւր, ի վեր քան զմարդկային բնութիւն ընդվզեալ ամպարտանէր, ոչ միայն յիրս մարմնական պատերազմացն, այլ մեծ ևս զինքն կարծէր քան զբնութիւն հայրենի կարգին։ Վասն այնորիկ կեղծաւորութեամբ թաքուցանէր զինքն ըստ կարծեացն և, որպէս երևէր իմաստնոցն, յանմահից ինչ կարգի դնէր զինքն։ Եւ յոյժ էր յառուցեալ ընդ անուանն Քրիստոսի, յորժամ լսէր, թէ տանջեցաւ, խաչեցաւ, մեռաւ և թաղեցաւ։

Եւ իբրև այսպէս օր ըստ օրէ ի սոյն միտս ցնորեալ դանդաչէր, մի ոմն մանկագոյն ի նախարարացն Հայոց ընդդէմ բանս եդ և ասէ. «Արքա՛յ քաջ, դու ուստի՞ գիտես զայդպիսի բանս խօսել զՏեառնէ»։ Ետ պատասխանի թագաւորն և ասէ. «Իմ իսկ առաջի ընթերցան զգիրս մոլորութեանն ձերոյ»։ Ետ պատաս-



խանի անդրէն պատանին և ասէ. «Ընդէ՞ր, արքա՛յ, ցայդ վայր միայն ետուր ընթեռնուլ. այլ յառաջ ևս մատո՛ զկարգացուցն և լսես անդ զյարութիւնն, զյայտնութիւնն առ բազումս, զվերացումն յերկինս, զնստելն ընդ աջմէ Հօր, զխոստումն երկրորդ գալստեան՝ զհրաշակերտ յարութիւնն առնելով բոլորեցունց, զհամառօտ հատուցմունս արդար դատաստանին»։ Իբրև լուաւ զայս թագաւորն, ի խոր խոցեալ՝ վեր ի վերոյ ծիծաղեցաւ և ասէ. «Ամենայն այդ խաբէութի՛ւն է»։ Ետ պատասխանի զինուորն Քրիստոսի և ասէ. «Եթէ հաւատարիմ են քեզ մարմնաւոր չարչարանք նորա, հաւատարմագո՛յն ևս լիցի քեզ երկրորդ ահաւոր գալուստն նորա»։

Եւ զայս լսելով թագաւորին՝ բորբոքեցաւ իբրև զհուր հնոցին ի Բաբիլոնի, մինչ և իւրքն իսկ անդէն դեռ ևս իբրև զՔաղդէացիսն այրեցեալ լինէին։ Յայնժամ զբոլոր բարկութիւն սրտմտութեանն եհեղ յայրն երանելի, որում անուն էր Գարեգին. կապեալ ոտիւք և կապեալ ձեռօք զերկեամ մի տուաւ ի չարչարանս, և հանեալ ի բաց զտէրութիւնն ի նմանէ, ընդունէր զվճիռ մահու։

# ԵՐԿՐՈՐԴ ՅԵՂԱՆԱԿ.

## ԻՐԱՑՆ ՊԱՏԱՀՈՒՄՆ ՅԻՇԽԱՆԷՆ ԱՐԵՒԵԼԻՑ.

1.

Որոց ոգիքն թուլացեալ են յերկնաւոր առաքինութենէն՝ յոյժ ընդ ահիւ անկեալ է բնութիւն մարմնոյ. յամենայն հողմոյ շարժի և յամենայն բանէ խռովի և յամենայն իրաց դողայ. երազադէտ է այնպիսին ի կեանս իւրում և յանդիմա կորուստ յուղարկի ի մահուան իւրում։ Որպէս և ասաց ոմն ի հնոցն, մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է։ Որ

զմահ ոչ գիտէ՝ երկնչի ի մահուանէ. իսկ որ գիտէ զմահ՝ ոչ երկնչի ի նմանէ։

Եւ այս ամենայն չարիք մտանեն ի միտս մարդոյ յանուսումնութենէ։ Կոյր զրկի ի ճառագայթից արեգական, և տգիտութիւն զրկէ ի կատարեալ կենաց։ Լաւ է կոյր աչօք, քան կոյր մտօք։ Որպէս մեծ է հոգի քան զմարմին, այսպէս մեծ է տեսանութիւն մտաց քան զմարմնոյ։ Եթէ ոք կարի առաւելեալ իցէ աշխարհական մեծութեամբ և մտօքն՝ աղքատագոյն, այնպիսին ողորմելի է քան զբազումս. որպէս և տեսանեմք իսկ, ոչ միայն ի չափաւոր մարդիկ, այլ և յոր մեծն է քան զամենայն։ Թագաւոր եթէ ոչ ունի զիմաստութիւն աթոռակից իւր, ոչ կարէ ի վիճակին իւրում վայելուչ գոլ։ Իսկ եթէ առ մարմնաւորս այսպէս, ո՞րչափ ևս առաւել առ հոգևորսն։ Բոլոր մարմնոյ հոգի է կենդանութիւն, իսկ մարմնոյ և հոգւոյ միտք են կառավար. և որպէս առ մի մարդ, այսպէս առ բոլոր աշխարհս։ Թագաւոր ոչ զիւր միայն տացէ պարտիս, այլ և որոց եղև պատճառք ի կորուստ։

Բայց մեք թէպէտ և ոչ ունիմք հրաման բամբասել զիշխանս, բայց և ոչ գովողք կարեմք լինել այնմիկ, որ աստուածամարտն լինիցի։ Այլ զանցս իրացն պատմեմ, որ ի նմանէ ընդ սուրբ եկեղեցիսն էանց, և ոչ գանդաղիմ, ոչ բամբասասէր մտօք, այլ ճշմարտութեամբ զելս իրացն ասելով՝ ոչ լռեցից. ոչ ի կարծ ընդոստուցեալ և ոչ ի լուր զարթուցեալ, այլ ե՛ս ինքնին, անձամբ անձէն ի տեղւոջն պատահեցի և տեսի և լուայ զձայն բարբառոյ յանդգնաբար խօսելով. իբրև զհողմ սաստիկ, զի բախիցէ զծով մեծ, ա՛յնպէս շարժէր և տատանէր զամենայն բազմութիւն զօրացն իւրոց։ Եւ հանդէս առնէր ամենայն ուսմանց և անդաճէր զմողութիւն և զքաւդէութիւն և զամենայն ուսմունս աշխարհին իւրոյ։ Արկանէր ի ներքս և զքրիստոնէութիւն կեղծաւորութեամբ և ասէր զայրացեալ մտօք. «Հարցէ՛ք, քննեցէ՛ք, տեսէ՛ք. թող որ լաւն է՝ ընտրեալ կալցուք»։ Եւ փութայր՝ որ ինչ ի մտին էր՝ զի վաղվաղակի կատարեսցի։



2.

Իսկ ի կողմանց կողմանց քրիստոնեայքն, որ ի զօրուն էին, իմացան զխորհուրդն, որ ծածուկ վառեալ բորբոքէր և կամէր հրդեհել զլերինս և զդաշտս առհասարակ։ Ջեռան և նոքա անձախական հրով և սաստկապէս պատրաստեցան առ փորձութիւն զաղտնի մեքենայիցն։ Սկսան այնուհետև բարձր բարբառով սաղմոսիւք և երգովք հոգևորօք և մեծապայծառ վարդապետութեամբ յայտ յանդիման մեծի բանակին զպաշտօնն ցուցանել և աներկիւղ, առանց զանգիտելոյ, ո՛ ոք և երթայր առ նոսա՝ ուսուցանէին կամակար։ Եւ Տէր յաջողէր նոցա նշանօք և արուեստիւք. քանզի բազում հիւանդք ընդունէին զբժշկութիւն ի հեթանոսական զօրուն։

Իսկ անօրէն իշխանն իբրև գիտաց, եթէ յայտնեցաւ խորամանկութիւն խորհրդոյն, և պատրաստեալ հուրն, մինչև ուրուք ի նա փչեալ, վառումն նորա յայտնի իմացաւ երկիւղածացն Աստուծոյ, — սկսաւ ծածուկ նետիւք խոցոտել զմիտս իւրոյ չարութեանն և անբժշկական վէրս յոգիս և մարմինս տեսանէր։ Մերթ շանթէր, գալարէր իբրև զօձ թունաւոր, մերթ պարզէր, գոչէր իբրև զառիւծ զայրացեալ. գելոյր և տապալէր երկդիմի մտօք. զխորհուրդս կամացն կամէր կատարել։ Քանզի ձեռն արկանել և ունել ոչ կարէր, — վասն զի ոչ էին համագունդ ի միում վայրի առ նմա, — սկսաւ այնուհետև յառաջ կոչել զկրսերս յաւագաց և զանարգս ի պատուականաց և զտգէտս ի գիտնոց և զանարիս ի քաջ արանց. և զի՞ մի մի թուիցեմ, այլ զամենայն արմանաւորսն յետս տանէր, մինչև զհայր և զորդի քակէր ի միմեանց։

3.

Եւ թէպէտ ընդ ամենայն ազգս առնէր զանկարգութիւնս գայս, առաւել ընդ Հայոց աշխարհին մարտնչէր. քանզի տեսանէր զնոսա ջերմագոյնս յաստուածպաշտութեան, մանաւանդ որք էին յազգէ նախարարացն Հայոց և անմեղութեամբ ունէին զսուրբ քարոզութիւն առաքելոցն և զմարգարէից։ Պատ-

բէր զոմանս ի նոցանէ ոսկւով և արծաթով և զբազում այլով ևս առատ պարգևօք. իսկ զոմանս՝ ապարանօք և մեծամեծ դեղօք, զոմանս՝ պատուովք և իշխանութեամբք մեծամեծօք. և այլ ևս որնատի յոյս ոգւոց առաջի դնէր։ Եւ այսպէս հրապուրէր և յորդորէր հանապազ. «Եթէ միայն, ասէ, զօրէնս մոգութեան յանձին կալջիք և զձեր մոլորութիւնդ սրտի մտօք դարձուցանիցէք ի ճշմարտութիւն երևելի մերոյ գիւցազնական օրինացս, ի մեծութիւնս և յաւագութիւնս հասուցից հաւասար իմոյ սիրելի նախարարացս, նա՛ առաւել ևս զանցուցից»։ Եւ այսպէս կեղծաւորութեամբ խոնարհեցուցանէր զինքն առ ամենեսեան, խօսելով ընդ նոսա ի պատճառս սիրոյ, զի խորամանկութեամբ որսալ մարթասցէ զնոսա ըստ առաջին խորհրդականացն խրատուց։ Եւ զայս առնէր՝ սկսեալ ի չորրորդ ամէն մինչև ի մետասաներորդ ամն իւրոյ տէրութեանն։

Եւ իբրև ետես, եթէ ոչինչ յարդեցաւ ծածուկ հնարագիտութիւնն, այլ ընդդէմքն յոլովագոյն գործէին, — քանզի տեսանէր զքրիստոնէութիւն, որ օր քան զօր յորդեալ տարածանէր ընդ ամենայն կողմանս հեռաւոր ճանապարհին, ընդ որ ինքն անցանէր, — սկսաւ հաշել և մաշել և հառաչելով յոգւոց հանել։ Յայտնեալ ակամայ զծածուկ խորհուրդսն, ետ հրաման բարձր բարբառով և ասէ. «Ամենայն ազգ և լեզուք, որ են ընդ իմով իշխանութեամբ, դադարեսցին յիւրաքանչիւր մոլոր օրինաց և միայնոյ եկեսցեն յերկրպագութիւն արեգական, զոհս մատուցանելով և աստուած անուանելով և սպաս ունելով կրակի. և ի վերայ այսր ամենայնի՝ և զմոգութեան օրէնս կատարելով մի՛ ինչ ամենևին պակաս առնիցեն»։

Զայս ասելով քարոզ կարգայր ի մեծի կարաւանին և պատուէր սաստիւ ի վերայ դնէր ամենեցուն. և դեսպանս ստիպաւ արձակէր յամենայն ազգս հեռաւորս, զնոյն պատուէր հրամանի առ ամենեսեան արկանէր։

4.

Արդ ի սկիզբն երկոտասաներորդ ամի թագաւորութեան իւրոյ գունդ գումարէր անհամար բազմութեամբ, յարձակեալ



հասանէր յերկիրն Թետալական։ Զայս տեսեալ թագաւորին Քուշանաց՝ ոչ հանդուրժէր ընդ առաջ ելանել նորա պատերազմաւ. այլ խոյս տուեալ ի կողմանս ամուրս անապատին՝ թաքստեամբ ապրէր հանդերձ ամենայն զօրօքն իւրովք։ Իսկ սա ասպատակ արձակէր զաւառաց, տեղեաց, վայրաց. առնոյր զբազում բերդս և զքաղաքս և կուտէր զգերին, զառ և զապուռ և զաւար, ածէր, հասուցանէր յերկիր իւրոյ տէրութեանն։ Եւ անդ այնուհետև յընդունայն եղեալ ի նոյն խորհուրդս՝ հաստատէր ի կարծիս մոլորութեան, ասելով ցպաշտօնեայս ամբարշտութեանն. «Զի՞նչ հատուսցուք մեք աստուածոցն փոխարէնս այս մեծի յաղթութեանս, որ ոչ ոք կարաց ելանել ընդդէմ մեր պատերազմաւ»։

Յայնմ ժամանակի առ հասարակ մոգք և քաւդեայք բարձին զձայնս իւրեանց միաբան և ասեն. «Աստուածքն, որ ետուն քեզ զտէրութիւն և զյաղթութիւն ի վերայ թշնամեաց քոց, ոչ ինչ կարօտ են խնդրել ի քէն յերևելի պատուականացս, այլ զի բարձցես զամենայն ուսմունս մոլորութեան մարդկան և ի մի դարձուսցես օրէնս զրադաշտական պատուիրանին»։ Հաճոյ թուէր բանն առաջի թագաւորին և ամենայն մեծամեծացն, մանաւանդ որ էին առաջակայք օրինացն։ Խորհուրդ ի մէջ առեալ՝ յաղթէր խրատն։

Անդէն ի ներքոյ Պահ դրանն արգելոյր զբազմութիւն այրուձիոյն Հայոց և զՎրաց և զԱղուանից և զամենեցուն, որ էին հաւատացեալ ի սուրբ աւետարանն Քրիստոսի։ Եւ հրաման սաստիկ դռնապանացն առնէին, եթէ՝ Որ յարևելս առ մեզ գայցէ՝ թողցեն, իսկ յարևելից յարևմուտս անանց լիցի ճանապարհն։

5.

Եւ իբրև արգել և փակեաց զնոսա յամուր և յանել կապանսն, — և յիրաւի ասացի ամուր և անել, քանզի չիք անդ տեղի փախստի և թաքստի, վասն զի շուրջանակի թշնամիք են բնակեալ, — յայնմ ժամանակի ձեռն արկանէր ի նոսա, մեծաւ չարչարանօք և պէսպէս տանջանօք վատթարէր զբազումս ի նոցանէ և ստիպէր ուրանալ զճշմարիտն Աստուած և խոստովանել զերևելի տարերսն։ Իսկ զօրականքն առ հասարակ գեղեցիկ խորհրդով, քա-

ջալէս զօրութեամբ միաբան աղաղակէին և ասէին. «Վկայ են մեզ երկինք և երկիր, ոչ երբեք հեղգացեալ եմք յարքունի վաստակս և ոչ խառնեալ վատութիւն ընդ արութիւն քաջութեան. ի զուր և անօգուտ են հարուածքս ի վերայ մեր»: Եւ բազմանայր դոչումն աղաղակի նոցա, մինչև ինքնին Թագաւորն ականատես լինէր իրացն յանդիմանութեան և անդէն վաղվաղակի երդմամբ հաստատէր և ասէր. «Ոչ թողացուցից ձեզ, մինչև կատարեսջիք զամենայն կամս հրամանաց իմոց»:

Եւ ահա իշխանութիւն առեալ չարաչար սպասաւորացն՝ զչորս զինուորսն ի բուն աւագացն մատուցին ի փորձութիւնս տանջանաց: Եւ զառաջեաւ դատեալ բազում հարուածովք՝ նովին կապանօք անցուցին ի տեղիս արգելանին: Իսկ այլոցն խաբէութեամբ առ ժամանակ մի թողութիւն արարեալ, և զամենայն վնասուն պատճառս արկանէր զկապելովքն. և զայս առնէր սատանայական խրատուն:

Իսկ յետ երկոտասան աւուր հրաման տայր ընթրիս գործել առատութեամբ և աւելի քան զաւուրց սովորութիւն և կոչէր զբազումս ի զինուորական քրիստոնէիցն: Եւ ի ժամ դանոց պատրաստութեան զիւրաքանչիւր տեղի շնորհէր նոցա զբազմականին և սիրով, խոնարհութեամբ խօսէր ընդ նոսա ըստ առաջնում կարգին, զի թերևս հաւանեսցին ուտել զմիս զոհեալ, զոր ոչ էր երբեք օրէն ուտել քրիստոնէից: Իբրև ոչ կալան յանձին ամենեքին, ոչ ինչ կարի ստիպեաց, այլ հրամայեաց մատուցանել նոցա զսովորական կերակուրն. և առաւել գինեօքն յաւելոյր ի տաճարին զխրախութիւն:

Եւ անտի իբրև ի դուրս ելին ի սրահն արքունի, արգելին զոմանս ի նոցանէ ձեռս յետս կապելով և զխոնջանոնոն կնքելով. և զգուշութեամբ պահէին՝ էր որ զերկուս աւուրս, և էր որ զերիս բազում և այլ ևս յանարժան հարուածս չարչարէին, զոր ոչ ընդ գրով իսկ արժանի համարեցաք արկանել: Եւ զոմանս ի նոցանէ ընդ քաջ վարէին յօտարութիւն յազնուական պատուոյն անարգեալ:

6.

Եւ զունդս զունդս դարձեալ զումարէին ի նոցանէ յերկիր հեռաստան, յամուրս անապատին, ի մարտ պատերազմի Թշնա-



մեացն արքայի. և բազմաց իսկ անդէն հասանէր վախճան մահու սրով: Եւ զամենեցունց զկարգեալ Թոշակսն նուազեցուցանէին, և քաղցիւ և ծարաւով տառապեցուցանէին զնոսա, և ձմերոյի տեղիս՝ զվճնեալ վայրսն հրամայէին նոցա, և անարգս և վատթարս յաչս ամենեցուն զնոսա ցուցանէին:

Իսկ նոքա առ սէրն Քրիստոսի յոյժ խնդութեամբ ընդունէին զամենայն չարչարանսն վասն մեծի յուսոյն, որ առաջոյ պատրաստեալն կայ պատուիրանապահ համբերողացն: Որչափ չարութեամբ զանարգութիւնն բազմացուցանէր, նոքա ևս քան զևս զօրանային ի սէրն Քրիստոսի. մանաւանդ զի բազումք ի նոցանէ զգիրս սուրբս ուսեալ էին ի մանկութենէ, այնու զանձինս մխիթարէին և զընկերսն քաջալերէին. և աշխարհայ զպաշտօնն ունէին և բազմացուցանէին: Վասն որոյ և բազումք ի հեթանոսաց, որոց հեշտ և ցանկալի ձայնքն թուէին, քաջալերէին զնոսա և ասէին բանս մխիթարութեան, իբրև եթէ լաւ իցէ մարդոյ մահու չափ ճգնել, քան յայդպիսի օրինաց ուրանալ:

Բայց սակայն թէպէտ և նոքա առ սէրն Քրիստոսի յոյժ զուարթութեամբ խնդային ըստ ներքին մարդոյն, արտաքին տեսիլն կարի ողորմ էր յօտարութեանն: Այնպիսի պատուական զինուորութիւն հասեալ էր ի չարաչուք անարգութիւն, և հայրենի ազատութիւնն չարաչար կայր ի ծառայութեան մարդախողող բռնաւորին, որ և ըստ հեթանոսաց օրէնս անցանէր արհենհեղութեամբ և ամենևին չկարծէր. թէ զուցէ այսր ամենայնի վրէժխնդիր լինիցի:

Նաև ոչ զերկրաւոր վաստակս ուրուք յիշէր. և որ մեծն քան զամենայն է ըստ մարմնաւոր կարգի, — քանզի գոյին ոմանք ի նախարարացն Հայոց, որոց զեղբարս նորա անուցեալ էր մայրենի կաթամբն իւրեանց, — առաւել քան զամենեսեան զնոսա դատէր:

7.

Եւ յայսր ամենայնի վերայ այլ ևս չարութիւն խորհրդանկեաց: Զմի ոմն ի հաւատարիմ ծառայիցն իւրոց ի գործ առաքէր յերկիրն Հայոց, որում անունն էր Դենշապուհ, որ եկեալ, հասեալ հրամանաւ արքունի. զողջոյն բերեալ զմեծ Թա-

դաւորին և խաղաղասէր կեղծաւորութեամբ աշխարհագիր առնելով ամենայն երկրին Հայոց ի թողութիւն հարկաց և ի թեթեւութիւն ծանրութեան արքունին։ Թէպէտ և ի վերին երեսս կեղծաւորէր, այլ ի ներքոյ խորհուրդք չարագոյն ցուցանէին։

Առաջին՝ զազատութիւն եկեղեցւոյ արկանէր ի ծառայութիւն։

Երկրորդ՝ միայնակեաց քրիստոնեայք, որ բնակեալ էին ի վանորայս, ընդ նովին աշխարհագրով էարկ։

Երրորդ՝ զհարկ աշխարհին առաւել ծանրացոյց։

Չորրորդ՝ զնախարարեանն բանսարկութեամբ արկ ընդ միմեանս և յամենայն տան արար խռովութիւն։

Եւ զայս ամենայն առնէր, զի թերեւս զմիաբանութիւնն քակտեսցէ և զուխտն եկեղեցւոյն յրուեսցէ և զմիայնակեացսն փախուսցէ և զշինականսն վատնեսցէ, և առ յոյժ աղքատութեանն ակամայ դիմեսցեն յօրէնս մոգուց։

Եւ և՛ս չարագոյն հինգերորդն. քանզի որ հազարապետն էր աշխարհին՝ իբրև զհայր վերակացու համարեալ էր աշխարհականացն քրիստոնէից. գրգռեաց, յարոյց զամբաստանութիւն ի վերայ նորա և հանեալ զնա ի գործոյն՝ փոխանակ նորա պարսիկ ած յաշխարհն, և միւս ևս մոգպետ դատաւոր աշխարհին, զի զեկեղեցւոյ փառս աղաւաղեսցեն։

Բայց սակայն թէպէտ և ամենայն գործքս այս դժնեայ էին, չև էր ուրուք ձեռն արկեալ յայտնի յեկեղեցին. վասն այնորիկ և ոչ ոք ընդդիմացաւ նմա, թէպէտ և էր ծանրութիւն հարկացն։ Քանզի ուստի արժան էր առնուլ հարիւր դահեկան, նոյնչափ կրկնէին և առնուին. սոյնպէս և եպիսկոպոսաց և երիցանց դնէին, ոչ միայն շինաց, այլ և աւերակաց։ Ն՛ա բնաւ ո՞վ իսկ կարէ պատմել վասն ծանրութեան մտից և սակից, բաժից և հասից, և հարկաց լերանց և դաշտաց և մայրեաց։ Ոչ ըստ արքունի արժանաւորութեանն առնուին, այլ հինաբար յափշտակելով, մինչև ինքեանք իսկ մեծապէս զարմանային, թէ ուստի այս ամենայն գանձ ելանէ՝ զիա՞րդ չէն կայցէ աշխարհն Հայաստանեայց,

Եւ իբրև տեսին, թէ այսու ամենայնիւ չկարացաք ձանձրացուցանել, յայնժամ յայտնապէս հրաման ետուն մոգաց և մոգպետաց նամակ մի գրել ըստ ձախողակի դենին իւրեանց։ *)



8.

Եւ իբրև հասին ի Դուռն արքունի, ի մեծի շաբաթու Զատկին յանդիման լինէին թագաւորին։ Բայց թէպէտ և տեսանէին զեղբարս իւրեանց ի մեծամեծ վիշտս տառապանաց, որ վասն անուանն Քրիստոսի ճգնեալք էին պնդապէս, ոչ ինչ տրտում և տխուր զերեսս ցուցանէին հրապարակին։ Եւ որչափ նոքա զուարթագին երևէին ամենեցուն, առաւել զարմանային չարաւէրքն։

Եւ զի օրէնք էին յառաջ ժամանակաւ, յորժամ ի Հայոց այրուձի ի Դուռն երթայր, ի ձեռն պատուաւորի զօրագլխի ուրուք այր ընդ առաջ յղէր և հարցանէր զողջոյն և զխաղաղութիւն Հայոց աշխարհին. և երկիցս և երիցս անգամ զնոյն առնէր, և զհանդէս գնդին ինքնին տեսանէր թագաւորն և յառաջ քան զգործ պատերազմին հատանել զգալն իսկ առ նա՝ մեծի շնորհակալութեան համարէր և առաջի աթոռակցացն իւրոց և ամենայն մեծամեծացն՝ զովութիւն մատուցանէր ամենեցուն. և յիշէր զնախնեացն զվաստակս և զառն առն քաջութիւն պատմէր նոցա։ Իսկ այն օր ոչ մի ինչ յայտնեաց ամենևին ինչ ոչ յիշեաց, այլ իբրև զչարագէս մի՝ ոչ դադարէր յուզել և շարժել զբուք ձմերայնւոյ։ Որպէս և նմանեալ իսկ էր ծովածուփ ալեկոծ խռովութեան, ոչ դուզնաքեայ վեր ի վերոյ, այլ անդատին յանդնդոց բարձրանայր փրփրեալ, կուտակեալ. և վիշապաձայն որոտալով, գազանաբար գոչելով առ հասարակ դողացուցանէր զտիեզերական իշխանութիւնն, որպէս թէ փլեալ տարածանիցի

*) Նամակի մէջ Միհրներսեհ վզուրկը բացատրելով մազդեզն կրօնի էութիւնը և քրիստոնէութիւնը ներկայացնելով իբրև մի մոլորութիւն՝ առաջարկում է հայերին ընդունել զրադաշտական կրօնը։ Բայց հայերը մի առ մի պատասխանելով նրա նամակի բոլոր կէտերին՝ մերժում են զրադաշտական կրօնը։ Այն ժամանակ Յազկերտ թագաւորն արքունի Դուռն է կանչում տասը նշանաւոր հայ նախարարների, որոնց թւում և մարզպան Վասակ Սիւնեցին ու Վարդան Մամիկոնեանին։

համատարած ամենայն ի վերայ չերանց, խորոց և ձորոց՝ ապականել միանգամայն զլայնութիւն դաշտացն վայելչութեան։

Մունչելով բարբառ արձակեալ և ասէ. «Երդուեալ իմ է յարեգակն, ի մեծն աստուած, որ ճառագայթիւքն իւրովք լուսաւորէ զամենայն տիեզերս և ջերմութեամբն կենդանածնէ զամենայն գոյացեալսն. եթէ ոչ վաղիւ ընդ առաւօտն, ընդ երևումն սքանչելւոյն, ընդ իս զիւրաքանչիւր ծունր նմա ոչ կրկնեսջիք՝ խոստովանելով զնա աստուած, ոչ ինչ թողացուցից ձեզ՝ զամենայն նեղութիւնս չարչարանացն ի վերայ ածելով, մինչև ակամայ կատարիցէք զկամս հրամանաց իմոց»։

Իսկ հաւատացեալքն հաստատեալք ի Քրիստոս՝ ոչ ի սաստնամանեաց ձմերայնւոյն հովանային, և ոչ ի տապոյ խորշակին ջեռնուին, և ոչ յահագին ձայնէն տարբէին, և ոչ ի սպառնալեաց տանջանացն զանգիտէին, այլ ի վեր հայեցեալք զզօրութիւնն Քրիստոսի յօգնութիւն եկեալ տեսանէին. և զուարթագին դիմօք և համեստ բանիւք յառաջ մատուցեալ՝ տային պատասխանի թագաւորին։

«Աղաչեմք ի քէն, արքա՛յ քաջ, ունկն դիր սակաւ բանից մերոց, և քաղցրութեամբ լուիցես՝ զոր ասելոցս եմք։ Քանզի յիշեցուցանեմք քեզ զժամանակն Շապհոյ արքայից արքայի, որ էր հայր հաւուն քո Յազկերտի. և ետ նմա Աստուած զերկիրն Հայոց ի ժառանգութիւն տուիչն օրինօք, որով և մեք իսկ վարիմք այժմ, և հարքն մեր և հաւք հարցն մերոց կային նմա ի ծառայութեան վաստակս. և սիրով կատարէին զամենայն հրաման բանի նորա և բազում անգամ ի նմանէ մեծապարգևք ելանէին։ Եւ յայնց ժամանակաց մինչև ի քո հայրենի աթոռդ՝ և մեք զնոյն ծառայութիւն ծառայեցաք. բայց թերևս քեզ լաւագոյն քան զառաջնոցն»։

Զայս ասելով ցուցանէին զքաջութիւն արութեանցն լաւագոյն քան զառաջնոցն ըստ զինուորութեան կարգի։ Իսկ զմտից և զսակից, և որ այլ ևս էին հարկք աշխարհին, բազմագոյն քան առ հարբն նորա երթայր յարքունիս։

«Նաև ի սուրբ եկեղեցւոյն, որ էր ազատ ի Քրիստոս ըստ կարգի նախնեացն մերոց ի սկզբանէ, և դու ընդ հարկաւ եդիր. և մեք առ սէր քոյոյ տէրութեանդ ոչ ինչ ընդդիմացաք քեզ։



Արդ վասն է՞ր յուզեալ իցէ ցասումնս այս ի վերայ մեր. ասա՛ դու մեզ պատճառս վնասուն. եթէ օրէ՛նքն մեր պատճառք իցեն անվաստակ լինելոյ առաջի քո»։

Իսկ չարագէտն լի ամենայն նենգութեամբ՝ զերեսս ի մի կողմ դարձուցեալ և ասէ. «Վնա՛ս համարիմ ընդունել ի գանձ արքունի զհարկս աշխարհին ձերոյ և անօգուտ՝ զքաջութիւն արութեան ձերոյ. քանզի ադիտաբար մոլորեալ էք ի ճշմարիտ օրինացս մերոց, և զաստուածս անարգէք, և զհուր սպանանէք, և զջուրս պղծէք, և զմեռեալս ի հող թաղելով զերկիր ապականէք։ Տեսանեմ զձեզ իբրև զխաշինս ցրուեալս և վայրատեալս յանապատի, և յոյժ զեղջ է մտաց իմոց, թէ գուցէ աստուածքն բարկացեալ վասն ձեր՝ ի մէնջ վրէժս առնուցուն։ Այլ դուք եթէ կամիք կեալ և կեցուցանել զանձինս ձեր և մեծարանօք անդրէն յուղարկիլ, զոր ասացի՝ վաղիւ վաղվաղակի կատարեցէ՛ք»։

Յայնժամ երանելի նախարարքն առ հասարակ զձայնս իւրեանց բարձին և ասեն յանդիման ամենեցուն. «Մի՛ դու, արքա՛յ, և մի՛ զայդ այլ ևս առ մեզ ասեր. քանզի ոչ է եկեղեցի շինուած մարդոյ, և ոչ տուրք արեգական, որպէս դուդ այլ ընդ այլոյ կարծես, թէ աստուած իցէ. ոչ միայն զի աստուած չէ, այլ և կենդանի չէ։ Այլ եկեղեցիք ոչ են պարգևք թագաւորաց, և ոչ արուեստ ճարտարութեանց, և ոչ գիւտք իմաստնոց, և ոչ աւար քաջութեան զինուորաց, և ոչ պատիր խաբէութիւնք դիւաց. նա՛ և բնաւ իսկ ամենևին, զինչ և ասասցես յերկրաւորաց կամ ի վերնոց կամ ի վատթարաց, բնաւ ուրեք եկեղեցի ի նոցանէ ոչ գոյի։ Այլ շնորհք են մեծին Աստուծոյ, ոչ միում ումեք ի մարդկանէ տուեալ, այլ ամենայն բանաւոր ազգաց, որք վիճակեալք են ի բնակութիւն ի ներքոյ արեգական։ Հիմունք նորա եղեալ են ի վերայ հաստատուն վիմի. ոչ ներքինք շարժել կարեն, և ոչ վերինք դրդուեցուցանել։ Եւ զոր երկինք և երկիր ոչ դողացուցանէ՝ մի՛ ոք ի մարդկանէ խրոխտասցի յաղթել նմա։ Հա՛պա, որով օրինակաւ զինչ կամիս առնել՝ կատարեա՛. պատրաստ եմք ամենեքեան առ ամենայն մեքենայս հարուածոցն տանջանաց, զոր սպառնացար. ոչ միայն ի չարչարել, այլ և ի մեռանել։ Եւ եթէ դարձեալ ևս զնոյն

բանս հալածանս, ի միջէ միջէ լուիցես առաւել քան զդոյն պատասխանի»։

Յայնժամ դառնացեալ քան զլեղի Թագաւորն՝ փլուզանէր անդէն ի փորին գծով կամաւոր մաղձոյն իւրոյ, և ընդ քիթսն և ընդ բերանն առ հասարակ գոլորշի ջերմախառն ելանէր, իբրև ի սաստիկ հնոցէ ծուխ թանձրացեալ։ Եւ առ չհանդուրժել սրբութին իւրոյ՝ կոտորէր զզօրութիւնս մարմնոյն և ծակոտէր զբազմամբեր աման խորհրդոցն, ցրուէր և վատնէր զամենայն խորհուրդ նենգութեան։ Եւ զոր ոչ երբեք կամէր իւրոց սիրելեացն յայտնել՝ ակամայ առաջի ծառայիցն Քրիստոսի մերկանայր և դնէր զամենայն կարգաւ։

Երեքկնէր և չորեքկնէր զանասուն երդումն յարեգակն և ասէր այսպէս. «Ոչ կարէք աւերել զանխար ամուրս իմ, և ոչ որում ցանկացեալդ էք՝ վաղվաղակի տամ գտանել ձեզ. այլ զամենեսեան զձեզ և որ ի գնդիս են՝ չարաչար կապանօք ի Սագաստան տամ անցուցանել ընդ անճանապարհ տեղիս, որ և բազումք ի ձէնջ ի խորշակէ յերթալն սատակիցին, և մնացեալքն անկցին ի բերդս ամուրս և ի բանդս անելս։ Եւ ի ձեր աշխարհն առաքեցից զօրս անթիւս հանդերձ փղօք և զկին և զորդիս ի Խուժաստան տամ խաղացուցանել. և զեկեղեցիս և զոր անուանէք վկայարանս՝ քակեցից, քանդեցից և յապականութիւն դարձուցից. և եթէ ոք ընդդէմ դարձեալ գտցի՝ կոխան եղեալ գազանաց անողորմ մեռանիցի։ Եւ զամենայն ասացեալս արարից և կատարեցից առ մնացորդս աշխարհին»։

Եւ վաղվաղակի հրամայէր զպատուական նախարարսն հանել մեծաւ անարգանօք յերեսաց իւրոց և զգուշութեամբ, հրաման տուեալ պահապետին, առանց կապանաց իւրաքանչիւր վանս պահել։ Եւ ինքն զառածեալ անդրէն դառնայր, անմխիթար տրտմութեամբ յօթեանսն անկանէր։*)

---

*) Թագաւորի խորհրդականներից մէկը, որ ծածուկ քրիստոնեայ էր, խորհուրդ է տալիս հայ նախարարներին, որ իրենց և իրենց հայրենիքն ազատելու համար՝ երեսանց ուրանան քրիստոնէութիւնը։ Այդպէս էլ անում են նրանք։ Թագաւորն ուրախացած՝ մեծ պատիւներ ու պարգևներ է տալիս նրանց և եօթը հարիւր մոգերով ու շատ հեծելազօրով յետ է ուղար-



# ԵՐՐՈՐԴ ՅԵՂԱՆԱԿ·

## ՎԱՍՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ՈՒԽՏԻՆ ԵԿԵՂԵՑՒՈՅ·

I·

Յայնմ ժամանակի քահանայքն, որ անդէն ի զօրուն էին, առ չժուժալ սրտիցն բարկութեան՝ քակեալ որոշեցան ի նախարարացն և յամենայն բազմութենէն և զմի ումն դեսպան ձիով առաքեցին փութապէս յաշխարհն Հայոց։ Գոյժ ի բերան առեալ և զմահս պատմեալ, հասեալ ի ժողովս եպիսկոպոսացն, մեծապէս յարտասուս հարեալ, կայր և պատմէր զամենայն անցս չարչարանացն. այլ ոչ յայտնէր նոցա զծածկութիւն խորհրդոցն։

Յայնմ ժամանակի սփռեցան եպիսկոպոսքն յիւրաքանչիւր իշխանութիւնս և առաքեցին զքորեպիսկոպոսս ի գեօղս և յագարակս և ի բազում ամուրս լեռնային գաւառացն։ Դրդեցին, ժողովեցին զբազմութիւն արանց և կանանց, շինականաց և ազատաց, զքահանայից և զմենակեցաց. խրատ եդին, պնդեցին և արարին զամենեսեան զինուորս Քրիստոսի։

Եւ յառաջին բան խորհրդին այս հաստատեցաւ. «Ձեռն եղբօր հարազատի ի մերձաւոր իւր լիցի, որ անցեալ իցէ ըստ ուխտ պատուիրանին Աստուծոյ. և մի՛ խնայեսցէ հայր յորդի, և մի՛ ակն առնուցու որդի հօր պատուոյն։ Կին կռուեսցի ընդ առն ամուսնոյ, և ծառայ դարձցի ընդդէմ տեառն իւրոյ։ Օրէնք աստուածային կացցեն թագաւոր ի վերայ ամենայնի, և ի նմին օրինաց ընկալցին յանցաւորք զպատիժս դատապարտութեան»։

Եւ իբրև այս այսպէս հաստատեցաւ, կազմեցաւ, երևեցան ամենեքեան զինեալք և սաղաւարտեալք, սուր ընդ մէջ և վահան ի ձեռին՝ ոչ միայն արանց քաջաց, այլ և կանանց առնականաց։

---

կում Հայաստան, հրամայելով որ մի տարուայ ընթացքում մազդեզական կրօնը հաստատեն այնտեղ։ Պարսից բանակի քրիստոնեաները հայ նախարարների ուրացութիւնը տեսնելով՝ սաստիկ յանդիմանում են նրանց և շտապում են այդ մասին լուր ուղարկել Հայաստան։

2.

Իսկ զունդն Հայոց ամենայն օգնականօք հանդերձ և մոգացն բազմութեամբ՝ յամսեանն չորրորդի եկին, հասին յաշխարհն Հայոց, ի գիւղաքաղաք մի մեծ, որում անուն էր Անգղ: Բանակեցան, բոլորեցան, զետեղեցան, և յամենայն կողմանց անդր ժողովեցան, և էին անթիւ բազմութիւն:

Եւ եղև յետ աւուրց քսան և հնգից, մոգպետն ինքն մոգօքն հանդերձ հասանէր մեծաւ զօրութեամբ՝ քակել զդրունս եկեղեցւոյն յաւուր միաշաբաթուն. զփորձ առնուլ կամէր զառաջարկութեան գործոյն: Իսկ սուրբ Ղևոնդ երէց միաբանութեամբ առաջին խորհրդակցօքն և բազում ուխտիւ ի տեղւոջ անդ պատրաստական դիպեցաւ, ոչ ետ թոյլ: Թէպէտ և ոչ էր տեղեկագոյն մըտաց ամենեցուն նախարարացն և ոչ զօրութեան ուժոյ մոգպետին, ոչ ինչ եկաց, միայն ամենայն եպիսկոպոսացն և ոչ ա սակաւ մի համբեր անօրէն իշխանին թողացուցանել. այլ բազում աղմուկ աղաղակի զօրացն և մոգաց հասուցանէր: Քանզի վիրգս ի ձեռն առեալ՝ զկառափունս մոգացն և մոգպետին ջարդեցին. փախստական յիւրաքանչիւր վանս արկանէին, և ինքեանք զպաշտօնն բարձրացուցեալ յեկեղեցւոջն՝ զտէրունական կանոնն կատարէին, մինչև յերեկոյն միաշաբաթին անդադար լինելով:

Եւ յետ այսր տագնապի խռովութեան՝ յամենայն կողմանց յաշխարհէն Հայոց բազմութիւն արանց և կանանց ի տեղին հասանէին: Եւ անդ էր տեսանել զմեծ աղէտ տարակուսին. ոմանք զգերարտօսր արձակելով իբր յաղբերականց հոսէին յաչաց իւրեանց, այլք բարձրաձայն աղաղակաւ իբր այն թէ զերկինս դողացուցանէին, իսկ կէսքն խիզախելով և ի զէնս ընթանալով՝ զմահ քան զկեանս ընտրէին: Իսկ ոմանք ի սուրբ ուխտէ եկեղեցւոյն զաւետարանն ի ձեռն առեալ՝ աղօթիւք առ Աստուած կարդային, և այլք ըղձանային զպատառումն երկրին, զի անձանց լիցի գերեզման: Եւ այսպէս շտապ տագնապի ի վերայ մոգպետին հասուցանէին: Բազում անգամ աղաչէր զօգնականսն իւր, զի ի մահուանէ կարասցեն զնա ապրեցուցանել և ողջանդամ անդէն յարքունիս հասուցանել:



Այլ վասն գործոյն, յոր եկեալն էր, ստիպէր զնոսա և ասէր. «Թող գրեմ և ցուցանեմ մեծ թագաւորին, զի ի բաց թողացուցանէ զայսպիսի իրաց առաջարկութիւն. զի եթէ և ինքեանք աստուածքն եկեսցեն յօգնութիւն, չէ հնար օրինացս մոգութեան ի Հայս առնուլ զհաստատութիւն, որպէս զփորձ առի զմիաբանութեան ուխտին եկեղեցւոյ: Զի թէ էին զօրք աշխարհիս մօտք, ոչ ինչ խնայէին սոքա ի նոսա սատակմամբ՝ ոչ միայն զարտաքինսն, այլ և յեղբարս և յորդիս և յամենայն մերձաւորս իւրեանց, նաև ոչ յանձինս իւրեանց: Մարդք, որ ոչ ի կապանաց զանգիտեն, և ոչ ի տանջանաց երկնչին, և ոչ ի ստացուածոց պատկառին, և որ յետին չար է քան զամենայն չարիս՝ զմահ քան զկեանս ընտրեն, ո՞վ է որ կարէ նոցա դիմակաց լինել»: *)

3.

Եւ անդէն հրոս հանեալ ի Սիւնեաց աշխարհէն՝ զիւր գունդն ստուարացոյց ի թիկունս օգնականութեան մոգաց և մոգպետին: Եւ ապա սկսաւ ասել. «Աղէ՛ դու անգամ մի հրովարտակ ի Դուռն տուր վասն այրուձիոյն, որ յԱղուանսն է տասն հազար, զի ի ձմերոց ի Հայս եկեսցեն. և յորժամ զնոսա ի ձեռին ունիցիմք, չիք ոք, որ եղծանել կարէ զհրամանն արքունի»:

Պատասխանի ետ մոգպետն և ասէ ցմարզպանն. «Այդ խորհուրդ դարձեալ իմոց բանիցս ընդդէմ է. քանզի մեք յորժամ բռնութեամբ կռուեսցուք ընդ աշխարհիս, աշխարհս ի բաց քանդի, և մեք ի պատուհասէ չապրիմք, անձանց վնաս, և արքունի մեծապէս զեան»:

Եւ ոչ ինչ կամեցաւ ամենևին ունկն դնել նմա մարզպանն, զի սրտի մտօք կալեալ էր զպարսկական օրէնսն: Սկսաւ այնուհետև պատրել զոմանս կարասեաւ և զոմանս ողոքական բա-

*) Մոգպետը յուսահատուած՝ ուզում է գրել Թագաւորին, որ յետ կենայ բռնի կրօնափոխութեան մտքից. բայց Վասակը քաջալերում է նրան, որ համբերի, մինչև որ ինքը կարողանայ ուժ հաւաքել՝ Թագաւորի հրամանը կատարել տալու համար:

նիւք. զաւմիկն ամենայն՝ անեղ բանիւք սպառնացեալ սրտաթափ առնէր: Հանապազորդ առատացոյց զռոճիկն տաճարին և յերկարէր զնուագս ուրախութեան, մաշելով զերկայնութիւն գիշերացն յերգս արբեցութեան և ի կաքաւս լկտութեան. քաղցրացուցանէր ոմանց զկարգս երաժշտական և զերգս հեթանոսականս. մեծապէս գովութիւն մատուցանէր օրինաց թագաւորին: Բերեալ էր և յարքունուստ բազմութիւն կարասւոյ և միում միում կաշառ գաղտ խթէր ի պատճառս պարգևի և պատուոյ. և բազում նենգութեամբ զանմեղ մարդիկ հրապուրէր և յինքն արկանէր:

Սկսաւ բաշխել մոգս ի տունս նախարարացն և մեծամեծ ռոճիկս կարգել, զոհել պատրուճակս և բռնաբար կնքաւոր մարդկանն տալ ուտել միս յազածոյ և երկիր պագանել արեգականն: Իբրև սկսաւ բազմանալ ընդ ամենայն աշխարհն այնպիսի պղծագործ խառնակութիւն, յանդգնեցան և եռ կանայք փշտիպանացն յաւուր կիւրակէի անցուցանել զճրագալոյս եկեղեցւոյն և պատուել զհանդերձս հաւատաւոր կանանցն:

4.

Զայս զուժկան ազդի իբրև տ'սին միաբան սուրբ եպիսկոպոսունքն, զաւետարանն ի ձեռն առեալ հասին և անկան առանց հարցանելոյ ի վանս սպարապետին, ուր ժողովեալ էին զօրքն Հայոց: Համբարձին զձայնս իւրեանց և ասեն. «Աղաչեմք զձեզ զամենեսեան սուրբ աւետարանաւս. եթէ ձերով խորհրդիւ գործէ զայն անօրէնութեան չարիս մարզպանն և մոգպետն, նախ զմեր պարանոցս հատէք, և ապա յեկեղեցին ձեռնարկեցէք: Ապա թէ առանց ձեր կամաց նոքա զայն չարն գործեն, ա'յսօր խնդրեսցի վրէժդ այդ ի նոցանէ»:

Իսկ որք էին ի ներքս ի վանս սպարապետին՝ յոտն կացին, միաբան համբարձին զձայնս իւրեանց առ Աստուած և ասեն. «Դու Տէ'ր որ գիտես զամենեցուն, ոչ ինչ պիտոյ քեզ վկայութիւն ի մարդկանէ. եթէ խոտորեալ իցեմք ի քէն սրտի մտօք, զայն դու ինքնին քաջ գիտես. այսօր իսկ դատեա' զմեզ ըստ մեղաց մերոց: Ապա եթէ հաստատուն կամք յուխտի սուրբ



աւետարանիս, դու Տէ՛ր, լեր մեր օգնական այսօր և տուր զթըշնամիսն ճշմարտութեան ի ձեռս մեր, զի արասցուք ընդ նոսա ըստ կամաց քոց սրբոց»:

Զայս իբրև ասացին, ամենեքեան զգլուխ զգետնի հարկանէին, և ողջունեցան յաւետարանէն և յեպիսկոպոսացն: Իսկ մի ոմն ի նախարարացն, որ անդր դիպեցաւ, էր ի նոցա խորհրդի և ոչ միաբանեաց ընդ նոսա ի մեծ վկայութիւնն. և անդէն առժամայն ի նոցունց ի տեղւոջն քարկոծեցաւ, և ահ մեծ անկաւ ի վերայ ամենեցուն

Յայնժամ ամենեքեան ի նախանձ բարկութեան բրդեցան, մինչև ամենայն տեսողացն երիկամունքն դողային, որք առ ոչ ինչ համարեցան զպարգևս արքունի և առ ոտն հարին զհրամանս անօգինս: Ընթացան վաղվաղակի ի զէնս իւրեանց, վառեցան, կազմեցան զգիշերն ամենայն և ընդ ծագել արեգականն զգունդն յերիս մասունս բաժանեալ՝ ի բանակն արկանէին: Գունդն առաջին յարևելից կուսէ, և գունդն երկրորդ յարևմտից կողմանէ և գունդն երրորդ ի հիւսիսոյ կողմանէ, շուրջանակի ի մէջ առեալ փակեցին զբազմութիւն բանակին. և զբագինս կոտորեցին և զնա բազմադոյնս կապեցին զերևելի մարդիկ և արկին ի բերդս ամուրս ընդ իւրեանց իշխանութեամբ: Եւ զառ և զապուռ, զաւար բանակին ի մի վայր ժողովեալ՝ պահէին իբր հրամանաւ արքունի:

Իսկ մարզպանն ձերբակալ արարեալ, և միաբանէր ընդ նոսա երդմամբ՝ հաստատուն կալ յուխտին, զղջանայր զառաջին քակումն ի նոցանէ: Անկանէր ապաշխարութեամբ յոտս սուրբ եպիսկոպոսացն և աղաչէր խաղաղատելով, զի մի' մերժեալ ընկեսցի առ ի նոցանէ: Կրկնէր և երեքկնէր զանսուտ երդումն առաջի բազմութեանն ի սուրբ աւետարանն. գրէր և կնքէր զերդումն և կապէր զաւետարանէն. և աղաչէր, զի յԱստուծոյ խնդրեսցի վրէժխնդրութիւնն, և մի' նոքա մարդկաբար սատակեսցեն զնա: Իսկ նոքա թէպէտ և հաստատեալ գիտէին զնենգութիւն կեղծաւորութեանն նորա, և եթէ խաբէութեամբ դառնայ անդրէն ի հին մոլորութիւնն,—ոչ ինչ փոյթ առնէին ձեռն արկանել ի նա վասն առաջին յանցանացն, այլ սուրբ աւետարանին թողին ի դատապարտութիւն:

Իսկ որք եկեալ էին յաւարի առնուլ զուրբ դանձն եկեղեցւոյն, ակամայ եդին զանձինս և զաւար իւրեանց առաջի սուրբ եպիսկոպոսացն և ամենայն զօրացն. և եղծեալ ապականեցաւ հրաման Թագաւորին։ Եւ յաջողեալք զօրութեամբն Աստուծոյ՝ աղաղակէին և ասէին գոհանալով արք և կանայք և ամենայն ռամիկ բազմութիւնն. «Պատրաստ եմք ի հալածանս և ի մահ և յամենայն նեղութիւնս և ի չարչարանս վասն սուրբ եկեղեցեաց, զոր աւանդեցին հարքն մեր առաջինք»։

Ոչ երևէր այնուհետև առաւել տէրն քան զծառայ, և ոչ ազատ փափկացեալ քան զգեղջուկ վշտացեալ, և ոչ ոք քան զոք նուազեալ յարութենէ։ Մի սիրտ յօժարութեան ամենեցուն արանց և կանանց, ծերոց և տղայոց և ամենայն միաբանելոց ի Քրիստոս։ Քանզի առ հասարակ զմի զինուորութիւն զինուորեցան, և զմի ագան զրահ հաւատոց պատուիրանին Քրիստոսի. միով զօտեաւ ճշմարտութեան պնդեցին զմէջս արք և կանայք։

Ընկեցեալ կայր այնուհետև ոսկի, և ոչ ոք առնոյր իւր առանձինն արծաթ, և արհամարհեալ առանց ագահութեան, անարգեալ պատուական հանդերձք առ ի զարդս մեծարանց։ Նա՛ իւրաքանչիւր ստացուածք ոչ ինչ համարէին յաչս իւրեանց ըստացողին։ Տեսանէին զանձինս իւրեանց իբրև զմեռեալ դիակունս, և զիւրաքանչիւր գերեզմանս ինքեանք փորէին, և կեանք իւրեանց ի մահ համարեալ էին, և մահ իւրեանց անշուշտ կեանք։

Բայց այս բարբառ ստէպ ստէպ ընթանայր. «Քաջութեամբ միայն մեռցուք, զանուն և զոգիս և եթ ժառանգեսցուք, զի կենդանի իցէ ի մեզ Քրիստոս, որում դիւրին է միւս անգամ նորոգել զմեզ ի հողոյ և զամենայն զյառաջագոյն զննջեցեալսն, և հատուցանել իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց»։

Յայնմ ժամանակի դարձեալ յարձակեցան ի վերայ բերդիցն և աւանաց, զոր ունէին Պարսիկքն ի տեղիս-տեղիս, յամրոցս աշխարհին. տապալէին, քանդէին զբնակութիւնս նոցա։ Առաջին զմեծն Արտաշատ հանդերձ աւանօք իւրովք. և առնուին զանմատոյց ամուրսն՝ զԳառնի քաղաքն, զԱնին, զԱրտա-



գերս և զաւանս իւրեանց. զԵրկայնորդսն և զԱրհնին և զաւանս իւրեանց. զԲարձրաբերդն, զԾորանիստն, զՄխանիստն, զանկասկածելի Ողականն և ընդ նոսա և զաւանս իւրեանց. զԱրփանեալն, զՎանն աւան, ընդ նմին և զաւանսն իւր. զԳոեալն և զԿապոյտն, զՍրատն և զՎասակաշատն։

Զամենեսին զայս իւրաքանչիւր դեղիւք և ագարակօք, զօրօք և զօրագլխօք ի նմին ամի առեալ տապալեցին և ի գերութիւն վարեցին զարս և զկանայս ընչիւք և ստացուածովք, հանդերձ պատուական զանձիւք և նոցին սպասուք։ Տապալէին, քանդէին զշինուածս նոցա և այրէին, կիզուին զտունս պաշտօնարկի և պաշտաման կրակի։ Սրբէին զպղծութիւն կռապաշտութեանցն և առնուին զկահ և զկազմածս ատրուշանացն, բերէին և դնէին ի սուրբ եկեղեցւոջն և ի ձեռն սուրբ քահանայիցն նուիրէին ի սպասաւորութեան սեղանոյն։ Եւ փոխանակ սնոտի պաշտամանցն, զոր տապալեցին յամենայն տեղիս հեթանոսացն, զփրկական խաչն Քրիստոսի կանգնէին, զամենասուրբ սեղանն ուղղէին և զկենդանարար խորհուրդն կատարէին սրբութեամբ. պաշտօնեայս և քահանայս ի տեղւոջն կացուցանէին։ Յուսով հաստատեալ խնդայր ամենայն երկիրն առհասարակ։ *)

5.

Իսկ իբրև զայս կատարեցին և արարին իւրեանց մեծապէս հաստատութիւն և դեռ անդէն ի տեղւոջն զետեղեալ էին խաղաղութեամբ, գուժկան հասանէր յաշխարհէն Հայոց, զճակատ հարեալ

---

*) Աղուանները պատգամաւորներ ուղարկելով հայերից օգնութիւն են խնդրում պարսիկների դէմ։ Հայերն իրենց առանձին պատգամաւորութեամբ օգնութիւն են խնդրում Հոռոմներից։ Ապա հայ զօրքը երեք գնդի են բաժանւում. մէկը Ներշապուհ Ռըմբոսեանի ձեռով ուղարկւում են Ատրպատականի սահմանները. մէկը Վարդան զօրավարի ձեռով գնում է աղուաններին օգնելու. իսկ միւսը տալիս են Վասակ Սիւնուն, որ պիտի մնար աշխարհի ներսում։ Վարդանն Աղուանից երկրում յաղթում է պարսիկներին, առնում աւերում է նոյն իսկ Ճորայ պահակը և դաշինք կապում Հոների հետ։ Բայց այդ միջոցին Վասակը դաւաճանում է։

և զօձիս պատառեալ վասն ապստամբին Վասակայ. «Յետս կացեալ յուխտէն քրիստոնէութեան և աւերեալ զբազում տեղիս Հայոց աշխարհին, մանաւանդ զձմերոցս արքունի, որ կայանք զօրացն էին, զԳառնին և զԵրամայիս և զԴրասխանակերտն՝ զՄեծ Դաստակերտն, զՎարդանաշատն և զամուրն Օշական, զփառախոտն, զՄարդեանսն, զՑոլակերտն աւան և զբերդն Արմաւրի, զԿուաշն աւան, զԱրուճն, զԱշնակն և զամենայն տուն Արագածու, և զնահանգն Արտաշատու և զԱրտաշատն ինքնին զլխովին, և զամենայն գիւղս և գաւառս, որ շուրջ զնովաւ էին. առեալ, աւերեալ և հրձիգ արարեալ, և զամենեցուն ձեր զընտանիս փախուցեալ, մերժեալ յիւրաքանչիւր բնակութենէ։ Ձեռն արկեալ և ի սուրբ եկեղեցիսն, տարեալ և զսուրբ սպաս եկեղեցւոյն սեղանոյ. գերի վարեալ զընտանիս քահանայից և զնոսին կապեալ և եդեալ ի բանդի. և ինքն սփռեալ, տարածեալ ապստամբաւ աւերէ զերկիրն ամենայն։ Եւ զունդն, որ էր ի կողմանս Ատրպատականի, ոչ ժամանեաց ձեռն տալ ի մէջոց աշխարհին։ Եւ զօրքն, որ անդ մնացեալ էին, խոյս տուեալ յանօրինէն՝ մերժեցան յեզր աշխարհին և դեռ պահեն ընդ ձեզ զուխտ միաբանութեան սիրոյն Քրիստոսի։ Բայց այն որ ընդ նմայն էին՝ են ոմանք, որ փախեան յիւրաքանչիւր տեղիս, և բազումք այն են, որ զհետ մոլորեցան նորա ամբարշտութեանն»։

Զու արարեալ ի տեղւոջէ անտի՝ դառնալ անդրէն յաշխարհըն Հայոց մեծաւ ստիպով և բազում աւարաւ և անչափ մեծութեամբ. և անտրտում ուրախութեամբ երգս ի բերան առեալ և աւէրն ձայնիւ. «Խոստովան եղերուք Տեառն, զի բարի է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա. ո՞ եհար զազգս մեծամեծս և սպան զիշխանս հզօրս, զի բարի է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա»։ Եւ զայս սաղմոս երգելով մինչև ի վախճան՝ կատարեալ աղօթիւք փառատրութիւն սուրբ Երրորդութեանն մատուցանէին, անդ յանձանձէր, ածէր զօրավարն զկայ և մնայ զօրականին՝ առաջապահօք և վերջապահօք, կողմապահօք ողջ և առողջ հասուցեալ յաւուրս երեսուն մերձ ի սահմանս հայրենի աշխարհին։

Ազդ եղև ուրացելոյն Վասակայ և իշխանացն, որ ընդ նմա էին, քաջութիւն նահատակութեան գնդին Վարդանայ յաշ-



խարհին Աղուանից և միաբանութիւնն ևս Հոնաց։ Մինչչև յանգիման եղեալ էին միմեանց, դգիշեր մի օգնական գտեալ նորա՝ փախստեայ անկանէր յամուրս իւրոյ աշխարհին։ Եւ այնպէս տագնապաւ մերժեցաւ. զգերի և զաւարն, զոր առեալ էր յԱյրարատ գաւառէ, ակամայ զիւրն ևս ի վերայ եթող և փախեաւ։

Եւ քանզի ժամանակ ձմերայնւոյ հասեալ էր, և զտաճիկս՝ թշնամեաց գնդին հարեալ էր, ոչ կարէր զմիով տեղեաւ համագունդ զզօրսն գումարել. այլ սփռէր, տարածանէր ընդ գաւառս գաւառս աշխարհին առ ի հանգիստ ձմերոցի։ Պատուէր հրամանի տայր պատրաստական լինել կազմութեամբ առ ժամանակ գարնայնոյն։ Եւ զաւկաւս ի գնդէն յաւագ նախարարացն գործակից իւր թողեալ, բռնանայր ի վերայ՝ ունելով զթագաւորանիստ տեղիսն։

Եւ զունդս զունդս արձակէր յաշխարհն Սիւնեաց, առնոյր և աւերէր զբազում գաւառս. և այնպէս ի նեղ արկանէր զնա և զամենայն զօրսն, որ ընդ նմա էին, զի զէշս և զձիս մեռելոտիս առ սովոյն վտանգի անխտիր ուտէին։ Եւ բազում հարուածս հասուցանէին ի վերայ ուրացելոյն, մինչև ժողով սուրբ եպիսկոպոսացն և ամենայն ուխտ քահանայութեանն դառնապէս արտասուս իջուցանէին ի վերայ չարաչար վշտացելոցն, որ բոկ և հետի վարէին զարս և զկանայս փափկասունս. և բազում տղայք զքարի հարեալ ընկեցան յանցս ճանապարհաց։ 1)

---

1) Այս պարսից կապուած իշխաններից մէկին արձակելով՝ ուղարկում են Թագաւորին յայտնելու, թէ կատարուած դէպքերի պատճառը Վասակն է, որ խաբել է նրան, թէ հայերը կընդունեն մոգութիւն։ Վասակն էլ իր կողմից մարդիկ է ուղարկում և մեղքը ձգում եկեղեցականների վրայ։ Թագաւորը տեսնելով իրերի դրութիւնը՝ մի առժամանակ կրօնի ազատութիւն է տալիս. բայց երբ իմանում է, որ հոնները ոչ մի ձևով չպիտի օգնեն քրիստոնեաներին՝ նորից միտքը փոխում է և բազմաթիւ գնդերով Հայաստան է ուղարկում իր տէրութեան ընդհանուր հրամանատար Միհրներսեհին, որ գալով Հայոց սահմանները՝ բանակ է դնում Փայտակարան քաղաքում։

## ՉՈՐՐՈՐԴ ՅԵՂԱՆԱԿ·

### ԵՐԿՊԱՌԱԿՈՒԹԻՒՆ ԲԱԺԱՆԵԼՈՅՆ Ի ՍՈՒՐԲ ՈՒԽՏԷՆ·

Այս անօրէն Միհրներսեհ, քանզի յառաջագոյն տուգեալ գիտէր զամբարշտութիւնն Վասակայ, և յայնմ ժամանակի եւս յղէր և կոչէր զնա առ ինքն։ Որպէս նորա իսկ յառաջագոյն զատեալ և որոշեալ էր ի միաբանութենէն Հայոց, եկն և յանդիման եղև. և տուգէր զիւր հաւատարմութիւնն և զՀայոց անիրաւ ապստամբութիւնն։ Յաւել և պատմաց եւս առաւելաբանութեամբ՝ զոր ինչ ոչ էր գործեալ Հայոց, և կամէր ընտանեբար ընդ միտ մտանել անօրինին։

Բայց նա թէպէտ և ի ներքոյ յոյժ գուրովէր զնա, այլ արտաքին դիմօք մեծարեաց և եդ առաջի նորա զմեծամեծ պարգևս երկրաւորս։ Եւ խոստացաւ նմա իշխանութիւն աւելի քան զոր ունէրն, և հայեցոյց զնա ի կարծիս սնոտիս, որ ի վեր էր քան զիւր տէրութիւնն· իբր թէ անկ իցէ նմա հասանել մինչ ի թագաւորական վիճակն. բայց միայն հնարս իրացն խնդրեացէ, թէ ո՛րպէս քակտեսցի միաբանութիւն ուխտին Հայոց, և թագաւորին կամքն կատարեսցին յաշխարհին։

Եւ իբրև յանձն էառ զամենայն ինչ՝ երթալ զկնի կամացն նորա, գիտաց և ծերն զառնացեալ, եթէ թմրեալ և ցնորեալ և քակեալ է ի հաստատութենէ միաբանելոցն. յոյժ մխիթարեցաւ ի միտս իւր տրտմեալս և ած զմտաւ, թէ և զամենեսեան այսպէս կարիցեմք որսալ յանգիւտ կորուստն։ Եւ իւրոյ հնարագիտութեանն տայր զանիմաստութիւն առնն. և այնմ ոչ էր տեղեակ, թէ նա իւրովի զիւր անձն զատեալ և որոշեալ է ի սուրբ եկեղեցւոյն, հեռացեալ և օտարացեալ ի սիրոյն Քրիստոսի։

Ձեռն արկ կամակորութեամբ և եմուտ յորդեգրութիւն դիւապաշտութեանն և եղև աման չարին, և ելից զնա սատանայ ամենայն խորամանկութեամբ։ Ի ձեռն էառ իբրև զվահան, և ագաւ զնա իբրև զզրահս, և եղև իբր զինուոր կատարեալ կամաց նորա։ Մարտեաւ հնարիւք ընդ իմաստունս և յոյժ խորագիտութեամբ ընդ գիտունս, յայտնի ընդ անմեղս և ի ծածուկ ընդ խորհրդականս. ձեռն էարկ և եհան զբազումս ի



գնդէն Քրիստոսի և խառնեաց ի դունդս դիւաց։ Եւ ի բազում յայլ տեղիս գողաբար սողեցաւ և եմուտ իբրև զօձ ի մէջ ամրացելոցն. և խրամ հատեալ յափշտակեաց և էառ և եհան յայտնութեամբ զբազումս յազատաց և զբազմագոյնս ի շինականաց և զայլ ոմանս յանուանեալ քահանայից։

Եւ ժողովեաց զամենայն գայթակղութիւն և արար գունդ զօրաց բազմաց. գրեաց և եցոյց զբազումս ի նոցանէ յականէ յանուանէ մեծ հազարապետին, և զիւր քաջութիւն արութեանն, մեծապէս պարծելով՝ որպէս աշակերտեաց ի մոլորութիւն խաբէութեան, և բաժանեալս և երկցեղս երևեցոյց զզօրսն Հայոց։

Եւ իբրև այս ամենայն չարիք յաջողեցան նմա, քակեաց և զմիաբանութիւն աշխարհին Վրաց ի Հայոց և Աղուանիցն ոչ ետ յառաջ խաղալ. և զաշխարհն Աղձնեաց ըստ նմին իսկ օրինակի յետս կալաւ։ Գրեաց հրովարտակ և աշխարհին Յունաց, ցուցանելով նոցա այլ ընդ այլոյ սուտութեամբ, առ այր մի, որոյ Վասակ անուն էր, յայնց Մամիկոնենից, որ կան ի ծառայութեան Յունաց։ Եւ ի թշուառութեան ժամանակին այրն այն ըսպարապետ էր սորին Հայոց և հաւատարիմ զօրացն Հոռոմոց ի սահմանին Պարսից և արտաքոյ էր օրինացն Աստուծոյ գործովք իւրովք։ Եգիտ այս Վասակ զայն Վասակ իւր գործակից ի մեծամեծ չարիսն, յոր միաբանեցին երկոքեանն։

Գրէր նա և ցուցանէր հանապազորդ, իբր թէ ամենայն Հայք զկնի իւր միաբանեցին։ Եւ զնոյն գիր մեծաւ զգուշութեամբ ներքին Վասակն տայր տանել ի Թագաւորանիստ քաղաքն կայսեր. մինչև զսուրբ եպիսկոպոսացն զմիտս եւս ուծացոյց ի նոցանէ և զամենայն զօրսն Յունաց յերկբայս արար յուխտէն։

Սոյնպէս առնէր և ընդ ամենայն կողմանս ամրականաց աշխարհին, ի Տմորիսն և ի Կորդիսն, յԱրցախ և յԱղուանսն, ի Վիրս և յաշխարհն Ծաղտեաց. յղէր, պնդէր, զի ապնջականութեան ոք արժանի մի արասցէ։

Եւ ըստ մեծի չարութեան նորա առաւել եւս ժամանակն երէր նմա զյաջողութիւն իրացն. զի ամենևին արտաքուստ օգնական ոք ոչ գտաւ գնդին Հայոց, բաց յայնց Հոնաց, որոց բանս եդեալ էր։ Սակայն և վասն նոցա կուտեաց զբազում այլ-

րուձին Արեաց, արգել և փակեաց զգլուխս ելի նոցա· քանզի ոչ տայր դադար ամենևին Թագաւորին Պարսից· այլ յղէր և կոչէր զզունդս բազումս ի պահակն Ճորայ։

Զայս ամենայն իբրև արար և կատարեաց ըստ հրամանի Թագաւորին, օր ըստ օրէ գրէր և ցուցանէր մեծ հազարապետին Պարսից, որ ղօղեալ և Թաքուցեալ էր ի քաղաքն Փայտակարան։ Համարձակեցաւ այնուհետև և նա ցուցանել զինքն բազում ազգաց· է՛ր որոց ահ արկանէր, և է՛ր որոց սիրով պարգևս բաշխէր։ Կոչէր առ ինքն զՎասակ և որք ընդ նմա իշխանքն ամենեքեան, բազում պարգևս շնորհէր նոցա յարքունուստ և զօրացն, որ ի նորա բանի էին։ Տարեալ էր զառաջեաւ և զուրացեալ երիցունսն· ցուցանէր, հաստատէր և յայտ առնէր, եթէ սոքօք որսացայց զնոսա՝ քակտել ի միաբան ուխտէն։ Իսկ հազարապետն իբրև զայն լսէր, յոյժ շնորհակալ լինէր երիցանցն և յոյս առաջի դնէր նոցա· «Եթէ լիցի մեր յաղթութիւնդ, զայլոց քահանայիցս կեանս դոցա շնորհեցից և զմեծ վաստակ դոցա ցուցից Թագաւորին»։

Եւ այսպէս շարժեաց և շփոթեաց զաշխարհն Հայոց, մինչև զբազում եղբարս հարազատս քակեաց ի միմեանց· ոչ եթող միաբան զհայր և զորդի և ի մէջ խաղաղութեան արար խռովութիւն։

Զայս ամենայն չարիս իբրև ետես ի նմա Միհրներսեհ, քան յանձն իւր՝ առաւել ի նա էր յուսացեալ։ Հարցանէր և ստուգէր, թէ քանի՛ այր կայ ի Հայոց աշխարհին ի գնդին Վարդանայ ընդ ամենայն բազմութիւնն։ Իբրև լուաւ ի նմանէ, թէ աւելի քան զվաթսուն հազար են, խնդրէր ևս տեղեկութիւն վասն իւրաքանչիւր անձին քաջութեան, և կամ քանի՛ այն ոք իցեն, որ սպառազէնքն իցեն, և կամ քանի՛ այն ոք իցեն, որ մերկ առանց զինու աղեղնաւորք իցեն· սոյնպէս և վասն վահանաւոր հետևակացն։

Եւ իբրև զայս ամենայն տեղեկացաւ ի նմանէ, կոչէր զամենայն զօրագլխեանն, պատուէր հրամանի տայր ամենեցուն յանդիման նորա, զի խրատու նորա լուիցեն ամենեքեան։ Եւ զամենայն զօրսն զօրագլխօքն հանդերձ յանձն առնէր առն միում յաւագացն, որում անուն է Մուշկան Նիսալաւուրտ



Եւ ինքն խաղայր, անդրէն գնայր յերկիրն արևելից· և յանդիման եղեալ մեծի Թագաւորին՝ պատմէր զամենայն անցս իրացն· զիւր հնարաւոր իմաստութիւնն և զՎասակայ խաբեբայ պատրանս հայթայթանացն, որպէս զառաջինն զիւր զամբարշտութիւնն կամեցաւ ծածկել այնու, զի քակեալ երկպառակեաց զզունդն Հայոց։ Իբրև լուաւ զայս ամենայն Թագաւորն ի բերանոյ մեծ հազարապետին, դառնացաւ յանձն իւր և ասէ անսուտ երդմամբ· «Եթէ ապրեսցի անօրէնն այն ի մեծ պատերազմէն, մեծաւ անարգանօք տամ ըմպել նմա զբաժակն դառնութեան մահու»։

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՅԵՂԱՆԱԿ·

### ՅԱՐՁԱԿՈՒՄՆ ԱՐԵՒԵԼԵԱՅՑ·

I·

Մեծ է սէրն Աստուծոյ քան զամենայն մեծութիւն երկրաւոր և այնպէս աներկիւղս առնէ զմարդիկ՝ իբրև զանմարմին զօրս հրեշտակաց, որպէս անդստին ի սկզբանէ է տեսանել զբազումս բազում անգամ ի բազում տեղիս։ Մարդիկ, որ սիրովն Աստուծոյ իբրև զինու վառեալք էին, ոչ ինչ խնայեցին զանգիտելով իբրև զանարի, գոլով վատասիրտք, կամ ի մահ անձանց, կամ յափշտակութիւն ընչից, կամ ի խողխողումն սիրելեաց, կամ ի գերութիւն ընտանեաց, ելանել ի հայրենի երկրէն և անկանել ի ստրկութիւն, յօտարութեան· առ ոչինչ համարեցան զայս ամենայն անցս չարչարանացն, այլ միայն միաբան կալ ընդ Աստուծոյ, զի ի նմանէ միայն մի՛ զերի ելցեն· և ամենայն երևելի մեծութեանս զնա բաւական համարեցան՝ ընտրեալ ի միտս իւրեանց։ Եւ զուրացութիւնն մեռելութիւն վարկանէին, զմահ վասն Աստուծոյ՝ անանց կենդանութիւն, և ծառայել յերկրի՝ ազատութիւն կենաց իւրեանց, և ընկենուլ զանձինս յօտարութիւն՝ ընդ Աստուծոյ զիւտից· որպէս յայսմ ժամանակի տեսաք աչօք մերովք, զի զնոյն նահատակութիւն նահատակեցաւ և աշխարհս Հայոց։

Քանզի իբրև ետես մեծն Վարդան զերկպառակութիւն աշխարհին իւրոյ, ոչ ինչ թերահաւատութեամբ զանգիտեաց։ Թէպէտ և ստուգեալ գիտաց զբազմաց այլոց ես զերկմտութիւն, որ դեռ ես ընդ նմա միաբանեալք էին՝ քաջալերեցաւ յանձն իւր և քաջալերեաց զզօրսն իւր. քանզի ինքն իսկ բռնացեալ ունէր զթագաւորանիստ տեղիսն միաբանութեամբ նախարարացն, որ ոչ քակեցան ի սուրբ ուխտէն։ Հ ամսն տուեալ ամենայն զօրացն ժողովել յԱրտաշատ քաղաք. փոխանակ յետս կացելոցն, որ եղին զհետ իշխանին Սիւնեաց, զեղբարս կամ զորդիս կամ զեղբարցն որդիս ի տեղիս նոցա մատուցանէր և զիւրաքանչիւր զօրս տայր նոցա, զի դեռ ես ինքն ունէր զամենայն աշխարհն։

Եւ փութով ամենեքեան ի տեղի պատերազմին եկեալ հասանէին իւրաքանչիւր զօրօք և ամենայն պատրաստութեամբ, նոքա և որ բունքն հաստատուն կացեալ էին ի տեղւոջն. Ներշապուհ Արծրունի, և Խորէն Խորխոռունի, և ինքն Սպարապետն, և Արտակ Պալունի, և Վահան Ամատունի, և դունդն Վահևունեաց, և Թաթուլ Դիմաքսեան, և Արշաւիր Արշարունի, և Շմաւոն Անձաւացի, և Տաճատ Գնթունի, և Ատոմ Գնունի, և Խոսրով Գաբեղեան, և Կարէն Սահառունի, և Համայեակ Դիմաքսեան, և միւս ես այլ Դիմաքսեան Գազրիկ, և Ներսեհ Քաջբերունի, և Փարսման Մանդակունի, և Արսէն Ընձայացի, և Այրուկ Սլկունի, և Վրէն Տաշրացի, և Ապրսամ Արծրունեացն, և Շահխոռապետն արքունի, և Խուրս Սրուանձտեաց, և Քողեանքն, և Ակէացիքն, և Տրպատունիքն, և զօրքն Ռշտունեաց, և ամենայն գործակալքն արքունի իւրաքանչիւր զօրօքն հանդերձ։

Սոքա ամենեքեան համագունդք հասանէին ի գործ պատերազմին ի դաշտն Արտազու, և լինէր հանդէս համարուն վաթսուն և վեց հազար այր ընդ հեծեալ և ընդ հետևակ։

Եկին ընդ նոսա սուրբքն Յովսէփ և Ղևոնդ երէց, բազում և այլ քահանայք և ես բազմագոյն պաշտօնեայք։ Քանզի ոչ ինչ զանգիտեցին և նոքա գալ ընդ նոսին ի գործ պատերազմին. զի ոչ եթէ մարմնական համարէին զկռիւն, այլ հոգևոր առաքինութեան. ցանկային մահակից լինել քաջ նահատակացն։



2·

Սկսաւ սպարապետն խօսել միաբանութեամբ նախարարացն ընդ զօրսն և ասէ. «Բազում պատերազմունս մտեալ է իմ, և ձեր ընդ իս. է՛ ուրեք, զի քաջապէս յաղթեցաք թշնամեացն, և է՛ ուրեք, զի նոքա մեզ յաղթեցին. և բազում այն է, որ յաղթող գտեալ եմք և ոչ յաղթեալք։ Եւ միանգամայն այն ամենայն էին մարմնոյ պարծանք. քանզի հրամանաւ անցաւոր թագաւորին մարտնչէաք։ Որ փախչէր՝ վատանուն յաշխարհի երևէր և անողորմ մահ ի նմանէ գտանէր. իսկ որ քաջութեամբ յառաջ մատչէր՝ քաջ անուն ազգի ժառանգէր և պարգևս մեծամեծս յանցաւոր և ի մահկանացու թագաւորէն ընդունէր։ Եւ մեք իսկ աւասիկ յիւրաքանչիւր մարմինս ունիմք վէրս և սպիս բազումս. և բազում այն քաջութիւն իցէ, վասն որոյ առեալ իցէ և պարգևս մեծամեծս։ Անարգ և անօգուտ զքաջութիւնսն համարիմ և առ ոչինչ՝ զպարգևսն բազումս. վասն զի ամենեքեան խափանելոց են։

«Իսկ արդ եթէ վասն մահկանացու հրամանատուին զայսչափ քաջութիւնս կատարէաք, ո՛րչափ ևս առաւել վասն անմահ թագաւորին մերոյ, որ տէրն է կենդանեաց և մեռելոց և դատելոց է զամենայն մարդ ըստ գործոց իւրոց։ Ապաքէն եթէ կարի շատ յառաջ մատուցեալ ծերացայց, սակայն ելանելոց եմք ի մարմնոյ աստի, զի մտցուք առ Աստուած կենդանի, որ ոչ ես ելանիցեմք ի նմանէ։

«Արդ աղաչեմ զձեզ, ո՛վ քաջ նիզակակիցք իմ, մանաւանդ զի բազումք ի ձէնջ լաւագոյնք էք քան զիս արութեամբ, գահու ի վեր ըստ հայրենի պատուոյն. բայց յորժամ ձերով կամօք և յօժարութեամբ առաջնորդ և զօրագլուխ ձեզ կացուցէք, հեշտ և բաղձալի թուեսցին բանք իմ ի լսելիս մեծամեծաց և փոքունց։ Մի՛ երկուցեալ զանգիտեսցուք ի բազմութենէ հեթանոսացն և մի՛ յահագին սրոյ առն մահկանացուի թիկունս դարձուսցուք. զի եթէ տացէ Տէր յաղթութիւն ի ձեռս մեր, սատակեսցուք զզօրութիւն նոցա, զի բարձրասցի կողմն ճշմարտութեան. և եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց սուրբ մահուամբ պատերազմիս, ընկալցուք խնդութեամբ սրտիւ. բայց միայն յարութիւնս քաջու-

թեան՝ վատութիւն մի՛ խառնեսցուք։

«Մանաւանդ զի անմոռաց է ինձ, յիշելով զիմ և զոմանց ի մէնջ, ի ժամանակին՝ զի զանօրէն իշխանն խաբեցաք, պատրեցաք իբրև զմանուկ մի տղայ անպիտան, իբր այն եթէ ի վերին երեսս զկամս նորա անբարշտութեանն կատարեցաք· բայց ի ծածուկ զխորհուրդս Տէր ինքնին վկայէ մեզ, որպէս անքակ կացեալ եմք ի նմանէ։ Զոր և դուք ինքնին իսկ գիտէք, վասն սիրելեաց մերոց, որ ի մեծի նեղութեան էին, հնարս խնդրէաք վասն յանդորր հանելոյ· զի նոքօք հանդերձ մարտ եդեալ կռուեսցուք ընդ անօրէն իշխանին վասն հայրենի աստուածատուր օրինացն։ Եւ իբրև նոցա ոչ ինչ կարացաք օգնել, անհնար լիցի այս, եթէ վասն մարմնաւոր սիրոյ զԱստուած ընդ մարդկան փոխանակիցեմք։

«Իսկ արդ յերկուս և յերիս կողմս Տէր ինքնին մեծաւ զօրութեամբ օգնեաց մեզ, որպէս զի զանուն քաջութեան ժառանգեցաք, և զզօրսն արքունի չարաչար հարաք, և զմոգսն անօրէն սատակեցաք, և զպղծութիւն կռապաշտութեանն ի տեղեաց տեղեաց սրբեցաք, զանօրէն հրաման թագաւորին եղծաք ապականեցաք, զխռովութիւն ծովուն ցածուցաք, լեռնացեալ ալիքն դաշտացան, բարձրադէզ փրփուրն սպառեցաւ, զազանացեալ սրտմտութիւնն դադարեաց։ Որ ի վերայ ամպոց որոտայր, նկուն եղեալ՝ քան զսովորական բնութիւնն ի վայր գտաւ ընդ մեզ խօսելով։ Որ բանիւ հրամանաւ կամէր կատարել զչարութիւնն իւր ի վերայ սուրբ եկեղեցւոյ, արդ աղեղամբ և նիզակաւ և սրով կռուի։ Որ իբրև զհանդերձ կարծէր ունել մեզ զքրիստոնէութիւնն, արդ իբրև զգոյն ի մարմնոյ՝ չկարէ շրջել, թերևս և ոչ այլ կարասցէ մինչև ի կատարած։ Քանզի հիմունք սորա հաստատութեամբ եդեալ են ի վերայ վիմին անշարժութեան, ոչ ի վերայ երկրի, այլ ի վեր յերկինս, ուր ոչ անձրևք իջանեն, և ոչ հողմք շնչեն, և ոչ հեղեղք յարուցանեն։ Եւ մեք թէպէտ և մարմնով յերկրի եմք, այլ հաւատով յերկինս եմք շինեալ, ուր ոչ ոք կարէ հասանել յանձեռագործ շինուածն Քրիստոսի։

«Հաստատուն կացէք յանշուշտ զօրագլուխն մեր, որ ոչ երբեք մոռասցի զգործս նահատակութեան ձերոյ։ Ո՛վ քաջք,



մեզ այս մեծապէս է, զոր կատարեաց Աստուած ի ձեռն մերոյ բնութեանս, յորում և զօրութիւնն Աստուծոյ մեծապէս երևի։ Զի եթէ զայլս կոտորելով ի վերայ աստուածային օրինացն՝ պարծանս անձանց ժառանգեցաք և զքաջ անուն ազգատոհմին մերոյ թողաք եկեղեցւոյ, և փորձուց ակնկալութիւն ի Տեառնէ է, որ պահէ իւրաքանչիւր ումեք ի մէնջ ըստ սրտին յօժարութեան և ըստ գործոց առաջարկութեան, — ո՛րչափ ևս առաւել, եթէ մեք մեռանիցիմք ի վերայ մեծի վկայութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում և երկնաւորքն են ցանկացեալ, եթէ գոյր հնար։ Եւ զի այս պարգև ոչ ամենեցուն է անկ, այլ որում պատրաստի ի բարերար Տեառնէն, և մեզ այս ոչ եթէ յարդար գործոց ինչ պատահեաց· այլ յաննախանձ պարգևատուէն· որպէս և ասէ իսկ ի սուրբ կտակարանին· «Ուր առաւել եղեն մեղքն, անդէն առաւելան շնորհքն Աստուծոյ»։

«Եւ մեզ կարի քաջ ի դէպ ելանէ՝ հրաման պատասխանւոյս այսորիկ· որպէս և առաւելապէս երևեցաք մարդկան ամբարշտեալք, կրկին առաւելապէս երևեսցուք արդարացեալք մարդկան և հրեշտակաց և Հօրն ամենեցուն։ Զի որ օր լուան ապաքէն զմէնջ մարդիկ ի գործ ամբարշտութեանն, արտասուս բազում հեղան ի սուրբ եկեղեցւոջն, և ևս բազմագոյն ի մէջ սիրելեացն մերոց։ Նաև ընկերք մեր սրով սրտմտեալ սպառնային մեզ և մահ դառնութեան ի վերայ հասուցանել կամէին, և ծառայքն մեր սարսուցեալ փախչէին ի մէնջ։ Եւ հեռաւորոց, որոց լուեալ էր զանուն քրիստոնէութեան մերոյ, քանզի ոչ էին տեղեակ խորհրդոյն մերոյ, ողբս ի բերան առեալ՝ անդադար աշխարհէին զմեզ և անգիտութեամբ հայհոյութիւնս բազումս խօսէին զմէնջ։ Եւ որ մեծն քան զամենայն՝ ասացից· ոչ միայն մարդիկ յերկրի, այլ և հրեշտակք յերկինս զերեսս իւրեանց դարձուցին ի մէնջ, զի մի՛ տխուր դիմօք հայեսցին ի մեզ։

«Եւ ահա եկն, եհաս ժամանակ, զի զամենայն զկեղտ անուն ի մէնջ ի բաց բարձցուք։ Յայնժամ իբրև զթախծեալ սգաւոր՝ յոգի և մարմին էաք տրտմեալք, այսօր զուարթացեալ և զգաստացեալք յերկոսեան առ հասարակ եմք լրջացեալք· քանզի և զՏէրն բարերար ընդ մեզ տեսանեմք յառաջնորդութիւն· չէ՛ մեր մարդ զօրավար, այլ զօրագլուխն ամենայն մարտիրոսաց։ Եր-

կիւղ՝ Թերահաւատութեան է նշանակ. զԹերահաւատութիւն մեք ի մէնջ վաղ մերժեցաք, ընդ նմին և երկիւղն փախիցէ ի մտաց և ի խորհրդոց մերոց»:

Զայս ամենայն առաքինի զօրավարն խօսեցաւ ընդ ամենայն բազմութեանն. դարձեալ և զմի մի ի նոցանէ քաջալերէր ի ծածուկ և սրտապնդէր: Եւ զամենայն պակասութիւն աղքատութեան լնոյր. որոյ ոչ ինչ գոյր զօրականին՝ յանձնէ և յընկերաց մատուցանէր. որոյ զէն չէր՝ զէն պատրաստէր, և որում հանդերձ պիտոյ էր՝ հանդերձ զգեցուցանէր, և որում երիվար՝ երիվար տայր: Եւ առատ ոսկւոք ուրախ առնէր զամենեսեան և զբուարթագին զինքն ցուցանէր ամենեցուն: 1)

## ՎԵՑԵՐՈՐԴ ՅԵՂԱՆԱԿ.
### ՊԱՏԵՐԱԶՄՆ ՀԱՅՈՑ.

Իսկ արին Վարդան յառաջ մատուցեալ և զաւագանին հարցանէր. և միաբան ամենեցուն խրատու զզօրագլուխսն կարգէր այսպէս:

Զգունդն առաջին տայր ի ձեռն իշխանին Արծրունեաց և նիզակակից նմա զմեծ իշխանն Մոկաց. և զայլն ամենայն նախարարեան համհարզս երկոցունցն, և զամենայն բազմութիւն գնդին Թեւս աստի և անտի կազմէր նոցա:

Եւ զգունդն երկրորդ տայր ի ձեռն Խորենայ Խորխոռունեաց և նիզակակից նմա զԸնծայինն և զՆերսեհ Քաջբերունի:

Եւ զգունդն երրորդ մատուցանէր ի ձեռն Թաթլոյ Վանանդեցւոյ և նիզակակից նմա հրամայէր զՏաճատ Գնթունի, և զբազումս ի քաջ արանց աստի և անտի ի թեւս նոցա:

Յանձն իւր առնոյր զգունդն չորրորդ և նիզակակից իւր զքաջն Արշաւիր և զհարազատ եղբայր իւր զՀամազասպեան:

---

1) Այնուհետև Ղևոնդ երեցը գիշերը մի երկար ճառով քաջալերում է զօրքերին. ապա սեղան շինելով պատարագ են անում, լուսաղէմին հաղորդւում ամէնքին, չմկրտուածներին մկրտում են, և ուրախ սրտով պատրաստւում են յարձակւում գործելու. Կռուի պատրաստութիւն են տեսնում և պարսից բանակի մէջ. նրանց զօրավարն է խրախուսում է զօրքերին և կազմում կռուի ճակատը հայոց զօրքերի դէմը, Տղմուտ գետի վրայ:



կարգէր և կազմէր զճակատն՝ յորդորելով ընդ ամենայն երեսս դաշտին դէմ յանդիման Արեաց գնդին, առ ափն Տղմուտ գետոյն:

Եւ իբրև այս այսպէս պատրաստեցան, երկոքեան կողմանքն լի սրտմտութեամբ և մեծաւ բարկութեամբ զայրանային, և զգանացեալ զօրութեամբ յիրեարս յարձակէին երկոքեան: Եւ ամբոխ աղաղակին երկոցունց կողմանց՝ իբրև ի մէջ ամպոց շըփոթելոց՝ ճայթմունս գործէր, և հնչմամբ ձայնից զքարանձաւս լերանցն շարժէր: Ի բազմութենէ սաղաւարտից և ի փայլիւն պատենազէն վառելոցն իբրև նշոյլք ճառագայթից արեգական հատանէին: Նաև ի բազում սուսերացն շողալ և ի ճօճել բազմախուռն նիզակացն՝ իբրև յերկնուստ ահագին հրաձգութիւնք երեւային: Քանզի ո՞վ իսկ է բաւական ասել զմեծամեծ տագնապ ահաւոր ձայնիցն, ո՛րպէս կոփիւնք վահանաւորացն և ճայթմունք լարից աղեղանցն զլսելիս ամենեցուն առհասարակ խլացուցանէին:

Անդ էր տեսանել շտապ մեծի տագնապի և զաղէտս անբաւ տարակուսանացն երկոցունց կողմանցն, առ ի յանդուգն յարձակմանէն զմիմեանս բախելով. քանզի թանձրամիտքն յիմարէին և վատասիրտքն լքանէին, քաջքն խիզախէին և նահատակքն գոչէին: Եւ խումբ արարեալ ամենայն բազմութեանն՝ զգետն ի մէջ փակէին, և զանդիտեալ գունդն Պարսից ի դժւարութենէ գետոյն՝ զահեղեաւն զեռալ սկսան: Իսկ գունդն Հայոց հասեալ անցանէին, և ի վերայ առեալ յարձակէին մեծաւ զօրութեամբ: Սաստկապէս բախեալք ընդ միմեանս, յերկոցունց կողմանց բազում վիրաւորք յերկիր անկեալ դիաթաւալ խաղային:

Յայնժամ մեծ տագնապի ի վեր հայեցաւ քաջն Վարդան և տեսանէր զընտիր ընտիր քաջ նահատակաց Պարսից զօրուն, զի զձախակողմն շարժեցին զՀայոց գնդին. մեծաւ ուժով յարձակէր ի տեղին և զաջ թեւն Պարսից գնդին բեկեալ՝ արկանէր զգազանօքն և ըրջան առեալ կոտորէր մինչև ի նոյն տեղի: Եւ այնպէս շտապ տագնապի ի վերայ հասուցանէր, մինչեւ գունդն Մատեան քակեալ բաժանեցան ի մեծամուր պատրաստութենէն, դեռ եւս քաջ քաջ ի փախուստ դառնային:

Ապա դէտ ակն ի վեր համբառնայր Մուշկան Նիւսալաւուրտ,

քակեալ զոմանս տեսանէր ի գնդէն Հայոց և զկնի մնացեալ ի հովիտս լերանցն։ Վասն որոյ զաղաղակ բարձեալ՝ քաջալերէր շուրջ զիւրեաւ զզօրս Արեաց, որք զտեղի առեալ կային ընդդէմ գնդին Վարդանայ։ Եւ անդէն ի տեղւոջն երկոքին կողմանքն զպարտութիւն խոստովանէին, և առ յոյժ թանձր անկեալ դիականց իբրև զքարակոյտս դերբկաց երևէին։

Զայն իբրև ետես Մուշկան Նիսալաւուրտ, մնայր դադանացն Արտաշրի, որ ի վերայ նոցա նստէր ի բարձր դիտանոցին իբրև յամուր քաղաքի. և ի ձայն մեծ գալարափողոցն զիւր գունդսն ստիպէր և յառաջամարտիկ զօրօքն զնա ի մէջ փակէր։

Իսկ կորովին Վարդան իւրովք քաջ նիզակակցօքն ոչ սակաւ նախճիրս ի տեղւոջն գործեաց, յորում տեղւոջ և ինքն իսկ արժանի եղև առնուլ զկատարեալ նահատակութեանն պսակ։

Եւ յերկարեալ գործոյ պատերազմին՝ օրն տարաժամէր, և մօտ առ երեկս կարճատէր։ Բազմաց օրահասք մահու հասանէին, մանաւանդ ի թանձրութենէ դիականց մօտ առ մօտ խտացեալ իբրև զփայտահարս մայրաւորաց։ Անդ էր տեսանել զբեկումն նիզակացն և զխորտակումն աղեղանց. վասն այնորիկ և ոչ կարէին կալ ճշմարտիւ ի վերայ սուրբ մարմնոյ երանելեացն. և սաստիկ խուճապ տագնապի էր կողմանցն երկոցունց անկելոց։ Եւ որք մնացեալքն էին՝ վառնեալք և ցրուեալք լինէին ի լեռնադաշտս ամուր ձորոցն. և յորժամ պատահէին միմեանց, դարձեալ միւանգամ զմիմեանս սատակէին։ Եւ մինչև ի մուտս արեգականն անդադար լինէր գործ դառնութեանն։

Եւ քանզի գարնանային էր ժամանակն, ծաղկալից դաշտքն դառնային յորդահոսանս արեանց բազմաց։ Մանաւանդ յորժամ տեսանէր ոք զբազմակոյտ դիականցն անկելոց, սիրտն բեկանէր, և աղիքն գալարէին՝ լսել զմնչիւն խոցելոցն և զմռնչիւնս բեկելոցն, զթաւալգլոր խաղալ, սողալ վիրաւորացն, զփախուստ վատացն, զթաքուստ լքելոցն, զարտաթափումն զանարի արանցն, զճչիւն կանացեացն, զողբս սիրելեաց, զաշխարումն մերձաւորաց, զվայ և զաւաղ բարեկամացն։ Քանզի ոչ եթէ կողմ էր, որ յաղթեաց, և կողմ էր, որ պարտեցաւ, այլ քաջք ընդ քաջս ելեալ՝ երկոքին կողմանքն ի պարտութիւն մատնեցան։

Բայց քանզի անկեալ էր մեծ Սպարապետն Հայոց ի պա-



տերազմին, ոչ ոք գոյր այնուհետև ի մէջ գլխաւոր, յոր յեցեալ ժողովէին գունդն մնացելոցն։ Թէպէտ և բազում այն էր, որ ապրեցան, քան թէ որ մեռանն, սակայն ցանեալ ցրուեցան և հասեալ անկանէին ի տեղիս տեղիս յամուրս աշխարհին և բռնանային ի վերայ բազում գաւառաց և բերդից, զոր և ոչ առնուլ իսկ ոք կարէր։

Եւ այս անուանք են քաջ նահատակացն, որ անդէն ի տեղւոջն կատարեցան. յազգին Մամիկոնէից քաջն Վարդան հարիւր երեսուն և երեք արամբք. յազգէն Խորխոռունեաց Խորէնն կորովի իններտասն արամբք. յազգէն Պալունեաց արին Արտակ յիսուն և եօթն արամբք. յազգէն Գնթունեաց զարմանալին Տաճատ իններտասն արամբք. յազգէն Դիմաքսենից իմաստունն Հմայեակ քսան և երկու արամբք. յազգէն Քաջբերունեաց հրաշակերտն Ներսեհ եօթն արամբք. յազգէն Գնունեաց մանուկն Վահան երիւք արամբք. յազգէն Ընծայնոց արդարն Արսէն եօթն արամբք. յազգէն Սրուանձտայ յառաջադէմն Գարեգին երկու հարազատօքն և ութ ու տասն արամբք։

Այս երկերիւր ութսուն և եօթն նահատակք ընդ ինն մեծամեծ նախարարսն անդէն ի տեղւոջն կատարեցան։ Եւ յԱրքունի տանէն և ի տանէն Արծրունեաց և յիւրաքանչիւր նախարարաց տանէն, թող զայս երկերիւր ութսուն և եօթնս, և այլ ևս եօթն հարիւր և քառասուն այր, որք զանուանս իւրաքանչիւր ի դպրութիւն կենաց գրեցին ի նմին աւուր ի մեծ պատերազմին։ Եւ միահամուռ լինի ամենայն հազար և երեսուն և վեց։

Իսկ ի կողմանէ ուրացելոցն և հեթանոսաց անկանէր յայնմ աւուր երեք հազար հինգ հարիւր քառասուն և չորք այր։ Ինն այր ի նոցանէ ի մեծ պատուաւորացն էր, վասն որոյ և կարի յոյժ ի խոր խոցեցաւ Մուշկան Նիսալաւուրտ։ Մանաւանդ իբրև ետես զանհնարին հարուածսն եռապատիկ զիւրոյ գնդին քան զՀայոցն, բեկաւ, անկաւ զօրութիւն ուժոյն իւրոյ, և ոչ հանդարտէր կալ ի վերայ խորհրդոց մտացն. քանզի ոչ՝ որպէս կարծէր զպատերազմն՝ կատարեցաւ։

## ԵՕԹՆԵՐՈՐԴ ՅԵՂԱՆԱԿ.

### ՅԵՐԿԱՐՈՒՄՆ ԻՐԱՑՆ ԽՌՈՎՈՒԹԵԱՆ. *)

Եւ եղև յաւուր միոջ մեծի զամենայն երևելիս և զպատուական հրամայէր յընթերիս կոչել։ Կոչեցին և զուրացեալն։ Եւ նա ըստ առաջին կարգի օրինացն արքունի արկանէր զպատուական հանդերձն, զոր ունէր ի Թագաւորէն. կապէր և զպատիւ վարսին և զխոյրն ոսկեղէն դնէր ի վերայ, և զկռանակուռ ձոյլ ոսկի կամարն ընդելուզեալ մարգարտով և ակամբք պատուականօք՝ ընդ մէջ իւր ածէր, և զգինդսն յականջսն, և զգումարտակն ի պարանոցին, զսամոյրսն զթիկամբքն, և զամենայն օրէնս պատուոյն զանձամբ արկեալ՝ երթայր յարքունիս. շքեղ և երևելի քան զամենեսեան երևէր բազմութեանն։

Իսկ նախարարքն, որք կամօք ի Հայոց չոգան՝ անձամբ տուեալ զանձինս ի փորձութիւնն, և սուրբքն, որ յառաջագոյն հասեալ էին, (կապանօք ունէին զամենեսեան առ Դրանն արքունի) իբրև տեսին զնա զարդարեալ և շքեղացեալ և բազմամբոխ գնդաւ գայր յարքունիս, ի միտս իւրեանց սկսան այպանել և ասել. «Ո՛վ անմիտ վաճառական, զանմահ և զանանց պատիւ ետուր և զանցաւորդ գնեցեր, զոր և զայդ ևս ընդ մօտոյ աւուրս կորուսանելոց ես»։

*) Այս յեղանակի մէջ պատմւում է, թէ ինչպէս հայերն ամրանալով աշխարհի զանազան կողմերում՝ շարունակում են կռւել պարսիկների դէմ և բաւական վնասներ են հասցնում նրանց ու մինչև որ Թագաւորը ստիպւած նոր մարզպան ուղարկելով Հայաստան՝ դարձեալ կրօնի ազատութիւն է տալիս, և երկիրը խաղաղւում է։ Ապա նա դատ է նշանակում եղելութիւնը պարզելու համար. այդ նպատակով արքունի Դուռն են տարւում Յովսէփ կաթողիկոսը, Ղևոնդ երէցը և մի քանի ուրիշ եկեղեցականներ. ինքնակամ գնում են և մի քանի նախարարներ։ Դատի ժամանակ բոլոր մեղքը ձգում են Վասակի վրայ, որին և պատժում են։ Բայց և այնպէս քահանաներին ու նախարարներին չեն արձակում. քահանաներին չարչարում և նահատակում են, իսկ նախարարներին երկար տարիներ բանտարկում և նեղութեամբ պահում են պարսից երկրում։—Ս. Ղևոնդեան քահանաների այս նահատակութիւնը, բանտարկւած նախարարների և ազնւական կանանց դրութեան նկարագիրն է կազմում ութերորդ յեղանակի նիւթը։



Եհաս և նստաւ ի ներքին գահլիճսն, որ էր հրապարակ մեծամեծացն։ Արդ եկն, եւ սենեկապանն յարքունուստ, հարցանէր զնա և ասէ. «Արքայ յղեաց առ քեզ, յորմէ՞ դտեալ է քո զայդ ամենայն պատուական պատիւդ, ասա՛ վաղվաղակի, վասն ո՞յր արդար վաստակոյ»։ Եւ յուշ առնէր նմա զամենայն բանս ատենին, յորում դատապարտեցաւն, նաև զոր ոչ ևս անդ խօսեցան, զայն ևս յայտնէր նմա։ Զի ոչ ըստ կարգի ունէր նա ըզտէրութիւնն Սիւնեաց աշխարհին, այլ նենգութեամբ և քսութեամբ ետ սպանանել զհօրեղբայր իւր զՎաղինակ և յինքն տարաւ զտէրութիւնն՝ իբրև քրտիկեար յարքունիս։ Նաև այլևս բազում բանիւք դատապարտեցին զնա, որում ամենայն աւագանին վկայ գային։ Պապանձեցաւ ամենևին և չգտաւ բան ճշմարիտ ի բերան նորա։ Իբրև կրկնեցին և երեքկնեցին ցուցանելով ի ներքս յարքունիսն, հատաւ վճիռ մահու ի վերայ նորա։

Արդ եկն, եւ դահճապետն և մատեաւ առաջի ամենայն մեծամեծացն, մերկեաց ի նմանէ զպատիւն, զոր ունէր յարքունուստ, և զգեցոյց նմա հանդերձ մահապարտի։ Կապեցին զոտս և զձեռս և կանոնցաբար նստուցին ի ձի մատակ, տարան և ետուն յայն գնդան, ուր կային մահապարտք ամենայն։

Իսկ նախարարքն Հայոց և սուրբ եպիսկոպոսքն հանդերձ երիցամբքն, թէպէտ և էին ի մեծի պատուհասի, ոչինչ յիշէին զնեղութիւնսն, որ անցեալ էր ընդ նոսա, և կամ որ այլևս ակընկալութիւն էր գալ ի վերայ. այլ զարմացեալ էին ընդ մեծ յայտնութիւնն, որ եղև յԱստուծոյ։ Մխիթարէին զմիմեանս և ասէին. «Քաջութեամբ պատերազմեցաք, առաւել ևս համբերութեամբ ճգնեցուք։ Լուեալ է մեր ի սուրբ հարցն մերոց, եթէ գլուխ ամենայն առաքինութեան համբերութիւն է, և իմաստութիւն երկնաւոր՝ կատարեալ աստուածպաշտութիւն, և զայս ոչ ոք կարէ գտանել առանց չարչարանաց։ Իսկ չարչարանքն յորժամ ընդերկարանայ ի վերայ, յայնժամ բազմանայ վարձ հատուցմանց պարգևին։ Ապա թէ այդ այդպէս է, զայս միայն աղաչեսցուք զԱստուած, դի համբերել կարասցուք ամենայն փորձութեանց, և Տէր ինքնին արասցէ հնարս մերում փրկութեան, Լուեալ է մեր զպատասխան քառասուն զինուորացն Քրիստոսի, որք

բազում հարուածս տանջանաց ընկալան։ Մինն ի նոցանէ փութացաւ ի բաղանիսն և վրիպեաց ի պսակէն, իսկ երեսուն և ինն համբերութեամբ կատարեցան և հասին այնմ աւետեացն, որում ցանկացեալն էին։ Իսկ մեր ընկերակիցն աւանիկ, որ յառաջագոյն որոշեցաւ ի մէնջ, ահա եղև գործակից սատանայի։ Մինչդեռ ոգիքն ի մարմինն են, ընկալաւ զառհաւատչեայ գեհենին տանջանաց, որ ոչ միայն սրբոց է ողբալի, այլ և ամենայն գազանաբարոյ մարդկան»։

Զայս ասէին և բազում արտասուս ի վերայ կորուսելոյն հեղուին։ Եւ անդէն զերգս հոգևորս ի բերան առեալ ասէին. «Բարի է յուսալ ի Տէր, քան յուսալ ի մարդիկ. բարի է յուսալ ի Տէր, քան յուսալ յիշխանս. ամենայն ազինք շրջեցան զինև և անուամբ Տեառն յաղթեցի նոցա»։ Քաջալերէին զմիմեանս և ասէին. «Զայս գիտելով, եղբա՛րք, մի՛ երկիցուք յանաստուած ազգէս հեթանոսաց, որ քան զմեզուս վատթարագոյն ևս են ի զայրանալն իւրեանց, զի և նոցա յասուածն ի սատակումն անձանց իւրեանց լիցի. այլ մեք զանուն Տեառն կարդասցուք և վանեսցուք զամենեսեան»։

Իսկ ուրացեալն Վասակ հայէր ի միաբանութիւն սուրբ կապելոցն, որք մեծաւ խնդութեամբ ընդունէին զչարչարանսն և զւարթագոյն և պայծառք երևէին, որպէս յառաջագոյն յարքունիսն. հայէր և կարօտէր, և ոչ ոք խառնեաց զնա ի նոսա, այլ ուրոյն նովին կապանօք պահէին։ Եւ օր ըստ օրէ բերէին, իբրև զգէշ ընկենուին ի մեծ հրապարակին, ձաղէին և այպանէին և տեսիլ ամենայն կարաւանին զնա առնէին։ Կողոպտեցին, հանին և ոչ ինչ թողին, զոր ընդ իւրն ունէր. այնպէս ձաղեցին աղքատութեամբ, մինչ հաց մուրանային և բերէին նմա իւր ծառայքն։ Եւ այնպէս սաստիկ արկին զարտերս հարկաց աշխարհին ի վերայ տան նորա, որ մինչև զհարց և զհաւուց և զիւր արարս և զզարդս կանանց ևս եդ ի վերայ և ետ և տուժեցաւ, և ոչ կարաց հատուցանել զպարտսն արքունի։ Եւ յայն տեղի հասուցին, մինչև հարցանել նմա, եթէ՝ «Կայցէ ինչ գանձ ի գերեզմանս նախնեացն մերոց»։ Եւ եթէ գտեալ էր նորա, հանէր և տայր ընդ իւր և ընդ ընտանեացն տուգանս. որպէս զի բազում մարդիկ իսկ չոգան ի տուժի։



Եւ իբրև այսպէս յամենայն կողմանց հարեալ վատթարացաւ, անկաւ յախտս դժնդակս անդէն ի կապանսն։ Ջեռաւ փոր նորա, և հարան և տրորեցան գոգք նորա, և քամեալ մղեցաւ թանձրամածութիւն նորա։ Եռացին որդունք ընդ աչս նորա և ի վայր սորէին ընդ ռնգունս նորա. խցան լսելիք նորա, և ծակոտեցան յարաչար շրթունք նորա. լուծան ջիլք բազկաց նորա, և յետ կոյս կորացան կրկունք ոտից նորա։ Բղխեաց ի նմանէ հոտ մահու, և փախստական եղեն ի նմանէ ձեռնասուն ծառայք նորա։ Լեզուն միայն կայր կենդանի ի բերան նորա, և ոչ գտաւ խոստովանութիւն ի շրթունս նորա։ Ճաշակեաց զմահ հեղձամղձուկ և էջ ի դժոխս անհնարին դառնութեամբ։ Ոտնհար եղեն նմա ամենայն սիրելիք նորա, և ոչ յագեցան սաստիկ հարուածովք ամենայն թշնամիք նորա։

Եւ այն որ կամէրն թագաւոր լինել մատնութեամբ Հայոց աշխարհին, և ոչ գերեզմանի նորա տեղի երևեցաւ ի նմին. քանզի իբրև զշուն մեռաւ և իբրև զէշ քարշեցաւ։ Ոչ յիշեցաւ անուն նորա ի մէջ սրբոց, և ոչ մատեաւ յիշատակ նորա առաջի սուրբ սեղանոյն յեկեղեցւոջն։ Ոչ ինչ եթող չարիս, զոր ոչ գործեաց ի կեանս իւր, և ոչ ինչ մնաց ի մեծամեծ չարեաց, որ ոչ անցին ընդ նա ի մահուան նորա։

---

## ԱՐՏԱՔՈՅ ԵՕԹՆ ՅԵՂԱՆԱԿԻՆ

## ՈՒԹԵՐՈՐԴ

### 1

### ՎԱՍՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՂԱՑՆ ՀԱՅՈՑ ԽՈՐԵՆԱՅ ԵՒ ԱԲՐԱՀԱՄՈՒ.

Իսկ աշակերտք երանելեացն ի կապանս կային ի ներքս ի քաղաքին 1). եկն դահճապետ մի արքունի և եհան զնոսա ի քաղաքէ անտի արտաքս։ Եհան ի նմին քաղաքէ ասորեստանեայս քրիստոնեայս արս հինգ, քանզի և նոքա ի կապանս էին վասն անուանն Քրիստոսի. եհարց զնոսա բանիւք, և ոչ հաւանեցան

1) Այսինքն՝ ի Նիւշապուհ։

երկիր պագանել արեգական։ Զարչարեաց զնոսա դանիւ, և նոքա ևս առաւել ի նոյն միտս պնդեցան։ կտրեաց զնոցա ունչս և զականջս, և ետ տանել յԱսորեստան, զի կայցեն ի մշակութեան արքունի։ Երթային մեծաւ յօժարութեամբ, իբրև այն թէ մեծ պարգևս գտեալ ի Թագաւորէն։

Արդ եկն դարձեալ նոյն դահճապետն առ աշակերտս սուրբ սպանելոցն, ընտրեաց երկուս ի նոցանէ, որ համեստագոյնք էին, առեալ մեկուսի յայլոցն և ասէ ցնոսա. «Զի՞նչ անուանք են ձեր»։

Ետ պատասխանի մին և ասէ. «Առ ի ծնողաց ինձ Խորէն, և զմա Աբրահամ, իսկ ըստ շնորհատուր կարգիս՝ ծառայք Քրիստոսի եմք և աշակերտք երանելեացն, զոր սպանէք»։

Ետ պատասխանի դահճապետն և ասէ ցնոսա. «Իսկ արդ զի՞նչ գործ է ձեր, և կամ բնաւ ո՞յր իսկ ածեալ է զձեզ այսր»։

Առ այս ետ պատասխանի Աբրահամ և ասէ ցնոսա. «Զայդ ձեզ ի վարդապետաց մերոց արժան էր ուսանել. զի ոչ դուզնաքեայք ոք էին նոքա, այլ ունէին ստացուածս հայրենիս ըստ արժան բաւականին, ըստ նմին և սպասաւորս, էր որ իբրև զմեզ, և էր որ լաւագոյն քան զմեզ. որոց սնուցեալ և ուսուցեալն էր, ընդ նոսա եմք եկեալ։ Քանզի և պատուէր իսկ ունիմք յաստուածատուր օրինացն մերոց՝ սիրել զնոսա իբրև զսուրբ ծնողս և սպաս տանել նոցա իբրև հոգևոր տերանց»։

Յասեաւ դահճապետն և ասէ. «Իբրև զանխրատ և զաներկիւղ ստամբակս խօսիս։ Մինչդեռ ի խաղաղութեան և յաշխարհի էիք, բարւոք էր. յորժամ գրուահ եղեն նոքա յիրս արքունի և մահապարտ գտան ըստ գործոց իւրեանց, ձեզ չէր արժան ամենևին մօտ երթալ առ նոսա։ Ո՞չ տեսանէք ի մեծ կարաւանիս. յորժամ ոք ի պատուաւորացն ի դիպահոջն արքունի լինիցի՝ սգոյ հանդերձ ագանի և զատեալ, որոշեալ ի բացէ նստի միայնիկ, և ամենևին հուպ ոչ ոք իշխէ երթալ առ նոսա։ Եւ դու այդպէս իբրև զանյանգի աշակերտ պարծելով խօսիս»։

Առ այս ետ պատասխանի Խորէն և ասէ. «Ոչ ձեր կարգդ անիրաւ է և ոչ մերս ստութեամբ. նախարարն յանցաւոր՝ ուստի զպարգևն գտեալ էր, այնպէս պարտ էր նմա հպատակ լինել, զի ի [illegible]ուոյն վերայ և այլ ևս պարգևս մեծամեծս գտանէր



ի նմանէ։ Արդ փոխանակ զի զայն չարար, ձախողակի յետս ընդդէմն պատահեաց նմա։ Եւ մեր վարդապետքն եթէ առ Աստուած յանցուցեալ էին և կամ առ Թագաւորն մեղուցեալ ինչ էին, նոյն օրինակ և մեք առ նոսա առնէաք. ոչ յաշխարհին մօտ երթայաք և ոչ ի տար աշխարհ այսր զհետ նոցա գնայաք։ Բայց քանզի առ երկոսին կողմանսն արդարութեամբ կեցեալ են, և դուք զուր տարապարտուց սպանէք զնոսա, մեք արդ ևս առաւել սպասաւորեմք սուրբ ոսկերաց նոցա»։

Ասէ ցնա դահճապետն. «Ես յառաջագոյն իսկ ասացի, եթէ կարի ստամբակ ոմն ես դու. ահա յայտ եղև աւադիկ, եթէ յամենայն փասս նոցա խառն էք դուք»։

Աբրահամ ասէ. «Յո՞ր փասս»։

Դահճապետն ասէ. «Առաջին ի մահ մոգուցն, ապա և յայլս ամենայն»։

Աբրահամ ասէ. «Այդ ոչ միայն ի մէնջ է, այլ ըստ կարգի և ձերոց օրինացդ. Թագաւորք ձեզ տան հրաման, և դուք ի ձեռն ձերոց սպասաւորացդ գործէք»։

Դահճապետն ասէ. «Ի Միհր աստուած երդուեալ իմ. խրատագոյն ևս խօսիս քան զվարդապետսն քո. յայտ է, եթէ փասակարագոյնք ևս էք դուք։ Արդ ոչ է հնար ձեզ ապրել ի մահուանէ, բայց եթէ երկիր պագանէք արեգական և կատարիցէք զկամս օրինաց մերոց»։

Խորէն ասէ. «Յայժմ իբրև զմարդ չարախօսէիր և արդ իբրև զշուն անպիտան ընդ վայր հաջես։ Եթէ գոյր արեգական ականջք, դու տայիր նմա թշնամանս դնել. արդ նա բնութեամբ անզգայ է, և դու չարութեամբ անզգայագոյն քան զնա։ Յի՞մ տեսեր զմեզ պակասագոյն քան զհարսն մեր, մի՛ բանիւք զփորձ առնուլ կամիս զմեզ, այլ հանդէս արա քում չարութեանդ և մերում բարութեանս, և ամաչեցեալ գտանի հայրն քո սատանայ, ոչ միայն ի մէնջ, որ կատարելագոյնքս եմք, այլ և որ կարի փոքրիկն թուի քեզ, նա դիցէ վէրս սաստիկս յոգիս և մարմինս քո»։

Զայս իբրև լուաւ դահճապետն, սրտմտեալ բարկացաւ ի վերայ նոցա, ետ քարշել չարագոյն քան զառաջինս։ Եւ այնչափ սաստիկ քարշեցին, մինչև բազմաց կարծիք եղեն, թէ մեռան։

Իսկ իբրև ժամք երեք ի վերայ անցին, զարձեալ խօսել սկսան երկոքեանն և ասեն. «Փոքր համարիմք զանարգանս զայս և առ ոչինչ զցաւս մարմնոյս առ մեծ սէրն Աստուծոյ, որով կատարեցան հարքն մեր հոգևորք: Հա՛պա, մի՛ դլար և մի՛ դադարեր, այլ զոր ինչ առ նոսայն արարեր, զնոյն և առ մեզ կատարեա՛: Եթէ չարագոյն թուին քեզ գործքն նոցա, կրկին և զմերս համարեսջիք. զի նոքա բանիւք հրամայէին, և մեք գործովք զարդիւնսն կատարէաք»: Յայնժամ նա առաւել զայրացնեցաւ ի վերայ նոցա և հրամայեաց զմահու դան հարկանել: Եւ առ մի մի ի նոցանէ փոխեցաւ վեց վեց այր ի դահճացն: Եւ մինչդեռ կիսամեռք յերկիր անկեալ դնէին, հրամայեաց զերկոցունց ականջս մօտ կտրել: Եւ այնպէս բրեցին, որպէս թէ չիցէ լեալ ի տեղւոջն:

Զարթեան որպէս ի քնոյ ի սաստիկ հարուածոցն, սկսան աղաչելով պաղատանս մատուցանել և ասեն. «Աղաչեմք զքեզ, քաջ զինուոր Թագաւորին. կամ կատարեա՛ զմեզ իբրև զհարսն մեր մահուամբ, և կամ արա՛ զպատուհասդ ըստ օրինակի վերջնոցս: Զի ահա լսելիք մեր առողջացան զանախտաւորութիւն երկնաւոր, իսկ հոտոտելիքս դեռ ևս աստէն ի տեղւոջ կան յանցս չարչարանաց. մի՛ կիսապարգև առներ զմեզ յերկնից բարութենէն: Սրբեցեր զմարմինս մեր քարշելով և զլսելիս մեր կտրելով, սրբեա՛ և զռնգունս մեր հատանելով. քանզի որչափ տգեղս առնես զմեզ երկրաւորաւս, գեղեցկագոյնս առնես զմեզ երկնաւորաւն»:

Ետ պատասխանի հեզութեամբ դահճապետն և ասէ. «Եթէ և այլ յամեմ ես առ ձեզ մօտ կալով, կարծեմ, եթէ և աշակերտէք զիս ի ձեր յամառութիւնդ: Զի ահա արդ և զխորհուրդ արքունի ի վեր հանեմ ձեզ: Յայդ վայր եղև հրաման պատուհասիդ ձերոյ, և ի վերայ գործին պատուհասի՝ երթալ ձեզ յԱսորեստան և լինել ձեզ մշակ յարքունիս. զի որ ընդ ձեզ հայեսցի՝ մի՛ ի զմին յամառութեան պնդեսցի ընդդէմ հրամանաց Թագաւորին»:

Ասեն ցնա երանելիքն. «Դու զմեր երկիրս կիսագործ թողեր, մեք յարքունի երկիրն կէս մարմնովք մերովք ոչ վաստակեմք»:



Իբրև զայս լուաւ դահճապետն, աղաչեաց զզինուորսն, որ տանէին զնոսա, և ասէ. «Միայն աստի դուք առէք, գնացէք, և հասեալ յԱսորեստան՝ ուր կամ իւրեանց է՝ և շրջեսցին»:

Եւ իբրև տարան հասուցին զնոսա յերկիրն Բաբիլացւոց, ի գաւառ մի, զոր Շահուղն անուանեն, թէպէտ և էին յարքունի պատուհասին, սակայն և յայտ և գաղտ մեծապէս ընկալեալ եղեն ի բնակչաց աշխարհին: Սակայն երանելիքն և յայնմ յոյժ տրտմագին էին, իբր այն, եթէ սակաւ վաստակեցաք և մեծապէս հանգչիմք. և հանապազ ի նմին զեղջի կային:

Եւ անդէն թեակոխէին տեսանել զսուրբ կապանսն նախարարացն, լինել սպասաւոր մարմնաւոր պիտոյից նոցա: Իմացուցին զայս մեծամեծաց աշխարհին, որք էին ի նմին սուրբ ուխտի քրիստոնէութեանն: Եւ հաւանեալ ամենեցուն մեծամեծաց և փոքունց՝ ազդ առնել ամենայն երկրին, զի հաճոյ թուեսցի ամենեցուն՝ ի ձեռն մարմնաւոր պիտոյիցն կցորդ լինել սուրբ կապելոցն ի հեռաւոր օտարութեանն:

Եւ այսպէս ամ յամէ ժողովէին՝ ըստ իւրաքանչիւր կարի մարդկանն, ումն սակաւ և ումն շատ, որ զինչ և ի ձեռս պատրաստութիւն լինէր, եթէ դրամոց և դահեկանաց, ժողովէին, կազմէին, տային յերանելիսն՝ տանել նոցա: Եւ այսպէս յարբանեկութեան կային, մինչև տասն ամն լցաւ սպասաւորութեանն:

Եւ վասն զի յոյժ խստագոյնս պահէին ի ջերմոջ աշխարհին և անդադար էին ի ճանապարհորդութեանն ընդ նոյն Շահուղ, ընդ Մեջոփ և ընդ Քաշկար և ընդ ամենայն Ասորեստան և Խուժաստան սաստիկ տապով հարեալ ի խորշակէ մեռանէր սուրբն Խորէն և աւանդեալ լինէր ի բնակչաց աշխարհին ընդ սուրբ վկայսն:

Իսկ երանելին Աբրահամ կայր ի նմին առաքինութեան անպարապ. և զամենայն տուրս հաւատացելոցն շրջէր, ժողովէր և տանէր ի մեծ հեռաստանն, և ինքն մատակարարէր ըստ իւրաքանչիւր կարօտութեան Եւ այնպէս յերկարեցաւ մինչև յերկոտասաներորդ ամն պատժաւորացն, մինչև աղաչել զնա միաբան ամենեցուն, զի հաւանեսցի երթալ յաշխարհն Հայոց. զի ընդ մտանել նորա առ նոսա՝ ի նմա տեսցեն և զքաջ նահատակսն,

որք կատարեցան սրով, ի նմա տեսցեն և զսուրբ կապանս չարչարանացն։

Զայս խորհուրդ խորհելով աստուածաշնորհ նախարարացն մեծաւ թախանձանօք ածէին զԽոստովանողն ի հաւանութիւն։ Եւ վասն զի ոչ էր սովոր երբէք բարւոյն ընդդէմ պառնալ, ըստ առաջին սովորութեան և յայսմ վայրի փութացաւ վաղվաղակի կատարել զհրամանն զմխաբան հաւանեցելոցն յաստուածային առաքինութիւնն։ Եկն, եմուտ յաշխարհն Հայոց։

Փութացան և ելին ընդ նորա առաջ վաղվաղակի արք և կանայք, մեծամեծք և փոքունք և ամենայն բազմութիւն ազատաց և շինականաց։ Անկանէին և փարէին զոտիւք և զձեռօք առաջի սրբոյն և ասէին. «Օրհնեա՜լ Տէր Աստուած ի բարձունս, որ առաքեաց մեզ հրեշտակ յերկնից՝ բերել մեզ աւետիս յարութեան, զի լինիցիմք ժառանգք արքայութեան։ Զի ահա ի քէն կերպարանեալ տեսանեմք զամենեսեան զհրաժարեալսն յուսոյ յարութեամբ և զկապեալսն ակնկալութեամբ արձակելոյ։ Ի քէն տեսանեմք և զաշխարհիս շինութիւն խաղաղութեամբ. քև եկեղեցիքն մեր ցնծացեալ բերկրին, և քև սուրբ վկայքն մեր անդադար լիցին մեզ ի բարեխօսութիւն առ Աստուած։ Օրհնեա՜ զմեզ սուրբ հայր մեր. դու ես բերան հանդուցելոցն, խօսեա՛ց ընդ մեզ յայտնի օրհնութեամբ, զի յոգիս մեր լուիցուք ի ծածուկ զօրհնութիւնս սրբոցն»։

Բայց երանելի Խոստովանողն, թէպէտ և այսպէս սիրով ընկալեալ եղև յամենայն աշխարհէն, ոչ ինչ կամեցաւ ամենևին մերձենալ առ ոք ըստ մարմնոյ կարօտութեան. այլ ընտրեաց իւր տեղի մի զատ յամենայն բազմամբոխ ժողովրդոց և առաքինի եղբարբք երիւք կատարեաց զկեանս իւր մեծաւ ճգնութեամբ։

Զոր եթէ կամիցի ոք ի կարգ արկանել, դժուարաւ կարացէ ասել զվարս առաքինութեան նորա։ Զի եթէ զտքնութիւնն ասիցես, իբրև զկանթեղ անշէջ կայր զամենայն գիշերս. և եթէ զակաւապիտութիւնս կերակրոցն, համարեաց՝ եթէ զանկերակուր հրեշտակացն բերէր զնմանութիւն։ Եթէ զհեզութիւն ցածութեանն կամիցիս ասել, ոչ զոք ի կենդանեաց կարիցես գտանել նման նմա. և եթէ զանընչասիրութիւնն կամիցիս ասել



զարմեալ զոր օրինակ չպատրի մեռեալ ի կարասի, զնոյն օրինակ ճշմարտութեամբ և առ երանելին իմասջիր։

Անյագական ձայնիւ հանապազորդեալ էր ի պաշտաման և անհատ աղօթիւք միշտ ընդ Աստուծոյ ի բարձունս խօսէր։ Աղ եղև նա անհամելոց և խթան ընդոստուցիչ ամենայն հեղգացելոց։ Փարթամեցաւ նովաւ ագահութիւն, և կարի յոյժ ամաչեաց նովաւ [illegible] որկորամոլութեան։ Առողջութիւն եղև նա աշխարհին Հայոց, և բազումք վիրաւորք ի ծածուկ նովաւ գտին զառողջութիւն։ Եղև նա վարդապետ կատարեալ վարդապետաց իւրոց և սուրբ հայր խրատտու հարանց իւրոց։ Ի լուր համբաւոյ նորա իմաստնացան տղէտք, և ի տեսիլ մերձաւորութեան նորա զգաստացան լկտիք։ Բնակեալ էր ըստ մարմնոյ ի նեղ խցկան, և ահ սրբութեան նորա արկեալ էր զհեռաւորօք և զմերձաւորօք։ Զարհուրեցան դևք և փախեան ի նմանէ, իջին հրեշտակք և բնակեալ էին զնովաւ։

2.

Իսկ կանայք երանելի առաքինեացն և կապելոցն և անկելոցն ի պատերազմին՝ ընդ ամենայն աշխարհն Հայոց համօրէն համարել ես ոչ կարեմ. զի բազում ա՛յն են, զոր ոչ գիտեմ, քան թէ գիտիցեմ։ Զի հինգ հարիւրով չափ յականէ յանուանէ ճանաչեմ, ոչ միայն որ աւագագոյնքն էին, այլ զբազումս ի կրսերագունաց անտի։

Ամենեքեան միահամուռ զերկնաւոր նախանձ բերելով՝ ոչ ինչ ընդհատ երևեցան յայնցանէ, որ ոչ ճաշակեցին զաշխարհ։ Քանզի եթէ աւագագոյնք էին և եթէ մանկագոյնք զմի առաքինութիւն հաւասարոյ զգեցան։ Ոչինչ յիշեցին ամենևին զանուն փափկութեան մայրենի ազատութեանն. այլ իբրև մարդք, որ վըշտամբերք լեալ իցեն անդստին ի շինական սովորութեանցն տանջելով վարեալ զկեանս աշխարհիս, անդրագոյնք ևս քան զնոսա յանձն առին զհամբերութիւն վշտաց։

Ոչ միայն յոգիսն մխիթարեալ կացին առ աներևոյթ զօրութիւն յուսոյն յաւիտենից, այլ և մարմնոյ նեղութեամբք առաւել ևս բարձին զբեռն ծանրութեան։ Զի թէպէտ և ունէին զիւ-

րաքանչիւր ձեռնասուն սպասաւորս, ոչ ոք երևէր ի նոցանէ, թէ ո՛ր տիկինն իցէ և կամ ո՛ր նաժիշտն. մի հանդերձ էր հասարակաց, և միապէս գետնախշտիք երկոքեան: Ոչ ոք ումեք անկողնարկ լինէր. քանզի և չճանաչէին իսկ զխոտեղէնսն ընտրել ի միմեանց. մի գոյն թխութեան փսիրայիցն, և մի գոյն սևութեան սնարից բարձիցն:

Ոչ գոյր նոցա համեմ խահամոքք անուշարար առանձինն, և ոչ հացարարք որոշեալ ի պէտս սպասու ըստ պատուոյ կարգի, այլ հասարակաց էր: Շաբաթամուտն ըստ կարգի միայնակեցաց, որ յանապատի բնակեալ են: Ոչ ոք ումեք ջուր ի ձեռս արկանէր, և ոչ կրտսերք աւագաց դաստառակք մատուցանէին. չանկաւ օշնան ի ձեռս փափկասուն կանանց, և ոչ մատուցաւ իւղ ի զւարթութիւն խրախութեան: Ջեղան առաջի սուրբ սկտեղք, և ոչ անկան բաժակակալք. յուրախութիւն չեկաց ուրուք նոցա նուիրակ առ դուրս, և ոչ կոչեցան պատուականք յարանց ի տաճարս նոցա. չյիշեցան նոցա, թէ գուցէ ոք ամենևին ի բնակասնունդ դայեկաց և կամ բնաւ ի սիրելի հարազատաց:

Փոշոտեցան և ծխոտեցան սրահակք և սրսկապանք նորեկ հարսանց և սարդի ոստայնք ձգեցան ի սենեակս առագաստաց նոցա. կործանեցան բարձրագահք տաճարաց նոցա, և խանգարեցան սպասք երեխանաց նոցա. անկան կործանեցան ապարանք նոցա, և տապալեալ աւերեցան ամուրք ապաստանի նոցա: Զորացան,ազազեցան բուրաստանք ծաղկոցաց նոցա, և տաշտախիլ եղեն որթք գինեբեր այգեաց նոցա:

Աչօք իւրեանց տեսին զյափշտակութիւն արարոց իւրեանց և ականջօք իւրեանց լուան զչարչարանս վշտից սիրելեաց իւրեանց. առան զանձք իւրեանց յարքունիս, և ոչ մնացին ամենևին զարդք երեսաց իւրեանց:

Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին, որ գրգեալք և գգուեալք էին յիւրաքանչիւր բաստեռունս և ի գահաւորակս, հանապազ բոկ և հետի երթային ի տունս աղօթից, անձանձրոյթ խնդրեալ ուխտիւք, զի համբերել կարասցեն մեծի նեղութեանն: Որ ի մանկութենէ իւրեանց սնեալ էին ուղղովք զուարակաց և ամճովք երէոց, խոտաբուտ կենօք իբրև զվայրենիս ընդունէին զկերակուրն մեծաւ խնդութեամբ և ոչ յիշէին ամենևին զսովո-



րական փափկութիւնն: Սևացեալ ներկան մորթք մարմնոյ նոցա. վասն զի ցերեկ արևակէզք էին և զամենայն գիշերսն գետնաբեկք:

Սաղմոսք էին մշտնջենաւորք՝ մրմունջք ի բերանս նոցա, և մխիթարութիւնք կատարեալք ընթերցուածք մարգարէիցն: Միաբանեցին երկու երկու իբրև ամոլք հաւանք և հաւասարք՝ ուղիղ տանելով զակօսն արքայութեան, զի առանց վրիպելոյ հասցեն ի նաւահանգիստն խաղաղութեան:

Մոռացան զկանացի տկարութիւն և եղեն արուք առաքինիք ի հոգևոր պատերազմին. մարտ եղեալ կռուեցան ընդ մեղսն կաբևորս, հատին, կտրեցին, և ընկեցին զմահաբեր արմատս նորա: Միամտութեամբ յաղթեցին խորամանկութեան և սուրբ սիրով լուացին զկապուտակ ներկուածս նախանձուն. հատին զարմատս ագահութեան, և չորացան մահաբեր պտուղք ոստոց նոցա: Խոնարհութեամբ կոփեցին զամբարտաւանութիւն և նովին խոնարհութեամբ հասին երկնաւոր բարձրութեանն: Աղօթիւք բացին զփակեալ դրունս երկնից և սուրբ խնդրուածովք իջուցին զհրեշտակս ի փրկութիւն. լուան աւետիս ի հեռաստանէ և փառաւորեցին զԱստուած ի բարձունս:

Այրիք, որ ի նոսա էին, եղեն վերստին հարսունք առաքինութեան և բարձին յանձանց զնախատինս այրութեանն: Իսկ կանայք կապելոցն կամօք կապեցին զմարմնաւոր ցանկութիւնս և եղեն կցորդ չարչարանաց սուրբ կապելոցն. ի կեանս իւրեանց նմանեցին քաջ նահատակացն մահուամբ և ի հեռաստանէ եղեն վարդապետք մխիթարիչք բանտարգելեացն: Մատամբք իւրեանց վաստակեցին և կերակրեցան, և զկարգեալ ռոճիկ նոցա յարքունուստ՝ ամ յամէ թոշակ առնէին և տային տանել նոցա ի մխիթարութիւն: Անարիւն ճիպռանց նմանեցին, որ երգոյն քաղցրութեամբ առանց կերակրանաց կեան և կենդանի են միայն զօդն ծծելով, զանմարմնոցն բերեն զնմանութիւն:

Բազում ձմերաց հալեցան սառնամանիք, եհաս գարուն և եկին նորեկ ծիծեռունք. տեսին և խնդացին կենցաղասէր մարդիկ, և նոքա ոչ երբեք կարացին տեսանել զանձկալիսն իւրեանց: Ծաղիկք զարնանայինք յիշատակեցին զպսակասէր ամուսինս նոցա, և աչք իւրեանց կարօտացան տեսանել զցանկալի դէմ երեսաց

*նոյա։ Սպառեցան բարակք որսականք, և խցեալ կուրացան արշաւանք որսորդաց։ Բնագրօք յիշատակեցան նոքա, և ոչ մի տօնք տարեկանաց ոչ ածին զնոսա ի հեռաստանէ․ ի ճաշակատեղս նոցա հայեցան և արտասուեցին, և յամենայն յատեանս յիշեցին զանուանս նոցա։ Բազում արձանք կանգնեալ էին յանուն նոցա, և անուանք իւրաքանչիւր նշանակեալ ի նոսա։*

*Եւ իբրև այնպէս յամենայն կողմանց ալեկոծ լինէին միտք նոցա, ոչ ինչ կասեալ թուլացան յերկնաւոր առաքինութենէն։ Արտաքնոցն երևէին իբրև այրիք սգաւորք և չարչարեալք, և յոգիս իւրեանց զարդարեալք և մխիթարեալք երկնաւոր սիրով։*

*Ոչ եւս սովորեցին հարցանել զեկեալ ոք ի հեռաստանէ, եթէ ե՛րբ լինիցի մեզ տեսանել զսիրելիսն մեր, այլ այն էին իղձք աղօթից նոցա առ Աստուած, եթէ որպէս սկսանն, քաջութեամբ ի նմին կատարեսցին լի երկնաւոր սիրով։*

*Եւ մեք և նոքա հասարակ ժառանգեսցուք զքաղաքամայրն բարեաց և հասցուք խոստացելոց սիրելեացն Աստուծոյ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր։*

---

# ԲԱՌԱՑՈՒՑԱԿ
## ԵՒ
## ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ·

### 1.

Սքանչելի *հրաշալի*
Խորհուրդ մեծ եւ սքանչելի *մեծ և սքանչելի խորհուրդ*
Ցայսմ աւուր *այսօր*
Ցայտնեցաւ *յայտնուեց*
Երգեն *երգում են*
Ընդ հրեշտակս *հրեշտակների հետ*
Տան *տալիս են*
Ծնաւ *ծնուեց*
Ի Բեթղեհէմ քաղաքի *Բեթղեհէմ քաղաքում*
Մարդկան *մարդկանց*
Որդիք մարդկան *մարդկանց որդիներ, մարդիկ, մարդկային ազգ*
Զի *որովհետև*
Վասն *համար*, վասն մեր *մեզ համար*
Անբաւելի *անպարունակելի, անբովանդակելի*
Անբաւելին երկնի եւ երկրի *երկնքի և երկրի անբաւելին, որը որ երկինքն ու երկիրը չեն կարող տանել, բովանդակել*
Ի խանձարուրս *բարուրների մէջ*
Պատեցաւ *պատուեց, փաթաթուեց*
Ոչ *ոչ, չը*
Ոչ մեկնելով *չբաժանուելով, չհեռանալով*
Ի հօրէ *հօրից*
Ի սուրբ այրին *սուրբ այրում (քարայրում)*
Բազմեցաւ *բազմեց, փառք ու պատուով նստեց*

---

## *Ա. ԲԱՌԱԴԱՍՈՒԹԻՒՆ.*

*Սեռական վերադիրները սովորաբար յետադաս են դրւում, օրինակ՝ օրհնութիւն ծննդեան․ որդիք մարդկան․ անբաւելին երկնի և երկրի։*

*Յաճախ յետադաս են դրւում և ածական վերադիրները, օրինակ՝ խորհուրդ մեծ և սքանչելի, հայր մեր։*

## *Բ. ՈՒՂՂԱԿԱՆ ԵՒ ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎՆԵՐ.*

*Գրաբարի հոլովները վեց են՝ ուղղական, հայցական, սեռական․ տրական, բացառական և գործիական։*

1. Յոգնակի ուղղականը *կազմւում է եզականի վրայ* ք *աւելանալով,*

հովիւ, հովիւք. խանձարուր, խանձարուրք: Այս դէպքում ըր, ըղ վերջացած (եզըր, ատաղ) անունների վերջի ր, ղ բաղաձայններից առաջ մտնում է ե ձայնաւորը. եզերք, ատեղք: Իսկ ըն վերջացած անունների վերջի ն բաղաձայնից առաջ մտնում է ու, ա, ի ձայնաւորներից մէկը. ակն, ակունք. ամն, ամանք. անձն, անձինք:

2. Եզակի հայցականը նման է եզակի ուղղականին: Յոգնակի հայցականը կազմւում է յոգնակի ուղղականի վերջին ք-ն ս-ի փոխելով. հրեշտակք, հրեշտակս. խանձարուրք, խանձարուրս. ակունք, ակունս. ատեղք, ատեղս:

3. Անեզական ասւում են այն անունները, որոնք ունին միշտ յոգնականի ք վերջաւորութիւնը և հոլովւում են միայն յոգնակի. աւետիք, աւետիս. կեանք, կեանս. փառք, փառս:

2.

| | |
|---|---|
| Երկինք, յերկնից *երկնքից* | Խորք *խորքեր, անդունդներ* |
| Բարձր, բարձունք, ի բարձանց *բարձրերից, բարձունքից* | Հուր *կրակ* |
| Զօրութիւն, զօրութիւնք *զօրքեր* | Սառն *սառոյց* |
| Երկինք երկնից *երկնքի երկինքը* | Հողմ *քամի* |
| Ի վերոյ *վերը, վեր* | Մրրիկ *փոթորիկ* |
| Քան զ... *քան* | Առնէք *անում էք, կատարում էք* |
| Որ ի վերոյ քան զերկինս *որ վեր էք քան երկինքը. որ երկնից վեր էք* | Բան *խօսք* |
| Տէր, Տեառն *տիրոջ* | Լեառն, լերինք *լեռներ* |
| Եղեն *եղան* | Մայր *մայրի ծառ* |
| Հրամայեաց *հրամայեց* | Կուսան *կոյս, աղջիկ* |
| Հաստատեցան *հաստատուեցին. շինուեցին, ստեղծուեցին* | Տղայ *երեխայ, տղայ* |
| Կարգեաց *կարգեց* | Խոստովանութիւն *փառք, փառաբանութիւն, գոհութիւն* |
| Նա, նոքա, զնոսա *նրանց (հայցական հոլով)* | Նա, նմա *նրան (տրական հոլով)* |
| Յաւիտեանս յաւիտենից *միշտ և յաւիտեան* | Երկինք, յերկինս *երկնքում* |
| Սահման *սահման. կարգ ու կանոն* | Երկիր, յերկրի *երկրում* |
| Եղ *դրեց* | Առնէ *անում է* |
| Անցանեն *անցնում են, անց են կենում* | Բարձր առնէ *բարձր է անում, բարձրացնում է* |
| Ոչ անցանեն *չեն անց կենում, չեն դուրս գալիս (սահմանից, կանոնից)* | Ժողովուրդ իւր, ժողովրդեան իւրոյ *իւր ժողովրդի* |
| Երկիր, յերկրէ *երկրից* | Սուրբ, ի սրբոց *սրբերից* |
| | Յամենայն սրբոց *բոլոր սրբերից* |
| | Որդի, որդւոց *որդիներից* |
| | Մերձ *մօտ* |
| | Մերձ է առ Տէր *մօտ է Տիրոջը* |



## Ա. Զ ՆԱԽԴԻՐ.

1) Հայցական հոլովը, երբ ներգործական բայերի կրող խնդիր է (ներգործական սեռի խնդիր) և որոշւած է, սկզբից առնում է զ նախդիրը: Հայցականն որոշւած է, երբ յատուկ անուն կամ դերանուն է, կամ թէ ունի որևէ յօդ կամ որոշող վերադիր. օրինակ՝ օրհնեցէք զՏէր. օրհնեցէք զնա. օրհնեցէք զանուն Տեառն. կարգեաց զնոսա. բարձր առնէ Տէր զեղջիւր ժողովրդեան իւրոյ:

2) Բաղդատական քան նախդրից յետոյ դրւում է միշտ զ նախդրով հայցական. օրինակ՝ ի վերոյ քան զերկինս. բարձր քան զերկինս. մեծ քան զնա (=երկնքից բարձր. նրանից մեծ):

## Բ. ՍԵՌԱԿԱՆ, ՏՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՑԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՆԵՐ.

1) Եզակի սեռական-տրական հոլովները վերջանում են՝ ի, ու, ոյ, այ, ան, ին, եր, եղ. իսկ յոգնակի սեռական, տրական և բացառական հոլովները վերջանում են՝ ից, ուց, ոց, աց, անց, երց, եղց: Եզակի բացառականը վերջանում է է, ոյ, այ:

Սեռական և տրական հոլովներն անունների մէջ, ինչպէս աշխարհաբարում, միայն խօսքի մէջ ունեցած իրենց պաշտօնից են որոշւում:

2. Բացառական հոլովն ունի սկզբից միշտ մի նախդիր, սովորաբար ի նախդիրը, որ ձայնաւորով սկսւող բառի առաջ դառնում է յ և բառին կից է գրւում. օրինակ՝ ի հօրէ, յերկրէ:

3) Յոգնակի բացառականը և եզակի ոյ, այ, վերջացած բացառականը տարբերւում են սեռական-տրականից միայն սկզբի նախդրով. օրինակ՝ բարձունք, սեռ. տր. բարձանց, բացառ. ի բարձանց, երկինք, երկնից, յերկնից. սուրբք, սրբոց, ի սրբոց. որդիք, որդւոց, յորդւոց. օրիորդք, օրիորդաց, յօրիորդաց. ռուսք, ռուսաց, ի ռուսաց (ռուսներից): Այսպէս և եզակի սեռական-տրական՝ սիրոյ, Աստուծոյ, Վանայ (Վանայ լիճ), բացառական՝ ի սիրոյ, յԱստուծոյ, ի Վանայ:

## Գ. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ.

Յետադաս ածականները թւով և հոլովով համաձայնում են իրենց գոյականին, ինչպէս՝ ծառք պտղաբերք. թռչունք թեւաւորք. ժողովուրդ իւր, ժողովրդեան իւրոյ:

3.

| | |
|---|---|
| Գալուստ *գալը* | Օր, աւուրք, յաւուրս *օրերում* |
| Ի ծնանելն *ծնուելիս, ծնուելու ժամանակ, երբ որ ծնուեց* | Հերովդէս արքայ, Հերովդի արքայի *Հերովդէս թագաւորի* |
| Ի Բեթղեհէմ *Բեթղեհէմում* | Արեւելք, յարեւելից *արևելքից* |

Եկին *եկան*
Ասեն *ասում են*
Որ ծնաւ արքայն Հրէից *Հրէից արքան, որ ծնուեց*
Տեսաք *տեսանք*
Արեւելք, յարեւելս *արեւելքում*
Եկաք *եկանք*
Երկիր պագանել *երկրպագել, երկրպագութիւն տալ*
Իբրեւ *երբ, երբ որ*
Լուաւ *լսեց*
Խռովեցաւ *շփոթուեց*
Ամենայն *ամեն, բոլոր. ամբողջ*
Նա, նմա, ընդ նմա *նրա հետ*
Ժողովեալ *ժողոված, ժողովելով*

Դպիր *կարդացող, գրագէտ, գիտուն*
Հարցանէր *հարցնում էր, հարցրեց*
Նա, նոքա, նոցա, ի նոցանէ *նրանցից*
Ծնանիցի *պիտի ծնուի*
Ասեն ցնա *ասում են նրան*
Գրեալ է *գրուած է*
Ի ձեռն *ձեռքով*
Երկիր Յուդայ *Յուդայի երկիր*
Ոչ ինչ կրսեր ես *բնաւ կրտսեր (փոքր) չես*
Իշխան, յիշխանս Յուդայ *Յուդայի իշխանների մէջ*
Դու, քո, ի քէն *քեզնից*
Ելցէ *պիտի ելնէ, պիտի դուրս գայ*
Հովուեսցէ *պիտի հովուէ*

## Ա. Ի, Յ ՆԱԽԴԻՐԸ.

*Այս նախդիրը դրւում է բացառական հոլովի վրայ (տես 2, Բ. 2). բացի այդ՝ ունի մի քանի ուրիշ նշանակութեամբ գործածութիւններ։*

*1. Դրւում է* հայցական հոլովի *վրայ, երբ հոլովը ցոյց է տալիս այն տեղը,* դէպի *ուր ուղղւում է գործողութիւնը. օրինակ՝ յո՞ երթաս (ո՞ւր ես գնում). երթամ յԵրուսաղէմ. եկին յԵրուսաղէմ. գնացին ի տուն։*

*2. Դրւում է յատուկ անունների եզակի հայցականի վրայ, իսկ հասարակ անունների եզակի տրականի (երբեմն հայցականի) և յոգնակի հայցականի վրայ և ցոյց է տալիս մի բանի* մէջ, միջում *լինելը։ Այս գործածութեամբ հոլովն առնում է աշխարհաբարի* ներգոյականի *նշանակութիւն. օրինակ՝ ի տան էի (ո՞ւր էիր). ի սուրբ այրին բազմեցաւ. ծնաւ նոր արքայ ի Բեթղեհէմ քաղաքի. ծնաւ Յիսուս ի Բեթղեհէմ. ի խանձարուրս պատեցաւ. տեսաք զաստղն նորա յարեւելս. ոչինչ կրտսեր ես յիշխանս Յուդայ. խաղաղութիւն նմա յերկինս և յերկրի։*

*3. Անորոշ դերբայի հետ ցոյց է տալիս՝ մի բան լինելիս, երբ մի բան լինում է. օրինակ՝ ի ծնանելն Յիսուսի։*

*4.* Ի, յ *նախդրով հայցական հոլովը երբեմն գործ է ածւում գործիականի նշանակութեամբ. ի ձեռն մարգարէի = ձեռամբ մարգարէի. յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ = անուամբ Հօր և Որդւոյ...*



## Բ. ՆԱԽԴԻՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆԸ.

*Նախդիրները դրւում են միշտ նախադաս վերադիրներից առաջ, լինին վերջիններս սեռական հոլով, ածական թէ յատուկ անուն. օրինակ՝ ի քաղաքի, ի Բեթղէհէմ քաղաքի. յայրին, ի սուրբ այրին. ի սրբոց. յամենայն սրբոց։*

*Նախդիրը երբեմն կրկնւում է թէ ածականի ու սեռականի և թէ գոյականի վրայ. ժողովեալ զամենայն զքահանայապետս և զդպիրս,—որ կարելի էր գրել՝ ժողովեալ զամենայն քահանայապետս և դպիրս։*

4.

Յայնժամ *այն ժամանակ*
Գաղտ *գաղտնի, ծածուկ*
Կոչեաց *կանչեց*
Ստուգեաց *ստուգեց, ճշտեց*
Աստղ երեւեալ, աստեղ երեւելոյ. զժամանակ աստեղն երեւելոյ *երեւեցած աստղի ժամանակը*
Արձակեալ *արձակած, արձակելով, ուղարկելով*
Ասէ *ասում է*
Մանուկ, մանկան *երեխայի, մանուկի*
Յորժամ *երբ որ*
Գտանիցէք *գտնէք, կը գտնէք*
Ազդ արասջիք *իմաց կանէք, կիմացնէք*
Զի *որպէսզի, որ*
Եկեալ *եկած. գալով*
Երկիր պագից *երկրպագեմ*
Լուան *լսեցին*
Տեսին *տեսան*
Առաջնորդեաց *առաջնորդեց*
Եկաց ի վերայ *կանգնեց այն տեղի վրայ*
Խնդացին *ուրախացան*
Յոյժ *սաստիկ, խիստ, շատ*

Խնդացին յոյժ ուրախութիւն մեծ *մեծ ուրախութեամբ խիստ ուրախացան*
Մտին *մտան*
Հանդերձ *հետ, միասին*
Մարիամ մայրն իւր, Մարեմաւ մարբն իւրով *(գործ. հոլ.)* հանդերձ Մարեմաւ մարբն իւրով *իր մայր Մարիամի հետ միասին։*
Անկեալ *ընկած, ընկնելով*
Երկիր պագանէին *երկրպագում էին, երկրպագեցին*
Բացեալ *բացած, բանալով*
Մատուցին *մօտ բերին. տուին*
Պատարագ *նուէր, ընծայ*
Կնդրուկ *մի տեսակ ազնիւ խունկ*
Զմուռս *մի տեսակ անուշահոտ խունկ*
Առեալ *առած, առնելով*
Տեսիլ, ի տեսլեան *տեսիլքում, երազում*
Չդառնալ անդրէն *յետ չդառնալ*
Առ *մօտ,* առ Հերովդէս *Հերովդէսի մօտ*
Ընդ այլ ճանապարհ *ուրիշ ճանապարհով*

## Ա. ԴԵՐԲԱՅՆԵՐ.

1. Անորոշ դերբայը վերջանում է ալ, ել, իլ, ուլ. գնալ, գրել, խօսիլ, առնուլ։

Իլ վերջի տեղ, ինչպէս աշխարհաբարում, սովորաբար գործ է ածւում ել. ինչպէս՝ խօսիլ, փախչիլ, ծնանիլ ձևերը սովորաբար փոխանակւում են՝ խօսել, փախչել, ծնանել ձևերով։

Ուլ վերջն աշխարհաբարում դարձել է ել. առնուլ՝ առնել. արգելուլ՝ արգելել։—Անել վերջացած բայերը՝ տեսանել, ելանել, մտանել, իջանել՝ աշխարհաբարում մեծ մասամբ ունին նել վերջը. տեսնել, ելնել, մտնել։ Պատճառական բայերը վերջանում են ուցանել՝ փախուցանել, բարձրացուցանել, խոնարհեցուցանել. աշխարհաբար՝ փախցնել, բարձրացնել, խոնարհեցընել։

2 Անցեալ դերբայը վերջանում է եալ՝ ժողովեալ, գրեալ, եկեալ = ժողովել, գրել, եկել կամ ժողոված, գրած, եկած։

3. Ապառնի դերբայը վերջանում է ոց՝ ժողովելոց, գրելոց, գալոց = ժողովելու, գրելու, գալու։

## Բ. ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅԻ ԿԱՆՈՆԸ

Նոյն ենթական և ժամանակն ունեցող երկու, երեք բայերից առաջինը գրւում է սովորաբար անցեալ դերբայով, որ աշխարհաբար թարգմանւում կամ անցեալ դերբայով (գնացեալ=գնացած, գնացել), կամ անորոշ դերբայի գործիական հոլովով (գնացեալ=գնալով), կամ թէ յաջորդ բայի դէմքով ու ժամանակով։ Օրինակ՝ անկեալ երկիր պագանէին=ընկած (կամ ընկնելով, կամ ընկան) երկրպագեցին։ Եւ բացեալ զգանձս իւրեանց մատուցին նմա=և բանալով (կամ բաց արին) մատուցին։ Զի և ես եկեալ երկիր պագից=որ ես էլ գամ, երկրպագեմ։ Եկեալ եկեաց= եկաւ կանգնեց։

5.

| | |
|---|---|
| Անտի այնտեղից | Յառնել, յարուցեալ վեր կացած, վեր կենալով |
| Երևիլ, երևէր երևում էր, երևաց | Առնուլ, առ առաւ, վերցրեց |
| Ասել, ասէր ասում էր, ասաց | Գիշեր, ի գիշերի գիշերը, գիշերով |
| Յառնել, արի՛ վեր կաց | Մինչեւ, ց... մինչև |
| Մանուկ, զմանուկդ այդ մանկանը | Վախճան վախճան, մահ |
| Անդ այնտեղ | Լնուլ, լցցի լցւի, կատարւի |
| Լինիլ, լինիջի՛ր կը լինիս, կը մնաս | Ասել, ասացեալ ասած |
| Յորժամ մինչև որ | Տէր, Տեառն, ի Տեառնէ տիրոջից |
| Ասել, ասացից կասեմ | Կոչել, կոչեցից կը կանչեմ, պիտի կանչեմ |
| Քանզի որովհետև | Կորուսանել կորցնել |
| Ի խնդիր է փնտրում է, ուզում է | |

# ԽՈՆԱՐՀՈՒՄ.

## Ա. ԲԱՅԵՐԻ ԵՂԱՆԱԿՆԵՐՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ.

Եղանակներն երեք են՝ սահմանական, ստորադասական և հրամայական։

1. Սահմանական եղանակն ունի երեք ժամանակ՝ ներկայ, անցեալ անկատար և անցեալ կատարեալ։ Ստորադասական եղանակն ունի երկու ժամանակ՝ ապառնի առաջին և ապառնի երկրորդ։ Հրամայական եղանակն ունի երեք ժամանակ՝ ներկայ, ապառնի առաջին և ապառնի երկրորդ։ Ներկայի բացասականը մի՛ մակբայով արգելական է և առանձին ձև ունի։ Ուլ վերջացած բայերը չունին Հրամայական ապառնի առաջին ժամանակը։

2. Բայերի ժամանակներն իրենց կազմութեամբ և նշանակութեամբ երկու կերպ են՝ անկատար (տևական) և կատարեալ (ոչ տևական) ժամանակներ։ Անկատար ժամանակներն են՝ Սահմանական ներկայ և անցեալ անկատար, Ստոր. ապառնի Ա., Հրամ. արգելական և ապառնի Ա.։ Կատարեալ ժամանակներն են՝ Սահմ. անց. կատարեալ, Ստոր. ապառնի Բ., Հրամ. ներկայ և ապառնի Բ.։

## Բ. ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ.

Անկատար ժամանակները կազմւում են ներկայի կամ անկատարի բնից, որ է անորոշ դերբայը առանց լ վերջաւորութեան կամ Սահմ. ներկայի եզակի 1-ին դէմքը առանց մ վերջաւորութեան՝ խաղա-լ, գրե-լ, խօսի-լ, առնու-լ։

Այս ժամանակների վերջաւորութիւններն աւելանում են ներկայի բնի վերջի ա, ե, ի, ու ձայնաւորների վրայ, որոնք կոչւում են լծորդ ձայնաւորներ:

Ներքևում գրուած են անկատար ժամանակների վերջաւորութիւնները չորս լծորդ ձայնաւորների հետ։ Այդ չորս տեսակ վերջերը բոլոր բայերի համար կանոնաւորապէս դրւում են անորոշ դերբայի ալ, ել, իլ, ուլ, կամ սահմ. ներկայի եզակի 1-ին դէմքի ամ, եմ, իմ, ում վերջերի տեղ և կազմւում են համապատասխան ժամանակներ։ Անկատար ժամանակները կազմելու համար ուրեմն պէտք է իմանալ կամ անորոշ դերբայը կամ սահմ. ներկայի եզ. 1-ին դէմքը և նրանց ալ, ել, իլ, ուլ (ամ, եմ, իմ, ում) վերջերի տեղ դնել համապատասխան լծորդի վերջերը։

## ԱՆԿԱՏԱՐԻ ԿԱՄ ԼԾՈՐԴԻ ՁԵՒԵՐ

| Լծորդներ | ամ | եմ | իմ | ում |
|---|---|---|---|---|
| Սահմ. Ներկայ | ամ | եմ | իմ | ում |
| | աս | ես | իս | ուս |
| | այ | է | ի | ու |
| | ամք | եմք | իմք | ումք |
| | այք | էք | իք | ուք |
| | ան | են | ին | ուն |
| Անց. անկ. | այի | էի | էի | ուի |
| | այիր | էիր | էիր | ուիր |
| | այր | էր | էր | ոյր |
| | այաք | էաք | էաք | ուաք |
| | այիք | էիք | էիք | ուիք |
| |ային | էին | էին | ուին |
| Ստոր. Ապառնի Ա. | այցեմ | իցեմ | իցիմ | ուցում |
| | այցես | իցես | իցիս | ուցուս |
| | այցէ | իցէ | իցի | ուցու |
| | այցեմք | իցեմք | իցիմք | ուցումք |
| | այցէք | իցէք | իցիք | ուցուք |
| | այցեն | իցեն | իցին | ուցուն |
| Հրամ. Ապառնի Ա. | այջի՛ր | իջի՛ր | իջի՛ր | — |
| | այջի՛ք | իջի՛ք | իջի՛ք | — |
| Արգել. Ներկայ | ար | եր | իր | ուր |
| | այք | էք | իք | ուք |
| Անորոշ դերբ. | ալ | ել | իլ (ել) | ուլ |
| Ապառ. դերբ. | ալոց | ելոց | ելոց | լոց |



## ԱՆԿԱՏԱՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ.

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Սահմ. Ներկայ | | Աշխարհաբար նշանակութիւնը |
| գնամ | ասեմ | լինիմ | առնում | գնում եմ |
| գնաս | ասես | լինիս | առնուս | գնում ես |
| գնայ | ասէ | լինի | առնու | գնում է |
| գամք | ասեմք | լինիմք | առնումք | գնում ենք |
| գնայք | ասէք | լինիք | առնուք | գնում էք |
| գնան | ասեն | լինին | առնուն | գնում են |
| | | Անցեալ Անկատար | | |
| գնայի | ասէի | լինէի | առնուի | գնում էի |
| գնայիր | ասէիր | լինէիր | առնուիր | գնում էիր |
| գնայր | ասէր | լինէր | առնոյր | գնում էր |
| գնայաք | ասէաք | լինէաք | առնուաք | գնում էինք |
| գնայիք | ասէիք | լինէիք | առնուիք | գնում էիք |
| գնային | ասէին | լինէին | առնուին | գնում էին |
| | | Ստոր. Ապառնի Ա. | | |
| գնայցեմ | ասիցեմ | լինիցիմ | առնուցում | (կը, պիտի) գնամ |
| գնայցես | ասիցես | լինիցիս | առնուցուս | » » գնաս |
| գնայցէ | ասիցէ | լինիցի | առնուցու | » » գնայ |
| գնայցեմք | ասիցեմք | լինիցիմք | առնուցումք | » » գնանք |
| գնայցէք | ասիցէք | լինիցիք | առնուցուք | » » գնաք |
| գնայցեն | ասիցեն | լինիցին | առնուցուն | » » գնան |
| | | Հրամ. Ապառնի Ա. | | |
| գնայջի՛ր | ասիջի՛ր | լինիջի՛ր | — | (կը) գնա՛ս, գնա՛ |
| գնայջի՛ք | ասիջի՛ք | լինջի՛ք | — | (կը) գնա՛ք, գնացէ՛ք |
| | | Արգելական Ներկայ | | |
| մի՛ գնար | մի՛ ասեր | մի՛ լինիր | մի՛ առնուր | մի՛ գնար |
| մի՛ գնայք | մի՛ ասէք | մի՛ լինիք | մի՛ առնուք | մի՛ գնաք |
| | | Անորոշ Դերբայ | | |
| գնալ | ասել | լինիլ (լինել) | առնուլ | գնալ |
| | | Ապառնի Դերբայ | | |
| գնալոց | ասելոց | լինելոց | առնլոց | գնալու |

6.

Տեսանել, տեսի *տեսաւ*
Խաբել, խաբեցաւ *խաբուեց*
Ի մոգուց անտի *մոգերից, այն մո-գերից*
Առաքել, առաքեաց *ուղարկեց*
Կոտորել, կոտորեաց *կոտորեց*
Մանուկ, մանկունք, մանկունս, զա-մենայն մանկունսն *բոլոր երեխա-ներին*
Սահման, սահմանք, սահմանս, ի-սահմանս *սահմաններում*. յամե-նայն սահմանս *բոլոր սահմաննե-րում (տես 3. Ա. Բ.)։*
Երկամեան, երկամեանք, երկամենից, յերկամենից *երկու տարեկաննե-րից*
Խոնարհ *ցած* յերկամենից եւ ի խո-նարհ *երկու տարեկաններից և ցած*
Ըստ ժամանակին *այն ժամանակի համեմատ*
Կատարել, կատարեցաւ *կատարուեց*
Գուժել *լացի ձայն, լացի ճիչ բար-ձրանալ*. ձայն գուժեաց *ձայն գու-ժեց*
Լալումն *լաց*
Աշխարումն *լաց ու կոծ, ողբ*
Մխիթարել *մխիթարուել*
Են *են*, *կամ* ոչ էին *չկային*

7.

Վախճանել, ի վախճանելն *վախճա-նուելիս, երբ որ վախճանուեց (տես 3. Ա. 3.)*
Խնդրել *որոնել, փնտրել, ուզել*.
Որ խնդրէին *նրանք որ փնտրում էին, փնտրողները*
Անձն *անձն, կեանք*
Գալ, եկն *եկաւ*
Թագաւորել թագաւորեաց *թագաւո-րեց, թագաւոր դարձաւ*
Հերովդէս հայրն իւր, Հերովդի հօրն իւրոյ, փոխանակ Հերովդի հօրն իւրոյ *իր հայր Հերովդէսի փո-խանակ*
Երկնչել, երկեաւ *վախեցաւ*
Անդր *այնտեղ*
Բնակել, բնակեցաւ *բնակուեց*
Կոչել, կոչէր *կոչւում էր, անուան-ւում էր*. կոչեսցի *պիտի կոչուի*

8.

Մաքսաւոր *մաքս առնող, մաքսա-պահանջ*
Այր, արք *տղամարդիկ, մարդիկ*. արք երկու *երկու մարդ*
Ելանել, ելին *ելան, վեր ելան*
Կալ *կանգնել, կանգնած լինել*
Կալ յաղօթս *աղօթքի կանգնել, ա-ղօթք անել*
Կայր մեկուսի *կանգնած է մի կող-մում*
Աղօթս մատուցանել *աղօթք անել*
Դու, քո, քեզ, ի քէն, զքէն *քեզնից*
Իբրեւ զ... *ինչպէս, պէս* իբրեւ զայլս *ուրիշների պէս, ինչպէս ուրիշները*
Մարդիկ, մարդկան, ի մարդկանէ *մարդկանցից*, իբրեւ զայլս ի մարդկանէ *ինչպէս ուրիշները մարդկանցից, ինչպէս ուրիշ մար-դիկ*



Պահել *ծոմ պահել, պաս պահել*
Երկիցս *երկու անգամ*
Շաբաթ, ի շաբաթու *շաբաթուայ մէջ*. երկիցս ի շաբաթու *շաբաթը երկու անգամ*
Տասանորդ *տասից մէկը, տասանորդ*
Ստացուածք իմ, ստացուածոց իմոց, ի ստացուածոց իմոց, յամենայն ստացուածոց իմոց *իմ բոլոր ստա-ցուածքներից*
Ընդ երկինս *դէպի երկինք*
Ամբառնալ *բարձրացնել*
Կոծել *ծեծել*
Քաւել *մեղքը ներել*. քաւեա՛ *քաւի՛ր, ների՛ր*
Ես, զիս *ինձ (հայց. հոլով*
Իջանել, էջ *իջաւ*
Ամենայն որ *ամէն մարդ որ*
Բարձրացուցանել *բարձրացնել*
Անձն *անձն, ինքն*. բարձրացուցանէ զանձն *բարձրացնում է ինքն ի-րեն*
Խոնարհել, խոնարհեսցի *կը ցածա-նայ, կը խոնարհուի*
Խոնարհեցուցանել *ցածացնել, խո-նարհեցնել*
Բարձրանալ, բարձրասցի *կը բարձ-րանայ*

---

Անձն *բառը (որ նշանակում է՝ անձն, հոգի, մարմին) շատ անգամ գործ է ածւում ես, դու, ինքն անձնական դերանունների նշանակութեամբ. անձն իմ = ես ինքս, անձն քո = դու ինքդ, անձն իւր = ինքը, անձինք մեր = մենք ինքներս և այլն։ (Անձնապաշտ = ինքնապաշտ)։*

9.

Ընդ երիքով *Երիքովի միջով*
Անուն կոչեցեալ Զաքէոս *որի անունը կոչւում էր Զաքէոս*
Մաքսապետ *մաքսաւորների գլխա-ւոր*
Մեծատուն *հարուստ*
Հասակ, հասակաւ *հասակով*
Ընթանալ *վազել*. ընթանալ յառաջս *առաջ վազել*
Ելանել, ել *ելաւ, վեր ելաւ*
Ժանտաթզենի *վայրի թզենի*
Ընդ այն *այն տեղով դէնը*
Տեղի *տեղ*. եկն ի տեղին *եկաւ այն տեղը*
Հայել, հայեցաւ *նայեց*
Փութալ *շտապել, շուտ անել*
Իջանել, է՛ջ *իջիր*
Այսի *այդ տեղից*
Տուն քո, ի տան քում *քո տանը*
Արժան է ինձ *ինձ պէտք է*
Ագանիլ (*ագանել*) *իջեանել, վեր գալ, կենալ*
Արժան է ինձ ագանել *ես պիտի ի-ջեանեմ*
Իջանել, էջ *իջաւ*
Ընդունիմ, ընկալաւ *ընդունեց*
Ամենեքին *ամենքը*
Այր մեղաւոր, առն մեղաւորի, առ առն մեղաւորի *մեղաւոր մարդու մօտ*
Մտանել, եմուտ *մտաւ*
Լուծանիլ (լուծանել) *վեր գալ, օ-թեանել*
Ասէ ցտէր *ասում է տիրոջը*
Ինչք իմ, ընչից իմոց *իմ ինչքերի, իմ ստացուածքների*

Տամ, տաց *կը տամ*
Ոք *մէկը, մի մարդ*
Հատուցանել, հատուցից *կը վճարեմ*
Չորեքկին *չորեքպատիկ, քառապատիկ*

Հայր, հարք. հարքն մեր, հարցն մերոց *մեր հայրերի*
Գովեալ *գովուած*
Փառաւորեալ *փառաւորուած*
Ածել, ածեր *բերիր*
Իրաւունք ճշմարտութեան *արդար դատաստան*
Ըստ ամենայնի *ամէն բանով, բոլորովին, ըստ ամենայնի*
Առնել, արարեր *արիր*
Յիրաւի *իրաւ*
Մեղանչել, մեղաք *մեղանչեցինք*
Անօրինել, անօրինեցաք *անօրէնութիւն արինք*
Յապստամբ լինելն *ապստամբելիս, ապստամբելով*
Անսալ *լսել, ականջ դնել*
Ոչ անսացաք *չլսեցինք*
Պահել, ոչ պահեցաք *չպահեցինք*
Առնել, ոչ արարաք *չարինք*
Պատուիրել, պատուիրեցեր *պատուիրեցիր*
Մատնել, մատնեցեր *մատնեցիր*, մատնել ի ձեռս *ձեռքը մատնել, ձեռքը տալ*
Թշնամիք մեր անօրէնք, խիստք եւ ապստամբողք, թշնամեաց մերոց անօրինաց, խստաց եւ ապստամբողաց *մեր անօրէն, խիստ և ապստամբող թշնամիների*
Թագաւոր անիրաւ եւ չար քան զամենայն երկիր, թագաւորի անիրաւի եւ չարի քան զամենայն երկիր *ամբողջ երկրից անիրաւ և չար թագաւորի*

Եղանել, եղեւ *եղաւ*
Տուն այս, տանս այսմիկ *այս տանը*
Կեցուցանել *ապրեցնել*
Կորնչիլ, կորուսեալ *կորած*

10.

Արդ *այժմ, արդ*
Ոչ գոյ մեզ *մեզ չկայ, մենք չունինք*։ Ոչ գոյ մեզ բանալ զբերանս մեր *մենք մեր բերանները բանալ (խօսել) չենք կարող*
Եղանիլ, եղաք *եղանք*
Ծառայք քո պաշտօնեայք, ծառայից քոց պաշտօնէից *քո ծառայ պաշտօնեաներին*
Այլ *բայց*
Իսպառ *բոլորովին*
Յրել *ցրուել, քանդել*
Ուխտ *խօսք, դաշինք*
Ի բացէ առնել *հեռացնել*
Ես, մեք, մեր, մեզ, ի մէնջ *մեզանից*
Յամօթ առնել *ամաչեցնել, ամօթով թողնել*
Ըստ *համեմատ, համաձայն*
Փրկել *ազատել*. փրկեա *ազատիր*
Սքանչելիք *հրաշք, հրաշալիք, մեծ զարմանք*։ Վասն սքանչելեաց քոց *քո սքանչելիութեան, զարմանալիութեան համար. որպէս զի զարմանան, հիանան քո վրայ*
Տուր փառս անուան քում *փառաւորիր քո անունը*
Յամօթ լինել, յամօթ լիցին *թող ամօթով մնան, ամաչեն*
Ով, ոյք *ովքեր*
Ցուցանել *ցոյց տալ*. ցուցանել չարիս *չարիք հասցնել, անել*
Ամաչել, ամաչեսցեն *ամաչեն*
Ամենեքեան *ամէնքը*
Խորտակել, խորտակեսցի *խորտակուի*
Ճանաչել, ծանիցեն *թող ճանաչեն*



# ԿԱՏԱՐԵԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ.

*1) Կատարեալ ժամանակների վերջաւորութիւններն երեք տեսակ են. ուստի կայ երեք խոնարհում՝ ներգործակերպ, կրաւորակերպ և խառն։*

*Ներգործակերպ խոնարհման Անց. կատարեալի եզ. 3-րդ դէմքը և Հրամ. ներկայի եզ. 2-րդ դէմքը չունին վերջաւորութիւն։ Մնացած ձևերի մէջ վերջաւորութիւններն աւելանում են կամ բայարմատների կամ* կատարեալի բների *վրայ՝ տես-ի. տես-եր, տես, տես-աք, տես-իք, տես-ին։*

*2) Կատարեալի բունը կազմուած է* աց, եաց, ոյց *ածանցներով, որոնց վերջի ց բաղաձայնը ապառնի ժամանակների վերջաւորութիւնների ց, չ բաղաձայններից առաջ դառնում է* ս. *իսկ ներգործակերպ խոնարհման Հրամ. ներկայի եզ. 2-րդ դէմքի մէջ դուրս է ընկնում՝ գնաց-ից, գնասցես, գնաս-ցէ, գնաս-ցուք, գնաս-ջիք, գնաս-ցեն։ Հրամ՝ ներկայ՝ գնա՛։*

*Մի քանի բայերի* միավանկ բնի ց *բաղաձայնը մնում է անփոփոխ՝ կամ, կացի, կա՛ց. կացից, կացցես, կացցուք, կացջիք, կացցեն։ Լամ, լացից, լացցես, լացցէ… Բանամ, բացից, Բացցես։ Լնում, լցից, լցցես, լցցէ…*

*3 Անց. կատարեալի եզ. 3-րդ դէմքի և Հրամ. ներկայի եզ. 2-րդ դէմքի մէջ շեշտ ստանալով՝ վերականգնւում են բնի* եա, ոյ *երկբարբառները և* է, ի, ու *ձայնաւորները, որոնք միւս դէմքերի մէջ, շեշտը կորցնելով, դառնում են՝* ե, ու, ի, ը, *(վերջինս չի գրւում) օրինակ՝ սիրեցի, սիրեցեր, սիրեա՛. իջի, իջեր, է՛ջ. մտի, մտեր, մո՛ւտ։*

*4) Անց. կատարեալի եզ. 3-րդ դէմքի վրայ, երբ միավանկ է և բաղաձայնով է սկսւում, սկզբից կարող է աւելանալ* ե *ձայնաւորը՝ տես կամ ետես, թող կամ եթող, մուտ կամ եմուտ։ Երբեմն* ա, օ, *ձայնաւորներից առաջ էլ աւելանում է* է *ձայնաւորը՝ առ կամ էառ, օծ կամ էօծ (օծեց)։*

*5) Անց. կատարեալի յոգնակի 2-րդ դէմքերը, կրաւորակերպ և խառն խոնարհումների մէջ նաև Հրամ. յոգն. 2-րդ դէմքերն ունեն կրկին ձևեր՝* իք-էք, այք-արուք, եայք-երուք *վերջաւորութիւններով։*

*Ներքևում դրուած են երեք խոնարհման վերջաւորութիւնները բնի ածանցների հետ, եթէ ունեն։ Դրանց հետ դրուած են սկզբում նաև Սահմ. ներկայի եզ. 1-ին դէմքերը՝* ամ, եմ, ուցանեմ, անեմ, ում *և այլն, որոնցից կիմացուի, թէ ո՛ր բայերի կատարեալ ժամանակներն ինչպէս են կազմւում. պէտք է միայն ներկայի* ամ, եմ, անեմ *և այլն, վերջերի տեղ դնել կատարեալ ժամանակների համապատասխան վերջերը։ Կատարեալ ժամանակների խոնարհման համար իսկապէս պէտք է իմանալ Անց. կատարեալի եզ. 1-ին դէմքը և Հրամ. եզ. 2-րդ դէմքը. ուստի ներքևում կրկնուած են Սահմ. Ներկայի, Անց. կատարեալի և Հրամ. Ներկայի այդ ձևերը։*

# ԿԱՏԱՐԵԱԼԻ

## 1. ՆԵՐԳՈՐԾԱԿԵՐՊ ԽՈՆԱՐՀՈՒՄ.

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Սահման.** | | | | |
| Ներկայ. | ամ | եմ | ուցանեմ | ում<br>անեմ |
| Անց. կատ. | աց-ի | եց-ի | ուց-ի | ի |
| | աց-եր | եց-եր | ուց-եր | եր |
| | աց | եաց | ոյց | (արմատը) |
| | աց-աք | եց-աք | ուց-աք | աք |
| | աց-իք, | եց-իք | ուց-իք | իք, |
| | աց-էք | եց-էք | ուց-էք | էք |
| | աց-ին | եց-ին | ուց-ին | ին |
| **Ստոր.** | | | | |
| Ապառնի Բ. | աց-ից | եց-ից | ուց-ից | ից |
| | աս-ցես | ես-ցես | ուս-ցես | ցես |
| | աս-ցէ | ես-ցէ | ուս-ցէ | ցէ |
| | աս-ցուք | ես-ցուք | ուս-ցուք | ցուք |
| | աս-ջիք | ես-ջիք | ուս-ջիք | ջիք |
| | աս-ցեն | ես-ցեն | ուս-ցեն | ցեն |
| **Հրամայ.** | | | | |
| Ներկայ | ա՛ | եա՛ | ո՛ | (արմատը) |
| | աց-է՛ք | եց-է՛ք | ուց-է՛ք | է՛ք |
| Ապառնի Բ. | աս-ջի՛ր | ես-ջի՛ր | ուս-ջի՛ր | ջի՛ր |
| | աս-ջի՛ք | ես-ջի՛ք | ուս-ջի՛ք | ջի՛ք |
| Անց. դերբայ | աց-եալ | (եց)-եալ | ուց-եալ | եալ |

---

| | | | | |
|---|---|---|---|---|
| Սահմ. ներկ. | ամ | եմ | ուցանեմ | ում անեմ |
| Անց. կատ. | ացի | եցի | ուցի | ի |
| Հրամ. ներկ. | ա՛ | եա՛ | ո՛ | (արմատը) |



# ՁԵՒԵՐ.

| 3. ԿՐԱՒՈ ԱԿԵՐՊ ԽՈՆԱՐՀՈՒՄ | | | | 3. ԽԱՌՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ. |
|---|---|---|---|---|
| անամ | ենամ | իմ | անիմ | չիմ<br>(նում) |
| աց-այ | եց-այ | եց-այ | այ | եայ |
| աց-ար | եց-ար | եց-ար | ար | եար |
| աց-աւ | եց-աւ | եց-աւ | աւ | եաւ |
| աց-աք | եց-աք | եց-աք | աք | եաք |
| աց-այք, | եց-այք, | եց-այք, | այք, | եայք, |
| աց-արուք | եց-արուք | եց-արուք | արուք | երուք |
| աց-ան | եց-ան | եց-ան | ան | եան |
| աց-այց | եց-այց | եց-այց | այց | եայց |
| աս-ցիս | ես-ցիս | ես-ցիս | ցիս | իցես |
| աս-ցի | ես-ցի | ես-ցի | ցի | իցէ |
| աս-ցուք | ես-ցուք | ես-ցուք | ցուք | իցուք |
| աս-ջիք | ես-ջիք | ես-ջիք | ջիք | իջիք |
| աս-ցին | ես-ցին | ես-ցին | ցին | իցին |
| աց-ի՛ր | եցի՛ր | եա՛ց | ի՛ր | ի՛ր |
| աց-ա՛յք, | եց-ա՛յք, | եց-ա՛յք, | ա՛յք, | եա՛յք, |
| աց-արո՛ւք | եց-արո՛ւք | եց-արո՛ւք | արո՛ւք | երո՛ւք |
| աս-ջի՛ր | ես-ջի՛ր | ես-ջի՛ր | ջի՛ր | իջի՛ր |
| աս-ջի՛ք | ես-ջի՛ք | ես-ջի՛ք | ջի՛ք | իջի՛ք |
| աց-եալ | եց-եալ | (եց)-եալ | եալ | ուցեալ |

---

| | | | | |
|---|---|---|---|---|
| անամ | ենամ | իմ | անիմ | չիմ (նում) |
| ացայ | եցայ | եցայ | այ | եայ |
| ացի՛ր | եցի՛ր | եա՛ց | ի՛ր | ի՛ր |

## ԿԱՏԱՐԵԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ.

### 1. ՆԵՐԳՈՐԾԱԿԵՐՊ ԽՈՆԱՐՀՈՒՄ.

Ս ա հ մ ա ն ա կ ա ն

Ներկայ

| | | | | |
|---|---|---|---|---|
| գնամ | սիրեմ | մատուցանեմ | օծանեմ | հեղում |

Անցեալ կատարեալ

| | | | | |
|---|---|---|---|---|
| գնացի | սիրեցի | մատուցի | օծի | հեղի |
| գնացեր | սիրեցեր | մատուցեր | օծեր | հեղեր |
| գնաց | սիրեաց | մատոյց | օծ, էօծ | հեղ, եհեղ |
| գնացաք | սիրեցաք | մատուցաք | օծաք | հեղաք |
| գնացիք,-էք | սիրեցիք,-էք | մատուցիք,-էք | օծիք,-էք | հեղիք,-էք |
| գնացին | սիրեցին | մատուցին | օծին | հեղին |

Ստորադասական

Ապառնի Բ.

| | | | | |
|---|---|---|---|---|
| գնացից | սիրեցից | մատուցից | օծից | հեղից |
| գնասցես | սիրեսցես | մատուսցես | օծցես | հեղցես |
| գնասցէ | սիրեսցէ | մատուսցէ | օծցէ | հեղցէ |
| գնասցուք | սիրեսցուք | մատուսցուք | օծցուք | հեղցուք |
| գնասջիք | սիրեսջիք | մատուսջիք | օծջիք | հեղջիք |
| գնասցեն | սիրեսցեն | մատուսցեն | օծցեն | հեղցեն |

Հ ր ա մ ա յ ա կ ա ն

Ներկայ

| | | | | |
|---|---|---|---|---|
| գնա՛ | սիրեա՛ | մատո՛ | օ՛ծ | հե՛ղ |
| գնացէ՛ք | սիրեցէ՛ք | մատուցէ՛ք | օծէ՛ք | հեղէ՛ք |

Ապառնի Բ.

| | | | | |
|---|---|---|---|---|
| գնասջի՛ր | սիրեսջի՛ր | մատուսջի՛ր | օծջի՛ր | հեղջի՛ր |
| գնասջի՛ք | սիրեսջի՛ք | մատուսջի՛ք | օծջի՛ք | հեղջի՛ք |

Անցեալ դերբայ

| | | | | |
|---|---|---|---|---|
| գնացեալ | սիրեցեալ (սիրեալ) | մատուցեալ | օծեալ | հեղեալ |



## ԿԱՏԱՐԵԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ.

### 2. ԿՐԱՒՈՐԱԿԵՐՊ ԽՈՆԱՐՀՈՒՄ. 3. ԽԱՌՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ.

Ս ա հ մ ա ն ա կ ա ն

Ներկայ

| | | | | |
|---|---|---|---|---|
| գոհանամ | մերձենամ | խօսիմ | ուսանիմ | փախչիմ |

Անցեալ կատարեալ

| | | | | |
|---|---|---|---|---|
| գոհացայ | մերձեցայ | խօսեցայ | ուսայ | փախեայ |
| գոհացար | մերձեցար | խօսեցար | ուսար | փախեար |
| գոհացաւ | մերձեցաւ | խօսեցաւ | ուսաւ | փախեաւ |
| գոհացաք | մերձեցաք | խօսեցաք | ուսաք | փախեաք |
| գոհացայք, -արուք | մերձեցայք, -արուք | խօսեցայք, -արուք | ուսայք, -արուք | փախեայք, -երուք |
| գոհացան | մերձեցան | խօսեցան | ուսան | փախեան |

Ս տ ո ր ա դ ա ս ա կ ա ն

Ապառնի Բ.

| | | | | |
|---|---|---|---|---|
| գոհացայց | մերձեցայց | խօսեցայց | ուսայց | փախեայց |
| գոհասցիս | մերձեսցիս | խօսեսցիս | ուսցիս | փախիցես |
| գոհասցի | մերձեսցի | խօսեսցի | ուսցի | փախիցէ |
| գոհասցուք | մերձեսցուք | խօսեսցուք | ուսցուք | փախիցուք |
| գոհասջիք | մերձեսջիք | խօսեսջիք | ուսջիք | փախիջիք |
| գոհասցին | մերձեսցին | խօսեսցին | ուսցին | փախիցեն |

Հ ր ա մ ա յ ա կ ա ն

Ներկայ

| | | | | |
|---|---|---|---|---|
| գոհացի՛ր | մերձեցի՛ր | խօսեա՛ց | ուսի՛ր | փախի՛ր |
| գոհացա՛յք, -արո՛ք | մերձեցա՛յք -արո՛ւք | խօսեցա՛յք, -արո՛ւք | ուսա՛յք, -արո՛ւք | փախեա՛յք, -երո՛ւք |

Ապառնի Բ.

| | | | | |
|---|---|---|---|---|
| գոհասջի՛ր | մերձեսջի՛ր | խօսեսջի՛ր | ուսջի՛ր | փախիջի՛ր |
| գոհասջի՛ք | մերձեսջի՛ք | խօսեսջի՛ք | ուսջի՛ք | փախիջի՛ք |

Անցեալ դերբայ

| | | | | |
|---|---|---|---|---|
| գոհացեալ | մերձեցեալ | խօսեցեալ (խօսեալ) | ուսեալ | փախուցեալ |

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ ԽՈՆԱՐՀՄԱՆ

## Սահմանական

Ներկայ
*խաղամ*
*խաղաս*
*խաղայ*
*խաղամք*
*խաղայք*
*խաղան*

Անցեալ անկատար
*խաղայի*
*խաղայիր*
*խաղայր*
*խաղայաք*
*խաղայիք*
*խաղային*

Անցեալ կատարեալ
*խաղացի*
*խաղացեր*
*խաղաց*
*խաղացաք*
*խաղացիք,*
*խաղացէք*
*խաղացին*

## Ստորադասական

Ապառնի Ա.
*խաղայցեմ*
*խաղայցես*
*խաղայցէ*
*խաղայցեմք*
*խաղայցէք*
*խաղայցեն*

Ապառնի Բ.
*խաղացից*
*խաղասցես*
*խաղասցէ*
*խաղասցուք*
*խաղասջիք*
*խաղասցեն*

## Հրամայական

Արգել. Ներկայ
*մի՛ խաղար*
*մի՛ խաղայք*

Ներկայ
*խաղա՛*
*խաղացէ՛ք*

Ապառնի Ա.
*խաղայջի՛ր*
*խաղայջի՛ք*

Ապառնի Բ.
*խաղա՛*
*խաղասջի՛ր*

## Դերբայներ

Անորոշ
*խաղալ*
Ապառնի
*խաղալոց*

Անցեալ
*խաղացեալ*



## 11.

Էր *էր, կար*
Տանուտէր *տան տէր, տանուտէր*
Ցանկ *ցանկապատ*
Տալ, ես *տուաւ*․ ես զմշակս *տուաւ մշակների*
Տար *օտար, հեռու*
Մերձենալ *մօտենալ*
Առ մշակսն *մշակների մօտ*
Ունիմ, կալեալ *բռնած, բռնելով*․ կալեալ մշակացն զծառայս նորա *մշակները նրա ծառաներին բռնելով*
Ոմն *մէկը, մի մարդ*.
Բազում *շատ*
Ծառայք բազումք, այլ ծառայս բազումս քան զառաջինսն *ուրիշ ծառաներ՝ առաջիններից շատ*
Առնել, արարին *արին*
Առ նոսա *նրանց մօտ*
Թերևս *գուցէ, կարելի է*
Որդի իմ այս, յորդւոյ ասի իմմէ *իմ այս որդուցս*
Ասել ընդ միտս *մտքում ասել*
Ունիմ, կալցուք *բռնենք, տիրենք*
Հանել, հանին *հանեցին*
Արտաքոյ *դուրս*․ արտաքոյ քան զայգին *այգուց դուրս*
Սպանանել, սպանին *սպանեցին*
Գալ, եկեսցէ *գայ, կը գայ*
Զի՞նչ *ի՞նչ*
Առնել, արասցէ *կանէ, պիտի անէ*
Չար *վատ, չար*․ չարաւ *վատ կերպով չարաչար*
Կորուսանել, կորուսցէ *կը կորցնէ*
Այլ մշակք, այլոց մշակաց *ուրիշ մշակների*
Տալ, տացեն *կը տան*
Ժամ, ժամու, ի ժամու *ժամին, ժամանակին*

## 12.

Նմանիլ *նմանուել*
Առնում, առի, ա՛ռ *առնել, վերցնել*
Որոց առեալ *որոնք առնելով*
Ելանեմ, ելի, ե՛լ *ելնել, դուրս գալ*
Ելանել ընդ առաջ *առաջը դուրս գալ*
Իւրեանք, ընդ իւրեանս *իրենց հետ*
Բառնամ, բարձի, բա՛րձ *վերցնել*
Լապտեր, ընդ լապտերս *լապտերների հետ*
Յամել *ուշանալ*․ ի յամել *երբ որ ուշացաւ*
Նիրհել *ննջել*
Ի մէջ գիշերի *կէս գիշերին*
Բարբառ *ձայն*
Յառնեմ, յարեայ, արի՛, արի՛ք *վեր կացէք*
Կազմել *պատրաստել*
Տամ, տո՛ւք *տուէք*
Իւղ ձեր, յիւղոյ ձերմէ *ձեր իւղիցը*
Շիջանիլ *հանգչել, մարել*
Ամէն *ճիշտ*
Գիտեմ *գիտենալ, ճանաչել*

## 13.

Ինչ բան, մի բան
Վայր դալարի, ի վայրի դալարւոջ
դալար (կանաչ) տեղում
Առ ջուրս հանգստեան հանգիստ,
հանգարտ ջրերի մօտ
Սնուցանեմ, սնուցի, սնո՛ պահել,
կերակրել
Դարձուցանեմ, դարձուցի, դարձո՛
դարձնել
Անձն շունչ. դարձոյց զանձն իմ առ
իս իմ շունչն ինձ դարձրեց. ինձ
հանգիստ տուաւ
Երկնչիմ, երկեայ, երկի՛ր վախենալ
Ցուպ գաւազան, մահակ
Առնեմ, արարի, արա՛ անել
Պատրաստ առնել պատրաստել
Առաջի առաջ, առջև
Ակնյանդիման աչքի առաջ
Նեղիչ նեղող
Օծանեմ, օծի, օ՛ծ օծել
Անապակ անապակ, անխառն գինի
Արբեցուցանեմ, արբեցուցի, արբեցո՛
հարբեցնել
Զհետ ետեւից
Գամ, եկի, ե՛կ, ապառնի Բ. եկից,
եկեսցես, եկեսցէ կը գայ
Բնակել ինձ որ ես բնակուեմ
Ընդ երկայն աւուրս երկար օրեր

## 14.

Ի աւուրսն այնոսիկ, յաւուրսն
յայնոսիկ այն օրերում
Մերձիլ մօտենալ
Արքայութիւն թագաւորութիւն
Բարբառ ձայն, խօսող, կանչող
Ուղիղ առնել ուղղել
Շաւիղ ճանապարհ
Ստեւ բուրդ, մազ
Մաշկեղէն կաշուէ
Ընդ մէջ մէջքին
Մարախ մորեխ
Առ նա նրա մօտ
Մկրտէին մկրտւում էին
Խոստովան լինիլ խոստովանել
Բազումք եկեալք. զբազումս եկեալս
ի մկրտութիւն նորա շատերին, որ
եկել էին իր մկրտութեանը
Ցուցանեմ, ցուցի, ցոյց ցոյց տալ
Պտուղ առնել պտուղ տալ
Համարիլ կարծել. մի՛ համարիցիք
չկարծէ՛ք
Անձն քո դու. անձինք ձեր դուք.
յանձինս ձեր ձեր մէջ
Քարս այս, ի քարանցս յայսցանէ
այս քարերից
Յարուցանեմ, յարուցի, յարո՛ վեր
կացնել, հանել
Աւասիկ ահա
Տապար կացին
Արմ արմատ, ծառի բնի ստորին մասը,
առ արմին արմատի մօտ
Դնի դրուած է
Հասանիմ, հասայ, հասի՛ր կտրուել
Արկանիմ, արկայ, արկի՛ր ձգուել
Ապաշխարութիւն ապաշխարութեան
համար
Որ նա որ
Զկնի ետեւից
Բաւական բաւական, կարող, ար-
ժանի
Ի Հոգին սուրբ եւ ի հուր սուրբ
Հոգով և կրակով (տես 3. Ա. 4)։
Հեծանոց հոսելի։ Որոյ հեծանոցն ի
ձեռին իւրում նրա հեծանոցն իր
ձեռին է
Անշէջ չհանգչող



## 15.

Նա, նորա, նմա, ի նմանէ նրանից
Արգելում, արգելի, արգել արգելել
Պիտոյ է պէտք է. ինձ պիտոյ է ի
քէն մկրտիլ ես պէտք է քեզնից
մկրտուեմ
Առ իս ինձ մօտ
Լնուլ, լցի, լի՛ց լցնել, կատարել
Մկրտեցաւ մկրտուեց
Վաղվաղակի շուտով
Ի ջրոյ անտի ջրից, այն ջրից
Բանամ, բացի, բա՛ց. կրաւորական
բացայ, բացի՛ր բանալ, բացուել
Հաճիլ հաւանել
Ընդ որ հաճեցայ որին հաւանեցի

## 16.

Վարիլ տարուել, քշուել
Տիւ ցերեկ
Քաղցնում, քաղցեայ, քաղցի՛ր քաղ-
ցածանալ
Մատչիմ, մատեայ, մատի՛ր մօտենալ
Հաց, հացիւ հացով
Կեամ, կեցի, կեա՛ց, կեցից, կեցցես,
կեցցէ ապրել
Բան, բանիւ խօսքով
Ածեմ, ածի, ա՛ծ բերել
Կացուցանեմ, կացուցի, կացո՛ կանգ-
նեցնել
Արկանեմ, արկի, ա՛րկ ձգել
Աստի այս տեղից
Ի վայր ցած, ներքև
Հարկանեմ, հարի, հա՛ր խփել, զար-
նել. մի՛ հարցես չխփես. հարկա-
նել զքարի քարի խփել
Տամ, տաց կը տամ
Երթամ, ե՛րթ գնա՛, երթ յետս իմ դէն
գնա, կորի՛ր
Տէր Աստուած քո, Տեառն Աստուծոյ
քում քո Տէր Աստուծուն
Պաշտել պաշտել, ծառայել

## 17.

Լսեմ, լուա, լո՛ւր լսել
Մատնիլ մատնուել
Բնակիլ բնակուել
Յայնկոյս այն կողմը
Որք նստէին նրանք, որ նստած էին.
որոց նստէին նրանց, որ նստած էին
Յայնմհետէ նրանից յետոյ, այնուհետև
Սկսանիմ, սկսայ, սկսի՛ր սկսել
Զգնալ ման գալ
Ընդ եզր եզրով, եզերքով
Կոչիլ կոչուել, անուանուել
Ուռկան ցանց (ձուկ բռնելու)
Նոցա թողեալ նրանք թողնելով
Յառաջ մատչիլ առաջ գնալ, առաջ
անցնել
Զեբեդէոս, Զեբեդեայ, Յակոբոս Զե-
բեդեայ Զեբեդէոսի (որդի) Յակոբոս
Զեբեդէոս հայրն իւրեանց, Զեբե-
դեաւ հարբն իւրեանց, Զեբեդեաւ
հանդերձ հարբն իւրեանց իրենց
հայր Զեբեդէոսի հետ
Մինչ երբ, երբ որ

Ընդ ամենայն կողմն *բոլոր կողմում*
Ուսուցանեմ, ուսուցի, ուսո՛ *սովորեցնել*
Ժողովուրդք *ժողովարաններ*
Ախտ *ցաւ, հիւանդութիւն*
Լուր *համբաւ*
Ընդ ամենայն երկիրն *բոլոր երկիրը*
Մատուցանել, մատուցի, մատո՛ *մօտ բերել*
Ի պէս պէս ցաւս եւ ի տանջանս *պէս պէս ցաւերով և տանջանքներով (տես 3. Ա. 4)*:

## ԿՐԱՒՈՐԱԿԱՆԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

*1) Անկատար ժամանակների մէջ վերջին վանկերի ե և է ձայնաւորները (բացի անցեալ անկատարի եզ. 3-րդ դէմքից) փոխւում են* ի *ձայնաւորի և ներգործական բայը դառնում է կրաւորական՝ գրեմ, գրես, գրէ. կրաւոր. գրիմ, գրիս, գրի...*

*Երբ վերջին վանկերի մէջ* ա, ի, ու *ձայնաւորներն են, բայը նոյն ձեւով կարող է և ներգործական և կրաւորական նշանակութիւն ունենալ. խօսքի մէջ ունեցած դրութիւնից միայն պիտի իմացուի բայի ներգործական կամ կրաւորական լինելը: Ներգործականի և կրաւորականի համար նոյն ձեւն ունին ուրեմն՝* ամ, իմ, ում *վերջացած բայերի բոլոր անկատար ընի ժամանակները, բացի* ամ *վերջացած բայերի Ստոր. ապառնի Ա. ժամանակից (ներգործ. այցեմ, այցես, այցէ... կրաւ. այցիմ, այցիս, այցի): Ներգործական և կրաւորական նոյն ձեւով են և բոլոր բայերի անց. անկատար ժամանակները:*

*2) Կատարեալ ժամանակների մէջ ներգործակերպ խոնարհումը փոխւում է կրաւորակերպի և ներգործական բայը դառնում է կրաւորական: Այսպէս՝* ամ *վերջացած բայերը խոնարհւում են ինչպէս* անամ *վերջացածները,* եմ *ինչպէս* իմ *(սիրեցի—սիրեցայ)* անեմ *և* ում *ինչպէս* անիմ *(տեսի—տեսայ, հեղի—հեղայ):*

*Այստեղ ես* աք, ցուք, ջիր, ջիք *վերջաւորութիւնները նոյն են թէ ներգործականի և թէ կրաւորականի համար:*

*3) Դերբայները նոյն ձեւով կարող են և ներգործական և կրաւորական նշանակութիւն ունենալ. տեսանել=տեսնել կամ տեսնուել. տեսեալ=տեսած կամ տեսնուած. տեսանելոյ=տեսնելու կամ տեսնուելու:* Ել *վերջաւորութիւնը միայն երբեմն փոխւում է* իլ, *տեսանիլ=տեսնուել:*



## 18.

Այր մի, առն միոջ *մի մարդու*
Էին *կային*. առն միոջ էին երկու որդիք *մի մարդ ունէր երկու որդի*
Անկանիմ, անկայ, անկի՛ր *ընկնել*
Ինչք, ընչից, յընչից. յընչիցդ *ինչքերիցդ, ստացուածքիցդ*
Կեանք *ապրանք, ստացուածք*
Յետ *յետոյ*
Օր, աւուրք, աւուրց. յետ ոչ բազում աւուրց *ոչ շատ օրերից յետոյ*
Վատնել *ցրուել, ծախսել, փչացնել*
Սպառել *վերջացնել*
Աշխարհն այն, աշխարհին այնորիկ, յաշխարհին յայնմիկ *այն աշխարհում*
Չքաւորիլ *աղքատանալ, կարօտութիւն քաշել*
Յարիլ *միանալ, կպչել*. յարեցաւ ի մի ոմն ի քաղաքացւոց *քաղաքացիներից մէկի մօտ մտաւ*
Յղել *ուղարկել*
Ագարակ *արտ, հանդ*
Արածել *արածացնել*
Որովայն *փոր*
Եղջիւր, յեղջերէ *եղջիւրից (եղջերենի ծառի պտուղը)*
Գալ ի միտս իւր *ինքն իրան գալ, խելքի գալ*
Մեղանչեմ, մեղայ, մեղի՛ր *մեղք գործել*
Եւ ոչ եւս եմ արժանի *այլ ես արժանի չեմ*
Հեռագոյն *հեռու, շատ հեռու*
Գթամ, գթացայ, գթա՛ *գթալ, խղճալ*
Անկանիլ զպարանոցաւն *վզովը ընկնել*
Հանեմ, հանի, հա՛ն *հանել*
Պատմուճան *հագուստ*
Ագուցանեմ, ագուցի, ագո՛ *հագցնել*
Տամ, տո՛ւր, տո՛ւք *տուէք*
Պարարակ *բտած, գիրացրած*
Զենում, զենի, զե՛ն *մորթել*
Ուտեմ, կերիցուք *ուտենք, կուտենք*
Լինիմ, լիցուք *լինինք, կը լինինք*
Երէց *մեծ, աւագ*
Մերձ լինել, մերձ եղեւ *մօտենալ*
Ողջամբ *ողջ, ողջ և առողջ*
Ընդունիմ, ընկալայ, ընկա՛լ *ընդունել*
Արտաքս *դուրս*
Ամ *տարի*
Անցանել զպատուիրանաւ *պատուէրից, խօսքից դուրս գալ*
Տամ, ետուր *տուիր*
Եղանիմ, եղէց *կը լինեմ, լինիմ*
Ընդ բարեկամս *բարեկամների հետ*
Ուտեմ, եկեր *կերաւ*
Հանապազ *միշտ*
Ընդ իս *ինձ հետ*
Որ ինչ *ինչ որ*
Պարտ էր *պէտք էր*

## ՍԵՌԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՅ.

*Անցեալ դերբայի հետ ենթական փոխանակ ուղղական հոլովի՝ կարող է նաև սեռական դրուել. օրինակ՝* ժողովեալ *զամենայն կրասեր* որդւոյն՝

*գնաց յաշխարհ հեռի։ Եւ* նոցա թողեալ *վաղվաղակի զգործիսն՝ գնացին զհետ նորա։* Որոց առեալ *զլապտերս իւրեանց՝ ելին ընդ առաջ փեսային։*

## 19.

Փառք, փառօք *փառքով*
Երիվար *ձի*
Հեծեալ *ձիաւոր*
Ընկենում, ընկեցի, ընկեցեր, ընկեաց *կամ* ընկեց *ձգել*
Ընդունելի *ընդունող, ապաւէն.* օգնական ընդունելի իմ Տէր *իմ օգնականս և ապաւէնն է Տէրը*
Եղանիմ, եղեւ *եղաւ*
Փառաւոր առնել *փառաւորել*
Բարձր առնել *բարձրացնել*
Խորտակել *ջարդել, մանրել*
Տէր անուն նորա *Տէր է նրա անունը*
Ընտիրք հեծելոց *ընտիր հեծեալներ*
Սպառազէն *ամբողջապէս զինուած, լաւ զինուած*
Ընկղմիլ *ընկղմուել, ջրի տակ սուզուել*
Ընկլնում, ընկլի. *կրաւոր.* ընկլալ *կուլ տալ. կուլ գնալ*
Վէմ *քար*
Սրտմտութիւն *բարկութիւն*
Աւար *կողոպուտ, թալան*
Լցուցանեմ, լցուցի, լցո՛ *լցնել, լիացնել*

Անձն իմ *ես.* զանձն իմ *ինձ*
Սաստկել *սաստկեցնել, սպանել*
Փառաւորեա՛լդ *դո՛ւ որ փառաւորուած ես*
Նշա՛ն *հրաշք*
Ձգել *մեկնել, երկարացնել*
Կլանեմ, կլի, կո՛լ *կուլ տալ*
Ժողովուրդ քո այս, ժողովրդեան քում այսմ *քո այս ժողովրդին*
Փրկել *ազատել*
Բանակետղ *բանակի տեղը. բնակած տեղը, բնակարան.* բանակետղ սրբութեան քո *սուրբ բնակավայրը*
Երկն, երկունք *ցաւ*
Ունիմ, կալայ, կա՛լ *բռնել*
Տագնապիլ *տակն ու վրայ լինել, իրար անցնել*
Դողումն *դող*
Լեառն, ի լեառն *լեռան վրայ*
Ի պատրաստութիւն բնակութեան քո *քո բնակութեան համար պատրաստած տեղը*
Սրբութիւն *սուրբ տեղ, սրբարան*
Տէր թագաւոր *Տէրն է թագաւոր*
Եւ և՛ւս *և է՛լ աւելի*

## 20.

Քաղցեալ *քաղցած*
Ծարաւի *ծարաւ*
Յագիլ *կշտանալ*
Այն, այնոցիկ *նրանց (արտկ. հոլ.)*

Խաղաղարար *խաղաղութիւն անող, հաշտեցնող*
Դուք, ձեր, ի ձէնջ, զձէնջ *ձեզանից, ձեր մասին*



Լինիմ, լե՛ր, լերո՛ւք *եղէք՝* ուրախ լինել *ուրախանալ*
Յառաջ քան զձեզ *ձեզնից առաջ*
Անհամիլ *անհամանալ*
Զի՞նչ, ի՞ւ *ինչո՞վ*
Աղել *աղ անել.* ի՞ւ յաղիցի *ինչո՞վ պիտի աղ արուի*
Ինչ, իմիք *բան, բանի.* ոչ իմիք *ոչ մի բանի*
Ազդել *պէտք գալ*
Կոխան լինել *ոտնակոխ լինել*
Կարեմ, կարացի *կարողանալ.* ոչ կարէ *չի կարող*
Թաքչիմ, թաքեայ, թաքի՛ր *թաքնուել*
Լեառն, լերին *լեռ*
Կամ, կացի, կա՛ց *կանգնել, կենալ*
Լուցանեմ, լուցի, լո՛յց *վառել*
Գրուան *կոտ (չափ)*
Ընդ գրուանաւ *գրուանի տակ*
Աշտանակ *ճրագակալ, մոմակալ*
Ամենեքեան, ամենեցուն *ամենքին*
Համարիլ *կարծել, համարել*
Գամ, եկի *եկայ*
Լուծանել, լուծի, լո՛յծ *արձակել, քանդել*
Լնուլ, լցի, լի՛ց *լրացնել*
Յովտ *հրէական փոքրիկ տառ. կէտ*
Նշանախեց *նշանի կոտր, փոքրիկ տառ*
Որ ոք *ով որ*
Պատուիրանս այս փոքր, ի պատուիրանացս յայսցանէ ի փոքունց *այս փոքր պատուիրաններից*
Որ *նա որ, ով որ*
Առաւելում, առաւելի, առաւե՛լ *կրաւոր.* առաւելալ *աւելացնել. աւելանալ*
Լսեմ, լուայ, լո՛ւր, լուարո՛ւք *լսեցիք*
Ամենայն որ *ամէն մարդ որ. ամէն ով որ*
Տարապարտուց *զուր տեղը*

Ատեան *դատարանի ատեան*
Մորոս *խենթ, խելառ*
Գեհեն *դժոխք*
Պատարագ *նուէր, զոհ*
Խէթ *կասկած.* ունի ինչ խէթ զքէն *քո դէմ մի խէթ ունի. քեզնից մի կասկած ունի*
Երթամ, ե՛րթ *գնա՛*
Հաշտիմ, հաշտեցայ, հաշտեա՛ց *հաշտուել*
Ընդ եղբօր քում *քո եղբօր հետ*
Լինիլ, լե՛ր, լերո՛ւք *եղի՛ր, եղէ՛ք*
Իրաւախոհ *արդարադատ*
Ոսոխ *հակառակորդ*
Վաղագոյն *շուտով, առաջուց*
Նաքարակիտ *հռոմէական դրամ, հաւասար երկու լումայի. (իսկ լուման հաւասար էն դնում մի հարիւրերորդ ֆրանկի)*
Երդնում, երդուայ, երդուի՛ր *երդուել.* մի՛ երդնուցուս *չերդուե՛ս*
Մի՛ *մի՛, ոչ, չը*
Պատուանդան *ոտքի տակի ատախճան*
Սպիտակ առնել *սպիտակացնել*
Թուխ առնել *թխացնել, սեւացնել*
Եղանիմ, եղիցի՛ *լինի՛*
Ընդ ական *աչքի տեղ.* ընդ ատաման *ատամի տեղ*
Ապտակ ածել *ապտակ տալ*
Որ կամիցի ոք=որ ոք կամիցի *ով որ կամենայ*
Դատել *դատել, դատ անել, դատ վարել*
Բաճկոն *վրայի հագուստ, պատմուճան*
Տարապարհակ *անվարձ պահակ, պահապան.* տարապարհակ վարել *իբրև անվարձ պահակ տանել*
Որում խնդրէ ի քէն՝ տուր *ով որ խնդրէ քեզնից՝ տո՛ւր*

Ապաքէն *անշուշտ, ի հարկէ*
Անիծիչ *անիծող*
Լլկել *չարչարել*
Այն, այնոքիկ, զայնոսիկ *նրանց (հայց. հոլ.)*
Ո՞չ ապաքէն չէ՞ *որ*
Արդ *այժմ, արդ*
Եղանիմ, եղերո՛ւք *եղէ՛ք*
Ի ցոյց ինչ նոցա *նրանց ցոյց տալու համար*
Փող հարկանել *փող փչել,*
Իսկ *հենց, իսկապէս*
Դուռն, դրունք, դրունս *կամ* դուրք, դուրս *դռներ*
Առ հայր քո *դէպի քո հայրը*
Մինչչեւ *քանի դեռ չ...*
Ինչ *բան.* մինչչեւ ձեր խնդրեալ ինչ իցէ ի նմանէ *քանի դեռ դուք նրանից մի բան խնդրած չէք լինիլ*
Հանապազորդ *ամենօրեայ*
Թողուլ, թողի, թո՛ղ *թողնել, ներել*
Պարտիք *պարտք*
Ապականել *փչացնել, աւերել*
Ոստին *ժանգ*
Ական *փոս, ծակ.* ական հատանել *փոս բանալ, պատը կտրել, ծակել*
Առատ *առատ, յստակ, պարզ, լուսաւոր*
Տէր, տեարք, տերանց *տէրերի*
Մեծարել *պատուել*
Մամոնայ *փող, հարստութիւն*
Այդ, այդորիկ. վասն այդորիկ *դրա համար*
Ոգի *կեանք, անձ*
Ըմպեմ, արբի, ա՛րբ *խմել*
Ագանիմ, ագայ, ագի՛ր *հագնել*
Վարել *վարուցանք անել, ցանել*
Ո՞ *ով*
Առ հոգալ իւրում *իր հոգալու համար*
Յաւելում, յաւելի, յաւել *աւելացնել*
Զի՞ *ի՞նչ, ինչո՞ւ*
Ջանալ *աշխատել, ջանք անել*
Նիւթել *մանել, հիւսել*
Զգենում, զգեցայ, զգեցիր, զգեցայց, զգեցցիս, զգեցցի *հագնել*
Վայր *տեղ, դաշտ.* խոտ ի վայրի *վայրի խոտ, դաշտի խոտ*
Է՛ *կայ*
Վաղիւ *էգուց, վաղը*
Հնոց *կրակարան, թոնիր*
Զգեցուցանել, զգեցուցի, զգեցո՛ *հագցնել*
Շատ *բաւական*
Օր, աւուր. շատ է աւուրն *բաւական է օրուայ համար*
Չար *չարիք, հոգս, նեղութիւն*
Դատելոց էք *դատուելու էք*
Շիւղ *ծիղ, շուղ*
Հանեմ, հանի. հա՛ն *հանել*
Ահա՛ւասիկ *ահա*
Առ ոտն կոխել *ոտնակոխ անել, կոխոտել*
Դառնամ, դարձայ, դարձի՛ր, դարձեալ *դառնալ, յետ դառնալ*
Երգիծուցանել, երգիծուցի, երգիծո՛ *պատառել*
Տամ, տացի *կը տրուի,*
Հայցել *ուզել, խնդրել, որոնել*
Բաղխել *խփել, ծեծել. դուռը ծեծել*
Յոր խնդրիցէ *որից խնդրի, որից խնդրելու լինի*
Կամիմ, *Սահմ, Ապ. Ա. յոգն. 2-րդ դէմք* կամիցիք *կամ* կամիջիք
Առնեմ. արարի, արա՛, արարէ՛ք. *Ապառնի Բ.* արարից, արասցես, արասցէ... *անել*
Ընդ նեղ դուռն *նեղ դռնով*
Համարձակ *արձակ, լայն*



Ընդ նա *նրանով*
Անձուկ *նեղ*
Ի ներքոյ *ներսից*
Ճանաչեմ, ծանեայ, ծանի՛ր, ծանուցեալ *ճանաչել*
Որն այն, յաւուրն յայնմիկ *այն օրը*
Զօրութիւն *հրաշք*
Ի բաց կալ *հեռու կենալ, գէն կենալ*
Ո, ոյք *ով, ովքեր*
Բան իմ այս, զբան իմ զայս, զբանս իմ զայսոսիկ *իմ այս խօսքերը*
Այր իմաստուն, առն իմաստնոյ *իմաստուն մարդու*
Խաղալ *տեղից շարժուել, վեր կենալ, բարձրանալ*
Շնչել *փչել*
Կատարել *վերջացնել*
Վարդապետութիւն *ուսում, քարոզութիւն*
Զարմանալ ընդ... *զարմանալ (մի բանի վրայ)*

---

## Մ Ի՛ ԱՐԳԵԼԱԿԱՆԸ.

Մի՛ *արգելական գրւում է՝*

*1) Ներկայ արգելականի վրայ, ինչպէս և աշխարհաբարում. օրինակ՝ Մի՛ գնար, մի՛ գնայք։*

*2) Ապառնի ժամանակների հետ և կազմում է ապառնի արգելական՝ Մի՛ երդնուցուս սուտ=սուտ չերդուե՛ս։*

*3) Անորոշ դերբայի հետ՝ Ամենևին մի՛ երդնուլ=ամենևին չերդուե՛լ կամ՝ ամենևին չպիտի՛ երդուել։ Մի՛ կալ հակառակ չարին=չարին հակառակ չկենա՛լ կամ չարին չպիտի՛ հակառակ գնալ։*

## ԲԱՂԱԴՐԵԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ.

*1) Օժանդակ բայերն են* եմ *և* լինիմ։ Եմ *բայի Սահմ. ներկայ, անց. անկատար և ապառնի ժամանակների հետ (եմ, էի, իցեմ) դրւում են անցեալ և ապառնի դերբայները. իսկ* լինիմ *բայի բոլոր ձևերի հետ միայն անցեալ դերբայը։*

*2) Դերբայները թէ ներգործական և թէ կրաւորական նշանակութիւն ունին, ուստի բաղադրեալ ժամանակներն էլ կարող են կրկին նշանակութեամբ գործածուել՝ դատելոց էք=դատելու էք կամ դատուելու էք։*

*3) Ներգործական անցեալ դերբայի հետ* եմ *և* լինիմ *բայերի բոլոր դէմքերի տեղ կարող է գործածուել այդ բայերի եզ. 3-րդ դէմքը. միայն այդ ժամանակ ուղղական հոլովով ենթական փոխւում է սեռական խնդրի՝ տեսեալ եմ ես=տեսեալ է իմ։*

*4)* Եմ *բայով բաղադրուած ժամանակներն են։*

## 1. Անցեալ դերբայով

### Ներկայ

| | |
|---|---|
| տեսեալ եմ | իմ տեսեալ է |
| տեսեալ ես | քո տեսեալ է |
| տեսեալ է | նորա տեսեալ է |
| տեսեալ եմք | մեր տեսեալ է |
| տեսեալ էք | ձեր տեսեալ է |
| տեսեալ են | նոցա տեսեալ է |

### Անց. անկատար

| | |
|---|---|
| տեսեալ էի | իմ տեսեալ էր |
| տեսեալ էիր | քո տեսեալ էր |
| տեսեալ էր | նորա տեսեալ էր |
| տեսեալ էաք | մեր տեսեալ էր |
| տեսեալ էիք | ձեր տեսեալ էր |
| տեսեալ էին | նոցա տեսեալ էր |

### Ապառնի

| | |
|---|---|
| տեսեալ իցեմ | իմ տեսեալ իցէ |
| տեսեալ իցես | քո տեսեալ իցէ |
| տեսեալ իցէ | նորա տեսեալ իցէ |
| տեսեալ իցեմք | մեր տեսեալ իցէ |
| տեսեալ իցէք | ձեր տեսեալ իցէ |
| տեսեալ իցեն | նոցա տեսեալ իցէ |

## 2. Ապառնի դերբայով

| Ներկայ | Անց. անկատ. | Ապառնի |
|---|---|---|
| տեսանելոց եմ | տեսանելոց էի | տեսանելոց իցեմ |
| տեսանելոց ես | տեսանելոց էիր | տեսանելոց իցես |
| տեսանելոց է | տեսանելոց էր | տեսանելոց իցէ |
| տեսանելոց եմք | տեսանելոց էաք | տեսանելոց իցեմք |
| տեսանելոց էք | տեսանելոց էիք | տեսանելոց իցէք |
| տեսանելոց են | տեսանելոց էին | տեսանելոց իցեն |



## 21.

Այր թագաւոր, առն թագաւորի *թագաւոր մարդու, թագաւորի*
Համար առնուլ *հաշիւ առնել, հաշիւ տեսնել*
Մատուցանիմ, մատուցայ *մօտ բերուիլ, մօտենալ*
Քանքար *տաղանդ (եբրայական դրամ արծաթ և ոսկի. արծաթի տաղանդը հաւասար են դնում մօտ 8593 ֆրանկի, իսկ ոսկի տաղանդը՝ 137500 ֆր.)*
Որ զինչ եւ ունիցի *ինչ որ էլ ունենայ*
Երկայնամիտ *համբերող*
Առ իս *դէպի ինձ, իմ վերաբերմամբ*
Ծառայակից *ընկեր ծառայ*
Պարտիլ *պարտ լինել. պարտաւոր լինել*
Դահեկան *հռոմէական դրամ, հաւասար ութսուն լումայի (մի լուման հաւասար են դնում մի հարիւրերորդ ֆրանկի)*
Որ *ինչ որ, այն որ*
Պարտիսդ *պարտ ես դու*
Անկանիլ առ ոտս *ոտներն ընկնել*
Երթամ, չոգայ, ե՛րթ *գնալ*
Ո՞չ էր պարտ եւ քեզ ողորմել *դու էլ չպիտի՞ ողորմէիր*

## ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Պարտ է, պիտոյ է, արժան է, հարկ է *կապակցութիւնների հետ անորոշ դերբայը մի տրական խնդրով ստանում է հարկադրական եղանակի նշանակութիւն.* ինձ պարտ է *ողորմել, քեզ պարտ է ողորմել, նմա պարտ է ողորմել, մեզ պարտ է ողորմել, ձեզ պարտ է ողորմել, նոցա պարտ է ողորմել=ես պիտի ողորմեմ, դու պիտի ողորմես, նա պիտի ողորմի և այլն:* Ինձ պիտոյ է *մկրտիլ=ես պիտի մկրտուեմ. քեզ պիտոյ է մկրտիլ=դու պիտի մկրտուես և այլն.* Ինձ արժան է *գնալ,* ինձ հարկ է *գնալ=ես պէտք է գնամ. քեզ արժան է գնալ=դու պիտի գնաս և այլն:*

## 22.

Աղբիւր, աղբերք, *(աղբիւրք)* աղբերս. փափագէ յաղբերս *փափագում է աղբիւրներին*
Ջուր, ջուրք, ջրոց *կամ* ջուրց *ջրերի*
Անձն իմ *իմ անձը, ես*
Ի տուէ եւ ի գիշերի *օր ու գիշեր, գիշեր ցերեկ*
Զօրհանապազ *ամեն օր*

Ուրպէս *ինչպէս, երբ որ.* զպյս որ-
պէս յիշէի *այս որ յիշում էի*
Տառապիլ *նեղուիլ, չարչարուիլ*
Ես, զիս, յիս *ինձնում*
Անձն *հոգի*

Յարկ ծածկ. *ընդ յարկաւ յարկի տակ*
Ի ձայն *ձայնով*
Բարեկենդանութիւն *ուրախութիւն, ուրախ օր ու կեանք*
Ընդէ՞ր *ինչո՞ւ*

---

## Ը Ն Դ   Ն Ա Խ Դ Ի Ր Ը.

1) Եզակի տրականի և յոգնակի հայցականի հետ նշանակում է նոյն օրինակ՝ ընդ նմա, ընդ եղբօր քում. հովիւք երգեն ընդ հրեշտակս. ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին. ուրախ եղէց ընդ բարեկամս իմ: Ընդ իս=ինձ հետ:

2) Սեռական հոլովի հետ նշանակում է՝ փոխանակ, տեղ. օրինակ՝ ակն ընդական և ատամն ընդ ատաման:

3) Գործիականի հետ նշանակում է տակը՝ ընդ գրուանաւ, ընդ ծառով:

4) Հայցականի հետ՝ ընդ այլ ճանապարհ գնացին=ուրիշ ճանապարհով: Ընդ ա՛յն իսկ անցանելոց էր=այն տեղով: Զգնայր Յիսուս ընդ եզր ծովուն Գալիլեացւոց: Զաչսն ընդ երկինս ամբառնալ=աչքերը դէպի երկինք բարձրացնել: Առել ընդ միտս=մաքում առել: Ընդ երկայն աւուրս=երկար օրեր: Ընդ մէջ իւր=իւր մէջքին: Շրջէր Յիսուս ընդ ամենայն կողմն Գալիլեացւոց=բոլոր կողմում: Ել ել լուր նորա ընդ ամենայն երկիրն Ասորւոց: Դա է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ:

## 23.

Աշխարհազործ *աշխարհի վրայ բաժանուած, աշխարհում եղած*
Մեծվայելչութիւն *փառաւոր մեծութիւն, փառահեղութիւն*
Արկանիմ, արկայ, արկի՛ր *վրան ձգել*
Օրոց *վերարկու, զգեստ*

Զգել *մեկնել, պարզել, սփռել, տարածել*
Խոռան *վրան*
Ո *ով, որ, նա որ, ո՛վ, որ*
Հոգի *քամի շունչ*
Կիզել *այրել, վառել,* հուր կիզելոյ *այրող կրակ*



Հաստատութիւն *հաստատութիւն, ամրութիւն, հիմք*
Սաստ *սաստիկ և ահաւոր հրաման, արգելք ու յանդիմանութիւն*
Դնեմ, եդի, եդիր, եդ, եդաք, եդիք, եդին. եդից, դիցես, դիցէ, դիցուք, դիջիք, դիցեն *դնել*
Ի ծածկել *ծածկելու համար*
Ծործոր *ձորակ.* ընդ ծործորս *ձորակներով*
Արբուցանեմ, արբուցի, արբո՛ *խմեցնել*
Ցիռ *վայրենի էշ*
Դալարի *կանաչի, կանաչեղէն*
Ի ծառայութիւն *ծառայութեան համար, ծառայելու համար*
Ուրախ առնել *ուրախացնել*
Զուարթ առնել *զուարթացնել*
Ապառէն *ապաստան*
Լեառն բարձր, լերինք բարձունք *բարձր լեռներ*
Գնալ *գնալ, ման գալ*
Կորիւն *ձագ, քոթոտ*
Մորի *բոյն, որջ*

Դադարել *հանգչել, պառկել*
Վաստակ *աշխատանք*
Ուրպէս զի՞ ո՞րքան, ի՞նչքան
Անդորր *ընդարձակ, հանգիստ*
Զեռուն *սողացող, վխտացող*
Գոյ *կայ*
Մանր, մանունք. զազանք մանունք *մանր գազաններ*
Վիշապ *լեւիաթան*
Ստեղծանեմ, ստեղծի, ստե՛ղծ *ստեղծել*
Ամենեքեան, ամենեցուն, զամենեսեան *ամենքին*
Կամօք քովք *քո կամքով*
Ժամ, ժամու, ի ժամու *ժամանակին*
Ոգի *հոգի, շունչ*
Պակասիլ *պակասիլ, մեռնել*
Ստանալ *ստանալ, ձեռք բերել, ըստեղծել*
Մերձիլ ի... *գիպչել*
Տամ դողալ *դողացնել*
Մինչեւ ե՛մ ես *քանի կա՛մ ես*
Ամբարիշտ *անօրէն, անիրաւ*

---

## Ի, Յ   Ն Ա Խ Դ Ի Ր.

Ի, յ նախդիրը հայցական հոլովի հետ, բացի վերևում դրածներից (Յ. Ա.), նշանակում է նաև համար. ես մկրտեմ զձեզ ջրով յապաշխարութիւն: Ոչ եմ գառնան ի ծածկել զերկիր: Բուսուցեր զխոտ անասնոց, դդալար ի ծառայութիւն մարդկան: Ի ցոյց ինչ նոցա:

## 24.

Առ ծովեզերն *ծովեզրին*
Մինչեւ մտանել նմա ի նաւն եւ նստել *մինչև որ նաւը մտաւ և նստեց*
Առ ծովեզերբն *ծովեզրի մօտերը, ծովեզրին*

Խօսէր բազումս *շատ բաներ խօսեց*
Սերմանահան *սերմնացան*
Ի սերմանելն իւրում *նրա ցանելիս, երբ նա ցանում էր*
Է՛ր որ կար որ, *մէկը, որը*

Առ ճանապարհաւ *ճանապարհի մօտերը, վրայ*
Գոմ *կամ.* գոլ *լինել.* գոյ *կայ,* գոն *կան.* գոյր *կար,* գոյին *կային.*
Գուցէ *լինի, կը լինի, կարելի է լինի:*
Առ ի չգոյէ *չլինելուց*
Հիւթ *նիւթ*
Տապանալ *տաքանալ*
Հեղձուցանեմ, հեղձուցի, հեղձո՛ *խեղդել*
Երկիր *երկիր, հող.* երկիր բարի *լաւ հող*

25.

Ումն *մի, մէկը, մի մարդ*
Օրինական *օրէնքի վարդապետ*
Վարդապետ *ուսուցիչ, վարժապետ*
Ընթեռնում, ընթերցայ, ընթերցի՛ր, ընթերցայց, ընթերցցիս, ընթերցցի *կարդալ*
Տամ, ետու, ետուր, ես, տուաք, ետուք, ետուն *տալ*
Վէրս ի վերայ եդին *վիրաւորեցին*
Դէպ եղեւ *պատահեց*
Ընդ այն ճանապարհ, ընդ նոյն տեղի, ընդ նոյն *այն ճանապարհով նոյն տեղով*
Զանց առնեմ *զանց անել, թողնել անցնել*
Առ նովաւ *նրա մօտով*
Արկանեմ, արկի, արկ *ձգել.* արկեալ ի վերայ ձէթ *վրան ձէթ ածելով*
Գրաստ *բեռնակիր անասուն, էշ, ջորի*
Պանդոկ *իջեւան*
Դարմանել, դարման տանիլ *հոգ տանել, խնամել*
Ի վաղիւ անդր *միւս օրը*
Ծախել *ծախսել*
Ի դա *դրա վրայ*
Գալուստ, ի գալստեան իմում *իմ գալիս*
Երեքեան, զերեսեան, յերեցունց *երեքից*
Յերեցունց ի նոցանէ *նրանց երեքից, այն երեքից*
Մերձաւոր *մօտիկ մարդ, ընկեր*
Լինիմ, լեալ *եղած, եղել*
Որ *նա որ*

---

## Ա. ՀՈԼՈՎՈՒՄ.

*1) Գրաբարում կան ինն հոլովումներ հետևեալ իրենց յատուկ հոլովական ձևերով: Վերջին չորս հոլովման համար առնուած են նաև եզակի ուղղական-հայցական հոլովների վերջերը:*



| | 1. | | 2. | | 3. | | 4. | | 5. | | 6. | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ուղղ. | — | ք | — | ք | — | ք | — | ք | — | ք | ի | իք |
| Հայց. | — | ս | — | ս | — | ս | — | ս | — | ս | ի | իս |
| Ս. Տր. | ի | ից | ու | ուց | ոյ | ոց | այ | աց | ի | աց | ւոյ | եաց |
| Բաց. | է | ից | է | ուց | ոյ | ոց | այ | աց | է | աց | ւոյ | եաց |
| Գործ. | իւ | իւք | ու | ուք | ով | ովք | աւ | աւք (օք) | աւ | աւք (օք) | եաւ | եաւք (եօք) |

| | 7. | | 8. | | 9. |
|---|---|---|---|---|---|
| Ուղ. | ն | ունք<br>անք | ն | ինք | ըր, ըղ երք, եղք |
| Հայց. | ն | ունս<br>անս | ն | ինս | ըր, ըղ երս, եղս |
| Ս. Տր. | ան | անց | ին | անց | եր, եղ երց, եղց |
| Բաց. | անէ | անց | նէ | անց | երէ, եղէ երց, եղց |
| Գործ. | ամբ | ամբք | ամբ | ամբք | երբ, եղբ երբք, եղբք |

*2) Հոլովումները ճիշտ որոշւում են միայն եզակի և յոգնակի սեռական-տրականով. մեծ մասի համար առկայն բաւական է իմանալ միայն եզակի սեռական-տրականը կամ գործիականը, աւելի ևս յոգնակի սեռական-տրական-բացառականը, որովհետև այս վերջին ձևն աւելի է գործածւում, քան միւսները:*

*3) Յոգնակի գործիականը կազմւում է եզակի գործիականի վրայ ք աւելացնելով. միայն պիտի նկատի ունենալ, որ աւ վերջաւորութիւնը ք-ից առաջ դարձել է օ. և այսպէս էլ գրում են սովորաբար՝ փառաւք = փառօք. իսկ իւ (=իվ) վերջաւորութիւնը յոգն. ք-ից առաջ արտասանւում է ինչպէս իւ երկբարբառ:*

---

## Բ. ՁԱՅՆԱՓՈԽՈՒԹԻՒՆ.

*1) Հոլովելիս, երբ շեշտն անցնում է յաջորդ վանկին, երկբարբառներն և ձայնաւորները կրում են հետևեալ փոփոխութիւնը. եա=ե. ոյ=ու. եայ=է. է=ի. ի, ու=ը (կամ սղւում է). օրինակ՝ սենեակ, սենեկի. մանկութեան, ի մանկութենէ. լոյս, լուսոյ. քրիստոնեայ, քրիստոնէի. սէր, սիրոյ. գիր, գրոյ. ջուր, ջրոյ:*

*2) Բազմավանկ անունների վերջի ի ձայնաւորը յաջորդ ո ձայնաւորից առաջ դառնում է ւ (որդի-որդւոյ), իսկ ա (օ) ձայնաւորից առաջ՝ ե (եկեղեցի—եկեղեցեաւ, եկեղեցեօք)։*

---

## Դ. ՀՈԼՈՎՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ.

1. Ի-ից հոլովում. 2. Ու-ուց հոլովում.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ուղ. | սիրտ | սիրտք | գրաստ | գրաստք |
| Հայց. | սիրտ | սիրտս | գրաստ | գրաստս |
| Ս. Տր. | սրտի | սրտից | գրաստու | գրաստուց |
| Բաց. | ի սրտէ | ի սրտից | ի գրաստէ | ի գրաստուց |
| Գործ. | սրտիւ | սրտիւք | գրաստու | գրաստուք |

3. Ո-ոց հոլովում. 4. Ա-աց հոլովում. 1)

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ուղ. | գետ | գետք | տիրան | տիրանք |
| Հայց. | գետ | գետս | տիրան | տիրանս |
| Ս. Տր. | գետոյ | գետոց | տիրանայ | տիրանաց |
| Բաց. | ի գետոյ | ի գետոց | ի տիրանայ | ի տիրանաց |
| Գործ. | գետով | գետովք | տիրանաւ | տիրանաւք (-օք) |

*1) Այսպէս հոլովւում են սովորաբար յատուկ անունները, որոնց յոգնակին չի գործածւում.*

5. Ի-աց հոլովում 6. Իոյ-եաց հոլովում 2)

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ուղ. | ընկեր | ընկերք | այգի | այգիք |
| Հայց. | ընկեր | ընկերս | այգի | այգիս |
| Ս. Տր. | ընկերի | ընկերաց | այգւոյ | այգեաց |
| Բաց. | յընկերէ | յընկերաց | յայգւոյ | յայգեաց |
| Գործ. | ընկերաւ | ընկերաւք (-օք) | այգեաւ | այգեաւք (-եօք) |

*2) Այսպէս հոլովւում են ի վերջացած բազմավանկ անուններ։ Այս բառերից մի քանիսը (որդի, հոգի և այլն) հոլովւում են այսպէս՝ ուղղ. հայց. որդի, ս. տ. որդւոյ, բաց. յորդւոյ գործ. որդւով։ Յգն. ուղղ. որդիք, հայց. որդիս, ս. տ. որդւոց, բաց. յորդւոց, գործ. որդւովք։*



7. Ան-անց հոլովում* 8. Ին-անց հոլովում *

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ուղ. | ակն | ակունք (ականք) | անձն | անձինք |
| Հայց. | ակն | ակունս (ականս) | անձն | անձինս |
| Ս. Տր. | ական | ականց | անձին | անձանց |
| Բաց. | յականէ | յականց | յանձնէ | յանձանց |
| Գործ. | ակամբ | ակամբք | անձամբ | անձամբք |

* Ռն *վերջացած մի քանի բառերի մէջ* ռ *բաղաձայնը, երբ հեռանում է վերջին* ն-*ից, դառնում է* ր. *ամառն, ամարան. ձմեռն, ձմերան. դուռն, դրան. լեառն, լերին։*

9. Եր-երց հոլովում.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ուղ. | դուստր | տագր | դստերք | տաեգրք |
| Հայց. | դուստր | տագր | դստերս | տաեգրս |
| Ս. Տր. | դստեր | տաեգր | դստերց | տաեգրց |
| Բաց. | ի դստերէ | յտաեգրէ | ի դստերց | յտաեգրց |
| Գործ. | դստերբ | տաեգրբ | դստերբք | տաեգրբք |

*Այս բառերի յոգնակին կարող է նաև աց, աւք (օք) վերջանալ՝ տաեգրաց, տաեգրօք։*

## 26.

Լեառն, լերին, ի լեռնէ. ի լեռնէ անցի *լեռիցը, այն լեռից*
Սրբել *մաքրել*
Ոք, ումեք, մի՛ ումեք *ոչ ոքի*
Ցուցանել, ցուցի, ցո՛յց *ցոյց տալ*
Անձն քո, զանձն քո *քեզ*
Ի վկայութիւն *վկայութեան համար*
Անկեալ կայ *ընկած է*
Զարաչար *սաստիկ*
Ընդ յարկաւ, ընդ իշխանութեամբ *յարկի տակ, իշխանութեան տակ*
Ես, զիս, իմ, ինձ, յինէն, ինեւ·ընդ ինեւ *իմ ձեռի տակ*
Այլ, այլոյ, այլում *ուրիշին*
Հաւատացերդ *դու հաւատացիր*
Անկեալ դնէր *ընկած էր*
Տապանեալ *ջերմել, տենդել*
Ունիմ, կալայ, կա՛լ. կալաւ զձեռանէ *ձեռից բռնեց*
Յոտն կալ *ոտքի կանգնել, վեր կենալ*
Այս, այսք, այսոց *այդ, դա*

Ինքն, իր, իրեն, զիրեն *իր շուր- ջը*
Դպիր *կարդացող, գրագիր*
Ցոր վայր եւ երթիցես *որ տեղ էլ գնաս*
Աղուիսուց որջք զոն եւ թռչնոց երկ- նից բոյնք, այլ որդւոյ մարդոյ ոչ գոյ, ուր դիցէ զգլուխ իր *աղ- ւէսները որջեր ունին և երկնքի թռչունները բոյներ, բայց մարդու որդին չունի մի տեղ, ուր դնէ իր գլուխը*
Մի ոմն *մէկը, մի մարդ*
Մինչ նաւին ծածկել յալեաց անտի *այնպէս որ նաւը ծածկւում էր ալիքններից*
Կորնչիմ, կորեայ, կորի՛ր, կորուսեալ *կորչել*
Վատասիրտ *վախկոտ*
Սաստել *սաստիկ հրաման տալ, ար- գելել*
Չարաչար *խիստ չար*
Որպէս զի *այնպէս որ*
Զի՞ կայ մեր եւ քո *ի՞նչ ունինք մենք և դու, ի՞նչ ունիս մեզ հետ*
Տարաժամ *անժամանակ*
Հեռագոյն *բաւական հեռու, շատ հեռու*
Արոտական *արածող*
Ի դարէ անտի *դարից, այն դարից*
Իր, իրք *բան, իրողութիւն*

---

## *ՀՈԼՈՎՈՒՄ.*

*1) Ստացական դերանունները՝ իմ, քո, իւր, մեր, ձեր և մի քանի ուրիշ բառեր՝ մի, այլ, որ՝ եզակի տրական հոլովն ունի* ում *վերջաւորու- թեամբ, իսկ բացառականը՝* մէ. *իմ, իմոյ, իմում, յիմմէ, իմով: Այլ, այլոյ, այլում, յայլմէ, այլով: Որ, որոյ, որում, յորմէ, որով:*

*2) Իմ, քո, իւր, մեր, ձեր ստացական ածականները գոյականի ուղ- ղական և հայցական հոլովների հետ անհամաձայն են մնում:*

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ուղ | *ծառայ իմ* | *ծառայք իմ* |
| Հայց. | *զծառայ իմ* | *զծառայս իմ* |
| Սեռ. | *ծառայի իմոյ* | *ծառայից իմոց* |
| Տր. | *ծառայի իմում* | *ծառայից իմոց* |
| Բաց. | *ի ծառայէ իմմէ* | *ի ծառայից իմոց* |
| Գործ. | *ծառայիւ իմով* | *ծառայիւք իմովք* |



## 27.

Այր տանուտէր, առն տանուտեառն *տանուտէր մարդու*
Ընդ առաւօտս *առաւօտեայ դէմ*
Ի վարձու ունել *վարձել, բռնել*
Յայգի իւր *իր այգու համար*
Արկանել վարձ *վարձ կտրել, խօսել*
Աւուրն դահեկան *օրը մի դահեկան*
Զերրորդ ժամու, զվեց ժամու, զինն ժամու *երրորդ ժամու մօտերը...*
Մետասաներորդ *տասնմէկերորդ*
Աստ *այստեղ*
Զօրս ցերեկ *այսօր ցերեկով*
Արժան է *պէտք է, արժէ*
Դաւառապետ *տան վերակացու, գործակալ*
Որք զմետասաներորդ ժամուն *նրանք որ ժամի տասնումէկին մօտերն էին գնացել.*
Մեն մի *ամէն մէկը մի, մի մի*
Տանուտէր, տանուտեառն, զտանու- տեառնէն *տանուտէրից*
Հասարակորդ *հաւասար.* հասարակորդ առնել *հաւասարեցնել*
Բառնամ, բարձի, բա՛րձ *վերցնել, կրել, քաշել*
Մի, միոյ, միում *մէկին*
Սակ արկանել *սակարկել, գին կտրել*
Եթէ *եթէ, թէ որ. մի՞թէ*
Եթէ չիցէ՞ ինձ իշխանութիւն *միթէ իշխանութիւն չունի՞մ*
Իմ, իմք, իմս, *իմոնքս, ունեցած- ներս.* յիմս առնել *իմ ունե- ցածներիս անել*

---

Եմ, գոմ, կամ *բայերի 3-րդ դէմքերը մի սեռական (երբեմն և տրա- կան) հոլովի հետ նշանակում են՝ ունենալ. է իմ եղբայր=ես եղբայր ու- նիմ. են իմ եղբարք=ես եղբայրներ ունիմ: Առն միոջ էին երկու որդիք՝ Աղուեսուց որջք գոն և թռչնոց երկնից բոյնք, այլ որդւոյ մարդոյ ոչ գոյ... Եթէ չիցէ՞ ինձ իշխանութիւն:*

## 28.

Զի՞ *ի՞նչ.* Զի՛ սքանչելի է *ի՞նչպէս սքանչելի է*
Համբառնամ, համբարձի, համբարձ *բարձրացնել.* համբառնամ, համ- բարձայ, համբարձի՛ր *բարձրանալ*
Ստնդիեաց *ծծկեր՝ կաթնակեր*
Եղծանեմ, եղծի, ե՛ղծ *աւերել, փչացնել*
Այց առնել *այցելել. նայել, խնամք տանել,* այց ինչ առնել *որևէ խնամք տանել*
Ձեռակերտ *ձեռքի գործ*
Ի ներքոյ *տակ, ներքոյ*
Խաչն, խաչին, խաչինք *ոչխար ու այծ*
Արջառ *տաւար*
Երէ *որսի կենդանի*

## 29.

Մահիճք *անկողին*
Դնէր ի մահիճս *դրած էր անկողնի մէջ*
Թողեալ լիցին *ներուած լինի՛ն, ներուի՛ն*
Ճանաչեմ, ծանեայ, ծանի՛ր *ճանաչել, իմանալ*
Խորհուրդ *խորհուրդ, մտածմունք*
Խորհել *մտածել*
Դիւրին *հեշտ*
Եթէ *թէ*
Տուիչ *տուող*
Մաքսաւորութիւն *մաքս առնելը, մաքսատուն*
Կարող *ոյժ ունեցող, առողջ*
Ուսանեմ, ուսայ, ուսի՛ր *սովորել*
Մարթ է *կարելի է*
Առագաստ *վարագոյր, հարսանքի առագաստ.* մանկունք առագաստի *հարսանքի տղաներ*
Սուգ առնել *սուգ անել.* միթէ մա՞րթ ինչ իցէ մանկանց առագաստի սուգ առնել *միթէ կարելի՞ բան է, որ առագաստի մանուկները սուգ անեն*
Բառնամ, բարձի, բա՛րձ *վերցնել, վերացնել.* բառնամ, բարձայ բարձի՛ր *վերացուել, վերանալ*
Կապերտ *շորի կտոր*
Անթափ *(կտորի) խուր չթափուած. նոր*
Ձորձ *հագուստ, հանդերձ*
Լրութիւն *ամբողջութիւն*
Եւս չար *աւելի վատ*
Արկանել գինի *գինի ածել*
Երկոքին *երկուսն էլ*
Արդ եւս *հիմա, այժմ, արդէն*
Փողար *փող փչող*
Ծաղր առնել *ծաղրել*
Ի բաց գնալ *դէն գնալ, դուրս գնալ*
Ելանել ի բաց *դուրս ելնել*
Ընդ այն *այն տեղով, դէպը*
Զհետ լինել *ետեւից ընկնել*
Մերձենալ յաչս *կպչել աչքերին*
Ըստ հաւատոց ձերոց *ձեր հաւատքի պէս, համեմատ*
Համբաւել *հռչակել*
Աշխատիմ *աշխատել, յոգնել*
Որոց ոչ իցէ հովիւ *որոնք հովիւ չունէին*

## 30.

Երկոտասանեքին, զերկոտասանեսին *տասներկու*
Գեօղ *գիւղ*
Երկոտասան *տասներկու*
Լսեմ, լուայ, լո՛ւր. լուայց, լուիցես... *լսել*
Թօթափել *թափ տալ*
Դիւրագոյն *աւելի հեշտ*
Խորագէտ *խելացի, խելօք*
Տամ, տացի *կը տրուի*
Մատնել ի մահ *մահուան մատնել*
Եղիջիք ատեցեալք *կատուիք*
Ամենեքեան, ամենեցուն, յամենեցունց *ամենքից*
Ի սպառ *մինչև վերջ*
Շատ *բաւական*
Բէեղզեբուղ *սատանայ, սադայէլ*
Ունկն, ունկան, ունկունք *ականջ*



Դանգ *հռոմէական փոքրիկ դրամ, հաւասար ութ լումայի (մօտ ութ հարիւրերորդ ֆրանկ)*
Հեր *մազ*
Խոստովանեմ *խոստովանել. ճանաչել, ընդունել*
Նա, նորա, նմա, ի նմանէ, զնմանէ *նրա մասին*
Քակել *քանդել, բաժանել*
Ուստր *տղայ, որդի*
Առաքիչ *ուղարկող*
Ցուրտ *սառը*

---

Զ. Նախդիրը *բացառականի հետ նշանակում է* մասին, *գործիականի հետ՝* շուրջ: *Խոստովանեցից և ես զնմանէ: Ասիցեն զամենայն բան չար զձէնջ: Ելեալ զերրորդ ժամու, զվեց ժամու: Զիւրեւ:*

*Մի քանի բառեր առնում են* զ *նախդրով բացառական խնդիր՝ կալաւ զձեռանէ նորա: Գոհանում զքէն:*

## 31.

Ուղղել *շինել, հաստատել*
Փայլատակն *փայլակ, կայծակ*
Դրօշեալ *կուռք, արձան*

---

Հոլովել՝ *սա, դա, նա:*

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ուղ. | *նա* | *նոքա* |
| Հայց. | *զնա* | *զնոսա* |
| Սեռ. | *նորա* | *նոցա* |
| Տր. | *նմա* | *նոցա* |
| Բաց. | *ի նմանէ* | *ի նոցանէ* |
| Գործ. | *նովաւ* | *նոքօք* |

## 32.

Ուստի՞ *ո՞րտեղից*
Քաղել ի բաց *քաղել դէն ձգել*
Խլել ի բաց *դուրս հանել, պոկել*
Առ ի յայրել *այրելու համար*

Հոլովել՝ *սոյն, գոյն, նոյն, ամենքին,*

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ուղ. | *նոյն* | *նոքին* |
| Հայց. | *զնոյն* | *զնոսին* |
| Սեռ. | *նորին* | *նոցին, նոցուն(ց)* |
| Տր. | *նմին* | *նոցին, (նոցուն(ց)* |
| Բաց. | *ի նմին* | *ի նոցունց* |
| Գործ. | *նովին* | *նոքումբք* |

| | |
|---|---|
| Ուղ. | *ամենքին, ամենքեան* |
| Հայց. | *զամենսին, զամենսեան* |
| Սեռ. Տր. | *ամենեցուն(ց)* |
| Բաց. | *յամենեցունց* |
| Գործ. | *ամենեքումբք* |

***Ա****յսպէս միայն յոգնակի հոլովւում են նաև՝ երկոքին (երկոքեան), երեքին (երեքեան), չորեքին (չորեքեան) և այլն։*

## 33.

Տար *օտար, հեռու*
Կար *կարողութիւն*
Չոգաւ *գնաց*
Շահիլ *վաստակել, օգուտ անել*
Համարս առնել *հաշիւ առնել. հաշիւ տեսնել*
Ազնի՛ւ *շատ լաւ, շատ ազնիւ, կեցցե՛ս*
Ետուր զիս *տուիր ինձ*
Որոյ զերկուս քանքարն առեալ էր *նա որ երկու քանքարն էր առել*
Կացուցանեմ, կացուցի, կացո՛ *կարգել*
Հնձես՝ զոր ոչ սերմանեցեր *հնձում ես այն, ինչ որ չսերմանեցիր*
Ժողովես՝ ուստի ոչ սփռեցեր *ժողովում ես այնտեղից, ուր չցանեցիր*
Քոյդ զքեզ *քոնդ քեզ*
Պարտ էր քեզ արկանել *դու պէտք է ձգէիր*
Սեղանաւոր *դրամափոխ*
Տոկոսիք *տոկոսներ*
Պահանջէի *պահանջում էի, կը պահանջէի*
Կրճել *կրճատել*

---



Ա. Հոլովել՝ *այս, այդ, այն։*

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ուղ. | *այն* | *այնոքիկ* |
| Հայց. | *զայն* | *զայնոսիկ* |
| Սեռ. | *այնր, այնորիկ* | *այնց, այնոցիկ* |
| Տր. | *այնմ, այնմիկ* | *այնց, այնոցիկ* |
| Բաց. | *յայնմ, յայնմանէ* | *յայնցանէ* |
| Գործ. | *այնու, այնուիկ* | *այնոքիւք* |

Բ. Հոլովել՝ *ոմն, ոք։*

| | Եզակի | | Յոգնակի |
|---|---|---|---|
| Ուղ. | *ոք* | *ոմն* | *ոմանք* |
| Հայց. | *զոք* | *զոմն* | *զոմանս* |
| Սեռ. | *ուրուք* | *ուրումն* | *ոմանց* |
| Տր. | *ումեք* | *ումեմն* | *ոմանց* |
| Բաց. | *յումեքէ* | *յումեմնէ* | *յոմանց* |
| Գործ. | — | *ոմամբ* | *ոմամբք* |

## 34.

Ակն ունիմ, ակն կալայ, ակն կա՛լ *սպասել*
Երանեալ *երանելի*
Աւետարանիլ *աւետարան քարոզուել*
Շարժուն *շարժուող.* եղէգն շարժուն ի հողմոյ *քամուց շարժուող եղէգն*
Հանդերձ փափկութեան *փափուկ հանդերձ*
Ահա՛ւանիկ *ահա՛*
Որ *որոնք որ*
Բռնադատել *բռնութեամբ նեղել, առնել*
Բուռն, բռան, բռունք *ուժեղ, կըտրիճ*
Մանկտի *մանուկներ*
Կարդալ *կանչել*
Կաքաւել *պար գալ*
Կոծիլ *լաց ու կոծ անել*
Զօրութիւն *հրաշք*
Եղեալ էին *եղած լինէին*
Վաղու եւս *վաղուց*
Արդեօք *իրօք, իսկապէս*
